digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

241
S-23
5034-ալի
1492-ԱԿ

ARMENIAN.

*Miscellaneous Series.*] [No. 12.

# SIXTEEN
# SHORT SERMONS.

BY A CLERGYMAN OF THE CHURCH OF ENGLAND.

# ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑ
# ԿԱՐՃԱՌՕՏ ՔԱՐՈԶՆԵՐ

Թարգմանութիւն

’ԻՂՈՒՂԻ

Յամի Տեառն 1833.

241
S-23

Վասն Ամերիկու՝ Հաւատոյ Տետրակների ժողովքին Տպեալ
’Ի Տպարանի Մկրտիչ Միսոնարաց

’ԻԿԱԼԿԱԹԱՅ

CALCUTTA: PRINTED AT THE BAPTIST MISSION PRESS, FOR THE AMERICAN RELIGIOUS TRACT SOCIETY.

1st ED.] *September*, 1839. [1000 *Copies*

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆԻՑ
digitised by A.R.A.R.@

# ԱՌԱՋԻՆ ՔԱՐՈԶ

Ի՞նչ օգուտ է մարդոյ՝ որ ամէն Աշխարհքըն ստանայ, և իրան անձին տուժ տայ: կամ թէ ի՞նչ գին կըտայ մարդ իրան անձըն փրկելոյ համար: Մատթ. ժզ. 26:

Էս շատ երևելի բանս քանի քիչ միտք է առնըվում Աշխարհքի մէջ. քանի՞ քիչ են նորանք՝ որ իրանց հոգոյ փրկութիւնըն իրենց կեանքի գըլխաւոր գործ են համարում: Դուք որ հիմիկ էս փոք(ր) գրքի խօսքերըն կարդումէք, և կամ լսումէք մի՞թէ մին ժամանակ մտքներդ առիք էն մեծ գործըն. [illegible] ձեր հոգոյ փրկութիւնըն. և հիմիկ մի թէ ինչպէս է՞ք վարվում, որ ստանաք և վայելէք նորան: Եթէ էսպէս անէք, ապա էս խօսքս, որ հիմիկ կարդալու էք, յայտնի ցոյց կըտայ ձեզ էն խորհուրդներըն և մտածմունքներըն որ ձեր սրտի մէջ տպաւորված են: Ինչպէս որ ինձանում մարմին կայ, էնպէս էլ հոգի կայ: Իմ հոգիս կապրի յաւիտեան, կամ ուրախութեան մէջ և կամ ողորմելութեան և խղճութեան մէջ: Նա կարող է անասելի մեծ ցաւեր քաշել և կամ ուրախութիւններ վայելել. քան թէ իմ մարմինս: || Ինչպէս որ Մաշտոցումն է

Եթէ յաւիտենական Աշխարհքին մտիկ տամ. քիչ բան է, եթէ էստեղ աղքատութեան մէջ ընկած լինիմ, կամ մեծութեան մէջ բարձրացած՝ էս քիչ տարիներիս ժամանակումն որ Աշխարհքի մէջ մնալու եմ. եթէ իմ մանկանցու ընկերներիցս փառաւորվիմ կամ անարգվիմ. եթէ իմ մարմինս շատ հիւանդ լինի, կամ առողջ, ցաւերով լցված, կամ հանգստութենով ուրախացած: Էս ամէնս շատ քիչ բան է: ինչու որ մահն հաստատ է և մօտաւոր: Շուտով իմ մեռած մարմնոյ վերայ կասվի ||. թէ հողդ թող դէպի հող դառնայ. և մոխիրդ դէպի մոխիր: Ապա թէ որ բոլոր Աշխարհքըս էլ իբր յատուկ ստացված ունենամ ինձ, ի՞նչ օգուտ կըկարենայ բերել ինձ համար իմ մահուան սահաթումն, կամ ի՞նչ մխիթարութիւն կըտայ ինձ: Բայց ամէնից շատ հարկաւոր քննութիւնն որ ես պէտք է անեմ, էս է՝ որ բոլոր մտքով հարցնեմ. թէ իմ հոգիս մինչև յաւիտեան ուրա՞խ կըլինի կամ ողորմելի, հրեշտակներին և կատարելութեան մէջ հասած ..ըեն ընկեր կըլինի Աստուծոյ Աթոռի չորս կողմումն. և կամ կըդատապարտվի, որ հոգոց հանելով և ատամներըն կըրճտելով և լաց լինելով դևերի հետ և դատապարտված հոգիների հետ, տանջվի դժոխքումն. որտեղ որ որդըն իւրեանց չի մեռնիլ և կրակն իւրեանց չի շնջվիլ, Եսա. 66. 24. Մարկ. 9. 45.

Ապա սրա համար իմ գլխաւոր գործս, և ցանկութիւնս և ջանքս միշտ հենց մէնակ էս պէտք է լինի, որ փախչիմ էն բարկութենիցն, որ գալու է, և մին հաստատ ժառանգութիւն գտնեմ ..երին հետ, որ լուսոյ միջումն են բնակվում: Ապա իրա՞ւի էսպէս է

2693-11
digitised by A.R.A.R.@

Ո՞ր Աշխարհք շատ աւելի է իմ մտքումս. էս հիմիկվանս, թէ նոր եկօղն. ո՞րին համար եմ շատ աւելի հոգս անում. Չէ՞ որ շատ անգամ զբաղմունքի մէջ եմ լինում, և հոգս անում. թէ ի՞նչ պիտի ուտեմ, կամ ի՞նչ պիտի խմեմ, կամ թէ ի՞նչ պիտի հագնեմ: Մատթ. 6. 31 : Բայց ե՞րբ ճշմարտութենով քննեցի. թէ ինչ պէտք է անել ինձ որ ապրիմ : Թէ որ իմ հոգոյ փրկութեան համար ջերմեռանդ փափակ ունենամ, և ճշմարտութենով հոգս չանեմ՝ ապա անսխալ կարող եմ գիտենալ՝ թէ իմ վիճակս չար է, և իմ հոգիս կորուստի մօտն է:

# ԵՐԿՐՈՐԴ ՔԱՐՈԶ

Ամէն ով որ մեղք է գործում, նա անօրէնութիւն էլ է անում. և հենց ինքն մեղքն անօրէնութիւն է: ա Յօհ. 3. 4:

Ո՞վ մեղաւոր մարդ՝ միթէ մին ժամանակ քննեցի՞ր, թէ մեղքն ի՞նչ է: Մի թէ մին ժամանակ պարապվեցա՞ր Աստուծոյ խօսքըն քննելոյ, որ կարենաս անսխալ իմանալ էս չար բանը որ ամէն չար բաների գլխաւորն է: Եթէ էն իսկի մին ժամանակ չըքննեցիր, ապա քո վիճակդ չար է, և անասելի չար: Դեռ շատ պէտք է վախենաս քո փրկութեան համար որ իսպառ չըկորցնես նորան:

Ապա սրտի մտօք մտիկ արա էս ասած խօսքերիս. և քո սիրտըդ բարձըրացրու դէպի Աստուած և ասա. Տէր Շնորհէ՛ր ինձ, որ քո ճշմարիտ լուսովդ հաստատ ճանաչեմ՝ թէ ի՞նչ է մեղքն և թէ ի՞նչ է նորա չարութիւնն: Ահա հիմիկ հենց մեղքն ինքն անօրէնութիւն է, և անօրէնութիւնն Օրէնք քանդելն է: Ապա որ Օրէնքի. Ամենասուրբ Աստուծոյ Օրէնքին : Ահա ո՞ր տեղ կարելի է էս Օրէնքըս գըտնել: Ահա սա էն Տասն Պատուիրանքներումն է գրված՝ որ Աստուած Մօսէսի ձեռովն տուաւ մեզ: Ապա քննէր քո անձըդ. միթէ ես մին ժամանակ կարդա՞ցի նորանց ահով լցված սըրտով և սարսափելի ձայնով, որ հարցնեմ իմ անձըս՝ թէ լինի՞ որ ես էլ Աստուծոյ Սուրբ Օրէնքի էս կամ էն Պատուիրանքըն քանդեցի: Մի թէ մին ժամանակ մտածե՞ցի՝ թէ կարելի՞ է խորհրդով էլ քանդել Օրէնքըս ինչպէս որ խօսքով կամ գործքով: Մի թէ մին ժամանակ միտք արի՞, թէ Օրէնքն հոգևոր է, և ներս է մտնում մինչև խորհուրդների մէջ, կամքի մէջ, և սրտի թաքուն փափակների մէջ. և թէ ամէն ծուռ խորհուրդ Օրէնքըն քանդումէ. և թէ ամէն գարշելի փափակ մեղք է. և թէ ամէն դատարկ բանի համար որ մարդիք կը խօսեն, պատասխան պիտի տան Դատաստանի օրումն, Մատթ. ժբ. 36, էն սարսափելի օրումն, երբ որ սրտերի քննօղն Աստուած մեր սրտի ծածուկ խորհուրդներըն կըդատէ: Վա՜յ ինձ. քանի՞ դատարկ մտածմունքներ անցկացան իմ մտքովս

digitised by A.R.A.R.@

և ես նորանցից ամենն մէկին համար իսկի ճշմարտապէս միտք չարի, թէ ես մեղք է: Յնն. Գ. 5. || Քանի՞ շատ դատարկ բաներ խօսեցի ես ամեն օր առանց հոգս անելոյ, թէ նորանց ամեն մէկին համար պիտի պատասխան տամ. Մատթ. ԺԲ. 36: Ե՞րբ բռնադատեցին ինձ էն չար մտածմունքներն, խօսքերն և գործքերն՝ որ սրտի խորութենիցն ցաւալի ձայնով աղաղակեմ. ով Աստուած ողորմիր ինձ մեղաւորիս: Եթէ Օրէնք քանդելն՝ մեղք լինի, այսինքն՝ եթէ ամեն պակասութիւն որ էն Օրէնքովն խնդրված կատարելութենիցն խորհրդով խօսքով և գործքով պակասված գտնվիմ. առաւել եթէ էն ամեն պակասութիւնն մեղք լինի, ինչպէս որ էն բան անելս, որ Օրէնքն արգելումէ. ապա քանի՞ բանի համար պիտի պատասխան տամ ես, որ լինի թէ նորանց համար իսկի մին ժամանակ միտք չարի: Եհ էս ամենիս վերայ շատ անգամ խոստովան էլայ, թէ մենք արինք էն՝ որ արժանի չէր մեզ անել, և թողինք էն՝ որ պէտք էր մեզ անել: Եհ իսկի առողջութիւն չըկայ մեզանում: Վայ ինձ, ինչու որ Աստուծոյն անարգեցի, մենակ պռօշներով խոստովան լինելով էն՝ որ իսկի չըհաւատացի և չիմացայ իմ սրտումս: Սրա համար ով Տէր հիմիկ զարթեցրու իմ խղճմտանքըս որ ճանաչեմ, և միտքս առնեմ. թէ մեղքն ինչ է: || Յնն. 8. 21. Մատ. 15. 19.

## ԵՐՐՈՐԴ ՔԱՐՈԶ

Ամենքն մեղանչեցին. և Աստուծոյ փառքիցն պակասվեցան:
Հռոմ. 3. 23:

Ամենքն մեղանչեցին. ուրեմն դու էլ՝ իմ սիրելի կարդացողս, և ես ինքըս էլ: Մեղանչեցինք, էն է՝ ԱՅ Օրէնքիցն դուրս եկինք, և նորան քանդեցինք. ինչու որ ոչ ով չըկայ արդար իսկի մինն էլ չէ. Հռոմ. 3, 10. ոչ ով չըկայ որ Աստուծոյ Օրէնքըն պահած լինի:

Մենք նորա բարոյական Օրէնքի ամեն Պատուիրանքներիցն դուրս եկինք և նորանց քանդեցինք, թէ գործքով, թէ խօսքով, կամ թէ չար ցանկութենով Էս յանդիմանութիւնս շատ ծանր է, բայց էս սաստիկ վճիռն ամեն կողմանէ ճշմարիտ է: Թող, ուրեմն մտօք քննենք էս բանըս, Աստուծոյն աղաչելով, որ մեր միտքըս լուսաւորէ:

Եկէք էն Տասն Պատուիրանքներըն ձեր ձեռներդ առէք, և կարդացէք †: Մենք առաջին Պատուիրանքըն քանդեցինք՝ ուրիշ բաներին աւելի յուսալով՝ և ուրիշ բաներըն աւելի սիրելով քան թէ Աստուծոյն: ինչու որ՝ գրված է. թէ սիրէր քո Տէր Աստուծոյն քո բոլոր սրտովդ. Մատթ. ԻԲ. 37: Բայց մենք սորանում պակասված ենք գտնվում: Երկրորդ Պատուիրանքն էն ձեւին է մտիկ տալիս՝ որ

† Էս Տետրակի վերջումն գտես Բացատրութիւն. 10. Պատգամացն.

digitised by A.R.A.R.@

Սրանով պէտք է Աստուծոյն պաշտել. չէ թէ միայն դրսի կեր-պարանքով և արարողութիւններով, բայց մանաւանդ հոգով և ճշմար-տութենով: Ապա վա՛յ մեզ. քանի պակասաւոր ենք եղել էն հարկաւոր մտադրութենիցն, էն ներսի խոնարհութենիցն, և հոգոյ էն ջերմեռան-դութենիցն, որ նորա պաշտօնն է խնդրում մեզանից: Աստուած նախանձոտ Աստուած է: Դուք ասումէք, թէ իսկի մին ժամանակ անիրաւի պէս անիծելով և սուտ երդում ուտելով չըմեղանչեցինք, և սրանով կարծումէք թէ Երրորդ Պատուիրանքըն պահած լինինք: Բայց ասացէ՛ք ինձ. մի թէ ձեր աղօթք անելոյ, կամ Սուրբ Գրքերըն կարդալոյ ժամանակումն իսկի չըթողիք Աստուծոյ սուրբ անունըն ձեր պռօշներումն անց կենալ առանց ահով իմանալոյ և միտք անելոյ՝ թէ ի՞նչ է էն որ անումէիք. կամ հենց էլ առանց միտք անելոյ էն անունըն որ պռօշներով յիշումէիք: Բայց Տէրն սուրբ և անմեղ չի համարիլ էն՝ որ նորա անունըն ոչինչ բաների վերայ է դնում: Ել. Ի. 7: Մի թէ բոլոր կիրակի օրըն միշտ գործ ածեցի՞ք հենց էնպէսի բարեպաշտ վարժութիւններով և գործքերով, որ Չորրորդ Պատուիրանքն հրամայումէ ||. և Աստուածպաշտութեան վարժութիւն-ներըն և գործքերըն էլ էնպիսի ջերմեռանդութենով կատարեցի՞ք, որ Օրէնքն իսկի մին բան չունենայ ձեզ մեղադրելոյ խորհրդով, կամ խօսքով, կամ թէ գործքով էլ: || Եսա. 58. 13. 14.

Ով մեղաւոր մարդ քո ձեռըդ դի՛ր քո բերանիդ վերայ և խոստովանի՛ր քո անձիդ համար, որ մեղաւոր է: Ապա մի թէ պէ՞տք է ինձ որ Երկրորդ տախտակի Պատուիրանքներըն էլ մին մին քննեմ և ձեր առաջիդ դնեմ: Մի թէ դու ընկերըդ քո անձիդ պէս սիրումե՞ս. մի թէ ամենն մարդկանց էնպէս արի՞ր. ինչպէս որ դու կամենումէիր որ նորանք անեն քեզ †: Մի թէ իսկի մին ժամանակ չըմեղանչեցիր քո ծնօղիդ անհնազանդ լինելով: Չես գիտում որ ամենն զօր բարկութիւնն մարդասպանութիւն է. Մատ. Ե. 22: և թէ ամենն պիղծ և գարշելի ցանկութիւնն շնութիւն է. Մատ. Ե. 28. և թէ ծածուկ նեգութիւնն և խաբէութիւնն, և քո կարողութեանպէս աղքատներին օգնութիւն տալոյ անհոգութիւնն, գողութիւն են. և թէ ամենն մտածմունք որ սիրոյ հակառակ է՝ իններորդ Պատուիրանքըն քանդումէ. և թէ ագահութեան ամենն փափակն և ցանկութիւնն Տասներորդ Պատուիրանքին դէմ մեղք է: Իրաւի մենք ամենեքս մեղանչեցինք անելով էն՝ որ Օրէնքն արգելումէ, և չանելով էն՝ որ Օրէնքն հրամայումէ: Ուրեմն ես ի՞նչ արի, և ի՞նչ չարի: Ամենեքն մեղանչեցին: Ուրեմն իմ վիճակս ինչ է. մեղանչա-կանութեան և ողորմելութեան վիճակ է: Ապա ինչո՞ւ համար չիմացայ էն մինչև հիմիկ: Նրա համար որ՝ մեղքն իմ աչքերըս կուրացուց, որ ճշմարտութեան լոյսըն չըտեսնեմ: Բ.Պետ. 1. 9. † Մատ. 7. 12.

digitised by A.R.A.R.@

## ՉՈՐՐՈՐԴ ՔԱՐՈԶ

Անիծեա՛լ լինի ամեն մարդ՝ որ Օրէնքի Գրքի միջի ամեն գրված-ներումն չըկենայ՝ որ ամենըն անէ: Գաղատ. 3. 10.

Ինչ՞ է նշանակում էս ահաւոր բառս՝ անիծեալ: Աստուծոյ անէծքն նորա արդար բարկութեան և սրբութեան յայտնութիւնն է՝ մեղքերի և մեղաւորների դէմ: Ո՞վ է կարող նորա առաջին մնալ, թէ որ նա բարկանայ: Սաղմ. ՀԶ. 8: Բայց ո՞վ է անիծված. ամեն մարդ՝ թէ տղայ թէ ծեր, թէ մեծատուն թէ աղքատ, թէ գիտուն թէ տգէտ, որ իրան կեանքի բոլոր ճանապարներումն և ամեն բանի մէջ չըպահպանվի որ առանց դադարելոյ, սխալմունքի կամ պակասութեան, ամեն բաներով, թէ խորհրդով, թէ խօսքով, և թէ գործքով, կատարելապէս էն անէ, որ Օրէնքն խնդրումէ. և էլ իրան անձըն խսպառ ազատ պահէ էն բաներիցն՝ որ Օրէնքն դատապարտումէ. ուրեմն որ կարճ ասեմ էն ամեն մէկն է անիծված, որ չըկենայ Օրէնքի Գրքի միջի ամեն գրվածներումն որ ամենըն անէ: Եւ՛ Օրէնքըն չէ՛ թէ դրսի արարողութեան պէս, բայց իրան հոգևոր և շատ գերազանց նշանակութեան և մեկնութեան պէս իմանալ պէտք է: Եւ էլ միտքդ բեր՝ թէ մին էլ ասվումէ. Յակ. Բ. 10. թէ ով որ ամեն Օրէնքըն պահէ, և մին բանում մեղանչէ ամեն Օրէնքին էլաւ պարտական: Բ. Օրի. 27. 26. Գաղ. 3. 10.

Ապա հիմիկ լաւ քննի՛ր՝ թէ էլա՞ւ մին օր, կամ մին ժամ (սահաթ,) կամ թէ սահաթի մին րոպէ՝ որ նորանում քո միտքդ սիրտդ խօսքդ և գործքդ էնպէս գտվաւ, ինչպէս որ Օրէնքն խնդրումէ: Բայց անէծքն էն Օրէնքովն հաստատված է ամեն մարդոյ վերայ որ ամեն Օրէնքըն չըպահէ, ամեն մեղաց համար, որ լինի, չէ թէ մէնակ ամբարշտութեան մարդասպանութեան, շնութեան, և ուրիշ էսպէսի խիստ ծանր մեղքերի համար, բայց էլ ամեն մեղաւոր մտածմունքի համար, և ամեն սահաթի և րոպէի համար, որ նորանում պակասված գավար քո Տէր Աստուծոյն քո բոլոր սրտովդ, և բոլոր անձնովդ սիրելոյն: Ուրեմն Օրէնքն քանի՞ շատ անէծք է հաստատել քեզ և ինձ հակառակ: Նա տարուց տարի Աստուծոյ բարկութիւնըն մեզ դէմ յայտնումէ. որովհետև մենք տարուց տարի Աստուծոյ դէմ մեղանչումենք: Այս. չէ՞ որ էսպէս է: Կա՞րող ես Սուրբ Գրքերիցն մին վկայութիւն բերել և հաստատել, թէ սուտ լինի:

Ապա ի՞նչ, Միթէ ամեն մէկ մեղաւոր անիծվա՞ծ է ամեն մէկ մեղքի համար. և ես էլ մի թէ իմ ամեն կեանքումս անպակաս մեղք արի՞: Ճշմարիտ է, որ իսկի Աստուծոյն անկեղծ սիրով չեմ սիրել, և թէ իսկի նորա սիրովն խղճմտանք չեմ արել հենց մին խորհրդոյ, խօսքի, կամ գործոյ համար, և թէ իսկի մին պարտաւորութիւն չեմ կատարել, կամ մին մեղքից հրաժարվէլ էն միայն չիտակ պատճառի համար՝ որ է Աստուծոյ սէրն:

digitised by A.R.A.R.@

Մինթէ իմ կեանքս մինակ չարութեան անդադար ճանապարհ էլա՞ւ : Այս ուրեմն իմ վիճակս կորուսի և դատապարտութեան վիճակ է : Ո՜վ քանի՞ ահաւոր է էս խօսքս : Որքա՞ն յայտնի վկայում էս ամենս՝ որ իմ միտքս խաւարված է և իմ սիրտս պնդացած : Որքան մեծ է իմ կուրութիւնս և խստութիւնս՝ որ կարող եմ հենց մին սահաթ էլ Աստուծոյ անէծքի տակն մնալ և անհոգութենով հանգիստ լինել . որ էլ կարող եմ առանց դողալոյ և վախենալոյ քուն մանել և վեր կենալ . որովհետև Աստուծոյ անէծքն մեղաւորին դժոխքի մէջ պիտի քցէ :

# ՀԻՆԳԵՐՈՐԴ ՔԱՐՈԶ

Մեղքի թոշակն (ռոճիկն) մահ է : Հռոմ. Զ. 23 ,

Մեղքն անօրէնութիւն է . և անօրէնութիւնն Օրէնք քանդելն է . ինչու որ քանդում է հենց էն Օրէնքն որ Աստուած մարդկանց համար իբր ամեն իրաւունքի յաւիտենական կանոն հաստատեց . էս է Աստուծոյ բարոյական Օրէնքն : Մեղքն է՝ ամեն մեղքն և ամեն մէկ մեղքն , որ նորանց համար Աստուծոյ բանն էստեղ խօսում է : Մահն , ինչ որ էդ բառդ էլ նշանակէ , արդար և հաստատ հատուցումն է ամեն մէկ մեղքի համար , որ խորհրդով , խօսքով և կամ գործքով կատարվեցաւ : Բայց մահն ի՞նչ է . Մարմնոյ մահն էն է՝ որ մարմինն հոգուցն բաժանվումէ : Դու մեղաւոր ես , և հենց հիմիկ մեղքի էս պտուղներն տեսնումես էն ամեն ցաւերումն տանջանքներումն և հիւանդութիւններումն , որ քո մարմինդ տկարացնումեն և դէպի գերեզմանն են քաշում : Իրաւի որ հենց հիմիկ ամեն օր մեռնումես դու : || Ծնն. Գ. 19.

Մարմնոյ մահն , կամ նորա հոգուց բաժանվիլն՝ յետ կդարձնէ նորան դէպի հողն որ տեղից որ առած է || : Բայց մահն էստեղ մեր բնաբանի մէջն մին շատ աւելի սաստիկ բան է նշանակում , այսինքն հոգոյ մահըն : Ե՞ւ էն ի՞նչ է : Նա էնքան աւելի ահաւոր է քան թէ մարմնոյ մահըն , որքան որ հոգին շատ աւելի պատուական է քան թէ մարմինն : Պատճառն որ՝ հոգոյ մահն էնէ , որ հոգին Աստուածանից , ինչպէս իրան կեանքի և երանութեան աղբիւրիցն բաժանվումէ : Ե՞ւ սրանից անդադար մեղք են դուրս գալիս , որովհետև ԱՅ շնորհքն հեռացաւ . և ապա առաջ կամ հետոյ էնպէսի նեղութիւն է ծագում հոգոյ մէջն որ ինքըն իրան չարչարէ . ինչու որ՝ Աստուծոյ լոյսն և սէրն և բարեկամութիւնն , և նորանից կախված ամեն շնորհքներն կորան նորա սրտումն : Ապա առանց Աստուծոյ Հոգին մեռած է . այսինքն խաւարն և մեղքն անդադար տանջումէն նորան . պատճառն որ՝ Աստուած հոգոյ համար կեանքի հատուկ աղբիւրն է , ինչպէս որ հոգին մարմնոյ կեանքին պատճառ է : Ուրեմն հոգևոր մահըն , կամ հոգոյ

digitised by A.R.A.R.@

մահըն ինչպէս իմանաս՝ որ ոչ թէ խղճմտանքի կամ ներսի ըղ գոյութեան կորուստ է, բայց Աստուծոյ պատկերի և սիրոյ կորուստ է: Պատաճառն որ՝ Նորա սէրն կեանք է, և Նորա բարկութիւնն մահ. Սաղմ. իթ. 6: Ապա իմ սիրելի մեղաւոր ընկեր՝ եթէ դու Աստուծոյ էն շնորհքումն որ մեղաւորն Նորա մօտ է դարձնում, դեռ կենդանացած չես, ապա էս է քո վիճակդ: Դու մեռած ես յանցանքներով և մեղքերով և եթէ Աստուծոյ Հոգոյ ձեռովն որ պիտի տրվվի քեզ, չըկենդանանաս, քո էս կեանքիցս փոխվելուցն առաջ. ապա պէտք է որ յաւիտեան մնաս էս ողորմելի վիճակիս մէջն:

Ինչու որ՝ մահն որ Նորա համար էս տեղ մեր բնաբանն խօսումէ, էն յաւիտենական կեանքին դէմ դրած է, որ Նորան Պօղոսն յետևող խօսքի մէջըն յիշումէ: Վա՜յ մեզ. ինչու որ՝ էս հոգևոր մահս անասելի խեղճութիւն է բերում մեզ վերայ հենց հիմիկ էս կեանքումս, ինչպէս որ ամէն մարդոյ փորձառնիլն վկայումէ եթէ ճշմարիտըն խոստովանի: Ապա ի՞նչ պիտի լինի Նոր գալու Աշխարհքումն, որ յաւիտենական է: Վա՜յ. ո՞վ է կարող էն յայտնել: Մենք կարդումենք թէ Քրիստոսն խօսումէ որդնի համար՝ որ իսկի մին ժամանակ չի մեռնիլ և իսկի չի դադարիլ խղճմտանքն կծելուց և տանջելուց. և կրակի համար՝ որ իսկի մին ժամանակ չի ընջվիլ և դադարիլ մարմինըն հոգոյն հետ. դժոխքումն տապկանելուց. և էլ լաց լինելոյ և սուգ անելոյ, և ատամներըն կրճտացնելոյ համար. և էս ամէնս յաւիտեան մնալու է: Մար. 9.45.

Ապա թէ որ էնպէս լինի՝ մի թէ պատիժն անհաւասար չէ յանցանքին: Թո՛ղ Աստուած արդար լինի, և ամէն մարդ սուտ: Նա ասումէ՝ թէ պաշարն, այսինքն մեղքերի արդար հատուցումն՝ մահ է: Աստուծոյ արդարութիւնն ստիպումէ իրան. որ իրան սպառնալիքըն և վախ տալըն հենց էնպէս էլ կատարէ, ինչպէս որ իրան խօսմունքըն: Ով փախէք էն բարկութենիցն որ գալու է: Պատճառն որ՝ մեզանից ո՞վ է որ կարենայ տաժացնող կրակի մէջ բնակվիլ կամ թէ մեզանից ո՞վ է որ կարենայ յաւիտենական բոցի միջումն բնակվիլ:

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ՔԱՐՈԶ

Ես ի՞նչ պէտք է անեմ որ ապրիմ: Գործ. ժԶ. 30:

Էս է զարթնացած մեղաւոր մարդոյ ցաւալի հարցմունքն և քննութիւնն: Զարթնացած մեղաւոր ասելով ես էն մարդըն եմ իմանում, որ գիտենայ՝ թէ մեղքն ի՞նչ է. որ էլ ցաւալի սրտով իմանայ՝ թէ ինքն մեղաւոր է. և թէ Նրա համար Աստուծոյ անէծքի տակն է, և դժոխքի կրակին մէջ քցվելոյ արժան է: Ապա հիմիկ հարցնումեմ մի թէ դու զարթնացած մեղաւոր ե՞ս: Վա՜յ որ՝ ամէն մարդիք առհասարակ միշտ քնով վէր ընկած են. և ոչ ով չըկայ որ իրան մօտաւոր կորուստըն իմանայ. և էնպէս կենումեն մնումեն մինչև որ Աստուծոյ

digitised by A.R.A.R.@

խօսքովն և Սուրբ Հոգւոյ ձեռովն վեր շարժվին իրանց մարմնական Թմրութենիցն: Նորանք իրանց անձներին համար միշտ աղաղակումեն՝ խաղաղութիւն խաղաղութիւն, երբ որ ենտեղ խաղաղութիւն չըկայ. պատճառն որ՝ Աստուած հաստատ է ասել. Եսայ. խը. 21: Թէ ամբարիշտներին խաղաղութիւն չըկայ: Նորանք իրանց օրերըն անց են կացնում. օրէցօր մահըն, դատաստանըն և յաւիտենական Աշխարհքըն հեռու քցելով իրանց մտքիցն, որ իսկի չըյիշեն նորանց. և իսկի մին ժամանակ էլ Աստուածաշունչ Գիրքերըն չեն կարդում ջերմեռանդ ցանկութենով ||, որ իմանան, Թէ իրանց վիճակն ի՞նչ է. և իսկի մին ժամանակ իրանց սրտի խորութենիցն էլ չեն աղաղակում. Թէ Աստուած ողորմիր ինձ մեղաւորիս: Եմ Թէ և լինի, որ էս խօսքըս ասեն՝ մէնակ պռօշներով են ասում և ոչ Թէ մտքով և սրտով: Ապա եԹէ դու քո կեանքըդ դեռ էնպէս վարես որ իսկի ջիրմեռանդ Աղօթք չանես դէպի Աստուած, ողորմութիւն գտնելոյ համար. եԹէ դեռ օրէցօր անհոգ ես Աղօթք անելոյ համար. ապա կատարելապէս ցոյց ես տալիս, Թէ Աստուծոյ կեանքիցն օտարացած ես՝ էն տգիտութենովն որ քեզ անում է, ինչպէս նա որ իրան օրերըն մեծ անառակութեան մէջ է անց կացնում Բայց երբ որ Աստուած կամենայ մարդոյ սրտի մէջ ճշմարտութեան լոյսըն հաստատել, և նորա խղճմըտանքըն զարԹնացնել, էն ժամանակն վեր է կենում իբր քնի Թմրութենիցն: Ապա նա տեսնումէ էն, որ առաջուց չիմացաւ. այսինքն Թէ՝ քանի չար և դառն է Աստուծոյ դէմ մեղանչելըն: Նա ճշմարտութեան խօսքի մէջըն կարդումէ՝ Թէ ամբարիշտն պիտի գնայ դժոխքն և էն ամմէն հեԹանոսներըն որ Աստուծոյն մոռանումեն. Սաղմ. Թ. 18: և էն կարդալովն սկսումէ դողալ: Էն ժամանակումն խոստովանվումէ, Թէ իրաւի որ ես Աստուծոյն մոռացել եմ, և նորա դէմ մեղանչել եմ. և հաստատ իմանալով Թէ մեղքի պաշարըն մահ է, ցաւալի սրտով հարցնումէ՝ Թէ ինչպէս պիտի պրծնեմ ես դըժոխքի դատապարտութենիցն:

Էնպէսի մարդն բոլոր սրտի ցանկութենով հարցնումէ և քննումէ՝ Թէ ես ի՞նչ պէտք է անեմ որ ապրիմ: Պատճառն որ՝ նա իմանումէ Թէ շատ վախ կայ, որ լինի Թէ իրան համար խպառ փրկութիւն չըգտնէ մինչև յաւիտեան: Աշխարհքն իրան ամմէն բարիքներովն շահերովն և փառքովն անհամ և անախորժ է դառնում նորան. ինչու որ՝ չի կարող նորա ցաւով լցված սրտին հանգիստ տալ և ո՛չ նորա խոցոտված խղճմըտանքըն բժշկել. Ապա սկսումէ Աղօթք անել. և նորա Աղօթքն հիմիկ նորա սրտի յատուկ խօսքն է. և չէ՛ Թէ էնպէսի դըսի արարողութիւն և ծառայութիւն, ինչպէս որ առաջուց էր: Իրան կորուստըն իմանալով նա վռազ է անում, որ շնորհաց Աթոռին մօտ գայ. և Աստուծոյ խօսքըն կարդումէ ինչպէս յաւիտենական

|| Էս Տէրունի վերջումն ջեռ Աւետարանի հարցուցէ համար.

digitised by A.R.A.R.@

ճշմարտութեան վճիռըն. և էլ ինչպէս կարդումք՝ ինչպէս թէ գրվածքի ամէն մէկ խօսքերն իրան անձին համար լինին գրված:

Ով մեղաւոր մարդ, մինթէ դու մին ժամանակ էս հարցաքննութիւններըս ա՞րիր. թէ ես ի՞նչ պէտք է անեմ որ ապրիմ:

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ՔԱՐՈԶ

Ապաշխարեցէք՝ և Աւետարանին հաւատացէք: Մարկ. ա. 15.

Սորանք են մեր օրհնված փրկչի ճշմարիտ խօսքերըն, որ նա ողորմելի և պատժապարտ մեղաւորներին համար ասել է՝ ինչպէս որ ես և դու ենք: Բայց ապաշխարութիւնն ի՞նչ է: Քրիստոսի Հոգու ներգործութիւնըն է մարդոյ սրտի մէջն որ նորանով մեղքերի չարութիւնըն և պատժապարտութիւնըն էնպէսի ներսի լուսով է ցոյց տալիս՝ մինչև որ մարդն զարմանայ՝ թէ ինքն ի՞նչպէս դեռ դժոխքի ներքևն չէ ընկել. և մեղքերի դէմ էնպէսի թշնամութիւն է շինում, որ մարդըն շարժայնումէ էն խապառ թողելոյ. և մեղաց պատիժների համար էնպէսի վախ՝ որ մարդը յօժար է անում, որ բոլոր սրտով կամենայ և ցանկանայ փրկվիլ և էն էլ միայն և խապառ էն գործքերի և չարչարանքների ձեռովն՝ որ Յիսուս Քրիստոս կրած հոգիներին համար արել է և քաշել: Ապաշխարող մեղաւորն հաստատ ճանաչումէ և իմանում. թէ մեղքն պէտք է պատժվի, և թէ նա ինքն էնպէսի մեղաւոր լինելով՝ Աստուծոյ բարկութեան տակն է. թէ մեղքըն պէտք է կամ պատժվի և կամ թողվի. և թէ ինքն կարող չէ իրան շատ փոքր յանցանքի և մեղքի փոխն էլ վճարել. և ապա թէ սրա համար իրան ամբողջ փրկութիւնն խապառ պէտք է շնորհաց ձեռովն լինել: Էսպէս խոնարհված մարդն պատրաստված է, որ ուրախութենով ընդունի էն փրկչի համար էլած աւետիքներըն որ եկաւ կորած մեղաւորներն խնդրելոյ և ապրեցնելոյ համար. Մատթ. ժը. 11. ինչպէս որ Քի Աւետարանն է: Նա է ուրախացնող աւետիքն կորած և պատժապարտ Աշխարհքի համար: Նորա գլխաւոր վարդապետութիւնն և քարոզութիւնն էս է՝ թէ Յիսուս Քրիստոս Աշխարհք եկաւ որ մեղաւորներըն ապրեցնէ, ա. Տիմ. ա. 15: Նա մեռաւ որ նորանց մեղքերի համար վճարէ, և որովհետև էն մին Քրիստոսն Աստուած և Մարդ է բոլորովին կարող է կենդանի անել նորանց որ նորանով մօտենումեն Աստուծոյ մօտ: Եբր. է. 25: Պատճառն որ Նորա Արիւնն անչափ պատուական էր. ինչու որ՝ Մարդ էլած Աստուծոյ Արիւնըն էր. Գործ. ի. 28: և հէնց Նրա համար թափվեցաւ, որ մեղքերըն վեր առնէ: Նրահամար ո՞վ ողորմելի մեղաւոր մարդ որ ինքդ քո անձըն ես դատապարտում թէ և քո մեղքերդ ծովով աւելի լինին քան թէ քո գլխի մազն, կամ քան թէ ծովու եզրի (ղրաղի) աւազն, և թէ և մեծ և ծանրացած

digitised by A.R.A.R.@

լինին. և ինչպէս կարմիր որդան (ղըրմըզ) բայց էնպէս էլ յոյս կայ. ինչու որ Յիսուսի Քրիստոսի Արիւնն սրբում է ամէն մեղքերից այնինքն՝ էնքան զօրութիւն ունի որ ամէն մեղքից կարէնայ սրբել: ա. Յօհ. ա. 7: Բայց էս փրկութեանս ես ի՞նչպէս պիտի մասնակից լինիմ, կամ էն մխիթարութիւնը որ սրտանում է ի՞նչպէս պիտի ստանամ: Հաւատա Աւետարանին և յոյսդ դիր էն խօսքերի վերայ, որ Աստուծոյ բանն Յիսուսի Քրիստոսի համար, Նորա յօժարութեան և զօրութեան համար ասում է. որ կամենում է՝ և հենց էլ կարող է մեղաւորներըն փրկել: Բայց կարելի՞ է որ հենց ես էլ համարձակ հաւատամ թէ Յիսուս Քրիստոս Աշխարհք եկաւ որ էնպէսի անպիտան և ողորմելի մարդ ապրեցնէ՝ ինչպէս որ ես եմ: Հա՛ կարելի է՝ ինչու որ՝ էս է Աստուծոյ Պատուիրանքն, որ դուք հաւատաք Նորա Որդւոյ Յիսուսի Քրիստոսի Անունին. ա. Յօհ. 3. 23: Ապա ուրեմն կարելի չէ որ համարձակութիւն կամ լրբութիւն համարվի էն բան անելը՝ որ Աստուած հրամայել է. և Աստուածանից էն խնդրելը որ ինքն Իրան խօսքովն խոստացել է տալ մեզ: 1. Յօհ. 5. 14.

---

## ՈՒԹՆԵՐՈՐԴ ՔԱՐՈԶ

Ճշմարիտ է էս խօսքս՝ և ամէն կողմանէ արժանի ընդունելոյ որ Յիսուս Քրիստոս Աշխարհք եկաւ մեղաւորներըն փրկելոյ որ Նորանց գլխաւորն ես եմ: ա. Տիմ. ա. 15: || 1. Տիմ. 3. 16.

Ահա էս է բոլոր Աւետարանի գլխաւոր խօսքն և Վարդապետութիւնն: Յիսուս Քրիստոս Աստուած է. Նա ստեղծեց Աշխարհքըն և էն ամէնըն որ Նորանում է. ինչու որ՝ ամէն բան Նորանով և Նորա համար հաստատվեցաւ. Տես. Յօհ. ա. 3: Կողոս. ա. 16: Բայց մենք Նորա ստեղծվածներս Նորա Օրէնքըն քանդեցինք, և Նորանից ապստամբվեցանք: Նրա համար արդարութեան Օրէնքին պէս Նա կարող էր մեզ դըժոխքի մէջ քցել էն լճի (կէօլի) մէջ որ կրակով և ծըծմբով (քիւքիւրթով) այրվում է: Բայց որքան զարմանալի է Նորա սէրըն: Աստուած մարմնոյ մէջն երևեցաւ, և Աշխարհքի մէջ ծնվաւ ||: Ի՞նչու համար. մեղաւորներըն ապրեցնելոյ համար: Ըհ՜ ինչպէս ապրեցրուց Նորանց. խաչի վերայ Նորանց համար մեռնելով, և Նորանց մեղքերըն փայտին վերայ իրան մարմնովն վեր առնելով. և հենց իրան Արիւնովն Նորանց իրանց մեղքերիցն լուանալով:

Ապա ես մի թէ մին ժամանակ Աստուծոյ էս զարմանալի սէրս միտքըս առի՞: Ես մեղաւոր եմ, և մեղքի մէջ ծնված. և Նրա համար յաւիտենական պատժի տակն քցված: Բայց Յիսուս Քրիստոս Աշխարհք եկաւ որ մեղաւորներըն ապրեցնէ. հենց էնպիսիներըն՝ ինչպէս որ ես ինքս եմ: Մի թէ մին ժամանակ բոլոր սրտով աղաչեցի՞ Նորան՝

digitised by A.R.A.R.@

որ ինձ ապրեցնէ: Մի թէ հաւատո՞ւմեմ, թէ ես ողորմելի մեղաւոր եմ: Մի թէ էն միտքս եմ առնում և լաց եմ լինո՞ւմ նրա համար: Ի՞նչ մի թէ հաստատ իմանումեմ, թէ պէտք է որ մինչև յաւիտեան դատապարտված լինիմ, թէ որ Քրիստոս չփրկէ ինձ: Վա՜յ քանի շատ մարդիք կան՝ որ իսկի չեն մօտենում Քրիստոսի մօտ որ փրկէ նորանց: Քանի՞ շատ մարդիք խպառ անհոգ և անփոյթ են էն փրկութեան համար որ Յիսուս Քրիստոս մեղաւորներին համար պատրաստել է: Բայց մի թէ ես ինքս էս միտքս առի՞: Մի թէ իմ ամէն յոյս հաստատվա՞ծ է էս ճշմարիտ խօսքիս վերայ՝ թէ Յիսուս Քրիստոս Աշխարհք եկաւ որ մեղաւորներըն փրկէ: Օ՜հ քանի՞ սիրտ տուող խօսք է էս: Ուղորդ որ ես մեղաւոր եմ, և մեղաւորների գլխաւորն, բայց ինձ համար էլ կարելի է որ էն մեղքիցն փրկվիմ որ ես գործել եմ. և էն դժոխքիցն ազատվիմ որ նորան ես արժանի եմ էլել. միայն թէ սրտի զղջութենով իմ չարութիւնըս ճանաչեմ, և հաւատքով մտիկ տամ Յիսուս Քրիստոսին և նորա վերայ իմ յոյսըս դընեմ: Օ՜հ երանի թէ Սուրբ Հոգին զօրացնէ ինձ որ մտիկ տամ Յիսուսին: Վա՜յ ինձ ի՞նչ պիտի անէի ես աղքատ անպիտան և ողորմելի մեղաւորս, եթէ Յիսուս չըկար որ փրկէ ինձ: Քանի՞ ուրախութենով և խնդութենով պէտք է ինձ էսպէսի ուրախացնող աւետիքներըս ընդունել իրաւի որ էս խօսքս ամէն կողմանէ արժանի է ընդունվելոյ. և հէնց ամէնին վերայ էլ պարտաւորութիւն կայ որ ընդունեն նորան, որովհետև ամէնքն մեղանչեցին, և փրկութեան կարօտ էլան. և ամէնքն էլ որ իրանց կորուսըն իմանումեն, կարող են գալ նորա մօտ՝ որ կարող է նորանց փրկել: Ո՜վ Տէր՝ Սուրբ Հոգի զօրացրու ինձ էնպէս հաւատալ. որ իմ հոգիս էն հաւատքի ձեռովն փրկվի:

## ԻՆՆԵՐՈՐԴ ՔԱՐՈԶ

Նա որ ինձ մօտ է գալիս՝ ես դուրս չեմ հանիլ նորան
Յօհ. 6. 37:

Օ՜հ քանի՞ սաստիկ սիրով ցաւակից և ողորմած է կորած մեղաւորների սիրելի բարեկամն: Որքան ինքն հոգացող է, որ ամէն արգելմունք և խափանմունք դէն քցէ էն քննող հոգոյ ճանապարհից որ յօժար էլաւ Աւետարանական պայմանին պէս փրկվիլ, էս է շնորհքով՝ հաւատքի ձեռովն. Եփես. Բ. 8: Քանի՞ մարդասիրութենով ցոյց է տալ էսպէսների բնութիւնըն և ներսի միտքըն և շարժմունքներըն՝ որ իսկի մինն յետ չըքաշվի վախով և իսկի չը յուսահատվի. և Աստուածային ողորմութեան ամէն քաղցրութենովն հէնց ինքն կանչումէ նորանց որ իրան մօտ գան. Լսեցէք նորա յատուկ խօսքերըն որ ասումէ. Մատթ. ժա. 28: Թէ ինձ մօտ եկէք ամէն վաստակվածներ և

digitised by A.R.A.R.@

բեռնաւորներ՝ և ես հանգիստ կտամ ձեզ։ Ուրեմն հարցնումեմ. մի թէ դուք ճշմարտապէս ծանրացած և վաստակվածէք մեղքի ծառայութենիցն, և սատանայի և Աշխարհքի գերութենիցն։ Մի թէ դուք ճշմարտապէս տրտմած էք մեղաց ծանր բեռնովն ձեր խղճմտանքներումն, և դատապարտութեան վախովն ձեր սրտերումն։ Այս մարդասէր փրկիչն կանգնած է և սպասումէ որ ձեզ իրան գիրկն ընդունի՝ և այս էս են Նորա քաղցր խօսքերն որ Նորա բերանիցն են դուրս գալիս թէ ինձ մօտ եկէք, և ես հանգիստ կտամ ձեզ։ հաւատարիմ է Նա՝ որ խոստացաւ էն. Եբր. Ժ. 23, և կարող չէ խաբել ձեզ։ Նա չի փոխում էն բանըն՝ որ իրան՝ պռօշներովն դուրս եկաւ։ Սաղմ. Ճը. 35։ Ուրեմն Նորա փարձըն առէք. և Նորա մօտ եկէք։ Նա կարող և կամեցող է փրկելու համար. էլ ինչո՞ւ համար էք երկմտում։

Բայց դու ասումես՝ թէ մեղաւոր եմ ես. ապա յայտնի լինի քեզ՝ որ Յիսուս Քրիստոս ամենակարող փրկիչ է։ Դու էլ աւելի հաստատումես թէ շատ ժամանակ է որ ես համարձակ ապստամբւած Նորանից խպառ մեղքին և սատանային ծառայէցի էս Աշխարհքումս. և թէ շատ տարի է որ ես կատաղած լրբութենովը Նորա առաջին մեղանչէցի։ Բայց թէ և էսպէս լինի՝ էլ դու դեռ Աստուծոյ ողորմութեան սահմանիցն դուրս չես։ էլ քո վիճակդ էնքան յուսահատ չէ՝ որ էն մեծ բժշկի իմաստութիւնն և զօրութիւնն չկարենայ բժշկել քեզ։ Բայց լինի որ էլ աւելի ասես՝ թէ ես մեղաւորեմ, չէ՞ թէ հասարակ ճանապարհներին պէս, բայց մեղաւորների գլխաւորն։ Ապա էս փրկութեան խօսքերս հէնց քեզ վերայ է ուղարկվել։ Պատճառն որ Յիսուսի Արիւնն Աստուծոյ Արիւն է։ Գործ. Ի. 28։ և Նորա համար ամենայն մեղքից սրբումէ. Ա. Յօհ. Ա. 7. Նորա արդարութիւնն Աստուծոյ արդարութիւն է. Հռօմ. Գ. 22։ և Նորա համար բաւական է շատ ամբարիշտն էլ արդարացնելու։ Ուրեմն չը երկմտես. և չը յուսահատվիս. ինչու որ՝ քո փրկիչն՝ քո ողորմելի հոգոյ սիրողն էնպէս է ասում. Նա որ ինձ մօտ է գալիս, ես դուրս չեմ հանիլ Նորան. և Նորա առաջին իսկի ջոկութիւն չկայ. ինչու որ՝ Նա չի ուզում. որ մինն կորչի։ բայց որ ամենքն ապաշխարութիւն գան։ Բ. Պետ. Գ. 9։ Բայց կասես դու, միթէ պէտք չէ՞ ինձ, որ առաջ իմ սիրտըս շիտակացնեմ, և իմ կեանքըս դէպի լաւն փոխեմ, և ապա համարձակվիմ Նորա մօտ գալ։ Ապա եթէ դու մտիկ տաս և ուշանաս մինչև որ էս փոփոխութիւնըս քո անձիդ կարողութենովն կատարես, իրաւի է որ վերջն քո մեղաց մէջն կըմեռնիս. ինչու որ՝ դու ինքդ իսկի չես կարող քո սիրտըդ շիտակ անել. և քո կեանքըդ դէպի լաւն փոխել։ Պէտք է որ Քս̃ ինքն քո տեղակ (փոխանակ) անէ էս, Նա ինքն ճշմարտութենով կանէ քեզ համար, երբ որ Նորա խաչին մօտ կըգաս՝ քո մեղքերըն

digitised by A.R.A.R.@

խոստովանելով, և միայն Նորա Արիւնին վերայ քո ամմէն յոյսըն դընելով որ Նորան իբր քո մեղաց ճշմարիտ և կատարեալ քաւութիւն հաւատքով ընդունիս: Ապա պէտք է քեզ որ Նորա մօտ գաս հէնց էնպէս, ինչպէս որ ես. այսինքն ինչպէս ողորմելի և խեղճ մեղաւոր, որ Նորա Արիւնովն լուացվիս, և Նրա արդարութենովն իբր նոր շորով զարդարվիս, Նորա Հոգովն սրբվիս և ապա պատրաստ լինիս Նորա փառացն մասնակից լինելոյ: Էլ ի՞նչու ես երկմտում ընդունել էն որ Նա էնպէս յօժար է տալ քեզ, և էն էլ ձրի և առանց արծաթի, և առանց մին գին տալոյ: Եսայ. ծե. 1: այսինքն Յ:ի Նորա մեղաց Թողութիւնըն սրբութիւնն և Երկնքի Արքայութիւնըն: Պատճառն որ Նորա յատուկ գործն էն է որ մեղաւորներըն ընդունի. Ղուկ. ժե. 2: որ փրկէ նորանց: Եւ՛ սրա համար յայտնի ասաց. Թէ Նա որ ինձ մօտ է գալիս՝ ով որ լինի, կամ ինչպէս որ լինի, ես իսկի դուրս չեմ հանիլ նորան: Յօհ. 6.37.

---

## ՏԱՍՆԵՐՈՐԴ ՔԱՐՈԶ

Մենք որ հաւատքովն արդարացած ենք, Աստուծոյ հետ խաղաղութիւն ունենանք մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովն: Հռոմ. Ե. 1:

Տէրն ասումէ ամբարիշտներին խաղաղութիւն չը՛կայ: Եսայ. խը. 21: Պատճառն որ էն մեղաւորն որ դեռ մեղաց թողութիւն չի ստացել չի կարող Աստուծոյ հետ խաղաղութիւն ունենալ:

Քանի ժամանակ որ նորա խըղճմտանքն դեռ թմրացած է, կարելի է որ նա անհոգ և անվախ լինի: Բայց երբ որ նորա աչքերն կըբացվի, և նորա սիրտն կըսկսէ իմանալ իրան կորուստըն, էն ժամանակն շուտով կըճանաչէ՝ թէ ինքն ողորմելի է, մինչև որ հէնց Աստուած ինքն խաղաղութիւն հասցնէ և շնորհէ նորա մեղքով դատապարտված հոգուն: Արդարանալն էն է որ մեղաց թողութիւն ենք ստանում և Աստուծոյ առաջին ընդունելի ենք լինում: Բայց մեղաց թողութիւնըն և Աստուծոյ առաջին ընդունելի լինիլն իսկի մին բանով չենք կարող ստանալ բայց մէնակ Յիսուս Քրիստոսին հաւատալովն՝ որ Նա Իրան պատուական Արիւնովն մեր մեղքերըն քաւեց: Ապա երբ որ շնորհք տըվվի ինձ որ հաւատամ. թէ Յիսուս Քրիստոս իմ մեղքերըս վեր առաւ, էլ իսկի մին բան չըկայ որ կարենայ իմ խըղճմտանքըս խռովցնել: ինչու որ՝ էն ժամանակն խաղաղութիւն ունիմ Աստուծոյ հետ: Զարթնացած մարդոյ խռովութիւնն իրան մեղքով դատապարտված խղճմտանքիցն, և նորա մեղաց ծանր բեռնիցն է դուրս գալիս՝

Ուրեմն երբ որ ողորմելի և վախով բռնված մեղաւորն տեղեակ լինի՝ թէ Քրիստոս հէնց էնպէսիներին համար մեռաւ, ինչպէս որ ինքն է: և թէ Քրիստոս Աստուած է որ կարող է մեղաւորների

digitised by A.R.A.R.@

գլխաւորըն էլ փրկել. և թէ Նորա Աշխարհք գալըն յատուկ պատճառն հենց էս էլաւ. և թէ՝ Նա ինքն ասաց. Նա որ ինձ մօտ է գալիս՝ ես դուրս չեմ հանիլ նորան: Յօհ. Զ. 37. ասումեմ՝ երբ որ ողորմելի մեղաւորն էս ամմէնս իմանայ և հաւատայ, ապա նա խաղաղութիւն ունի Աստուծոյ հետ. և էն ժամանակն կարող է Աստուծոյն իրան Հայր կանչել, կարող է ամմէն բանի համար Աստուծոյ վերայ իրան յոյսըն դնել. կարող է շատ ուրախութենով մահի համար էլ մտածել, և Աստուծոյ էն փառաց յուսովն ուրախանալ: Ով մեղաւոր մարդ-աստ մի թէ դու էսպէսի երանելի վիճակումն ես հաստատված գիտումե՞ս որ քեզ փրկութիւն չըկայ եթէ դու Քրիստոսի հետ մասնակցութիւն չունենաս. և թէ իսկի մին բանով Աստուծոյ հետ խաղաղութիւն չըկայ, բայց միայն Քրիստոսի ձեռովն. և թէ քո կեանքդ իսպառ ողորմելի պէտք է լինի և քո մահդ յաւիտենական խղճութեան և տանջանաց սկիզըն պէտք է լինի, թէ որ քո մեղքերդ Քրիստոսովն չըթողվին քեզ:

Եթէ մտիկ տամ Քրիստոսին ինչպէս մին միակ փրկչին, և հենց իմ անձնիցս յուսահատ էլած փախչիմ նորա մօտ փրկվելոյ համար. ապա Աստուած ինձ վերայ էլ չի բարկանալ. և իմ մեղքերն որ շատ էին թողված կըլինին. և իմ անձս ընդունելի կըլինի նորան. և թէ որ պատահի ինձ որ հենց էս գիշերումս մեռնեմ, հաստատ յուսով Աստուծոյ մօտ կըգնամ, Ո՜հ քանի՜ երանելի է էս վիճակս՝ որ սրանում իսկի վախենալոյ պատճառ չըկայ ոչ կեանքիս մէջն և ոչ մահի մէջն: ինչու որ՝ նորանում Աստուած մեզ բարեկամ ունինք, Յիսուսըն փրկիչ, Սուրբ Հոգին մեզ մխիթարիչ, մահն մեզ բարեկամ, Երկինքն մեզ տուն, և յաւիտենական Աշխարհքըն խաղաղութենով և ուրախութենով լցված և մեր առաջին դրած: Ով մեղաւոր մարդ ասա մի թէ էս է քո հոգոյ վիճակն:

---

## ՏԱՍՆՈՒՄԻՆ ՔԱՐՈԶ

Ձեզ հաւատացեալներիդ համար պատուական քար է. ա. Պետ. բ. 7.

Առաքեալն էս տեղ ողորմելի կորած մեղաւորների սիրելի բարեկամ Յիսուսի Ք͞ի համար է խօսում. Նա որ մեզ վերայ ողորմած էլաւ՝ երբ որ մենք ինքս մեղքերին ծառայելով մեր անձներին վերայ անողորմ էլանք. որ էլ մեր աթիլ մեռաւ՝ երբ որ արդար Օրէնքի իրաւունքին պէս արժանի էինք դժոխքի մէջ քցվելոյ: ‖ Գաղ. 3. 13.

Ապա հիմիկ՝ թէ որ հաւատաք թէ ձեր մեղքերն կըդատապարտէին ձեզ, թէ որ Ք͞ս նորանց իրան անձնովն վէր չէր առել. և թէ պէտք էր ձեզ մինչև յաւիտեան անիծված լինիլ՝ թէ որ Քրիստոս ձեզ համար անէծք չէր էլել ‖. և թէ որ խոնարհութենով հաստատ գիտենանք ձեր սրտերումն՝ որ Նորա Արիւնովն թողութիւն էք

digitised by A.R.A.R.@

ստացել. և թէ որ կարող էք մտիկ տալ նորան ինչպէս թէ հէնց ձեզ վերայ կասէր էն՝ որ Աւետարանումն էն աղքատ մեղաւոր կնկանն ասաց. Ղուկ. Է. 48. 50. թէ գնա խաղաղութենով, քո մեղքերդ թողված են քեզ. ասումեմ. եթէ էս ամմէնս լինի ձեր սրտումդ՝ ապա Քրիստոս պատուական է ձեզ համար, և սիրումէք նորան աւելի քան թէ ամմէնըն: Սիրումէք նորա համար մտածել, նորանից լսել նորանից խօսիլ. և ինչ որ մինանգամ նա պատուիրել է՝ ցանկանումէք էն անել. և ինչ որ մին անգամ արգելեց՝ էն չանել կամաւ և ամմէն Աշխարհքըն էլ տանալ: Ապա դուք հիմիկ նոր ստեղծված էլաք. և կարող չէք էնպէս ապրիլ և վարվիլ, ինչպէս որ մին ժամանակով ապրումէիք. պատճառն որ նոր ծնվաք: Հինն անցկացաւ, և հիմիկ ամմէնն նոր էլաւ: Բ. Կորն. Ե. 17: ինչ բան որ մին ժամանակ ատումէիք, ինչպէս որ Աղօթքըն, օրհնաբանութիւներըն, քարոզ լսիլն և Աստուծոյ խօսքը || կարդալըն, հէնց էն հիմիկ սիրումէք, և ինչ որ մին ժամանակ սիրումէիք, ինչպէս ունայն խօսակցութիւներըն, ուչինչ և փուչ ուրախութիւններըն և ըղձազմունքներըն, հէնց էն հիմիկ ատումէք՝ և յետ էք դառնում նորանից, Հիմիկ կարող չէք քուն մտնել գիշերումն եթէ առաջ չըգոհանաք ձեր ողորմած Փրկչիցն էն ամմէն պարգևներին համար՝ որ ցերեկումն տուաւ ձեզ. և էլ եթէ առաջ չըյանձնէք ձեր անձներըդ նորա պահպանութեանն գիշերի պատահմունքներից Երեսիցն. և նորա ձեռքն տաք ձեր հոգիներդ որ՝ եթէ հէնց էս գիշերումս մեռնիք, նա իրան մօտ ընդունի ձեզ Իրան Արքայութեան մէջ: Եւ երբ որ առաւօտանց վեր կենաք՝ կարող չէք դուրս գալ Աշխարհքի մէջ ձեր օրինաւոր գործքերըն կատարելոյ համար, եթէ առաջ Աղօթքով չաղաչէք նորան՝ որ պահէ ձեզ Աշխարհքի թակարդներիցն †, և սատանայի փորձանքներիցն: Պատճառն որ՝ ձեր ցանկութիւնն և փափակն մենակ էն է՝ որ հաճոյ լինիք ձեր սիրելի Փրկչին: Եւ նրա համար ամմէն բաներից աւելի նորան տրտմացնելուցն վախենումէք: Նրա համար թէ ուտէք, և թէ խմէք, ցանկանումէք ամմէնըն Աստուծոյ փառաց համար անել: Ա. Կորն. Ժ. 31: || Բ Հէն և Նոր կտակարանն. † Յօհ. 17. 15.

---

## ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՔԱՐՈԶ

Հետևեցէք սրբութեանն, որ առանց նորան ոչ ով Տէրին չէ տեսնիլ: Եբր. ԺԲ. 14:

Աստուած Սուրբ Աստուած է Քրիստոս Սուրբ Փրկիչ է. Աստուծոյ Հոգին Սուրբ Հոգի է, Երկնքի Արքայութիւնն սուրբ տեղ է. Հրեշտակներըն սուրբ Հրեշտակներ են. և ԱՅ ամմէն փրկված ժողովուրդըն սուրբ ժողովուրդ են: Ուրեմն մի թէ ես էլ սուրբ

digitised by A.R.A.R.@

եմ. թէ որ չեմ առած Սուրբ Գիրքն ‖ վկայում է ինձ. որ Աստուծոյն չեմ տեսնիլ, և հենց էլ չեմ կարող տեսնիլ: Բայց ես սրբութիւնս ոչ թէ մենակ կեանքի դրսի բարեգործութիւն և բարեձևութիւն է. ինչու որ՝ դրսի բարեձևութիւնն էն տեղ էլ կարող է լինել՝ որտեղ որ ճշմարիտ սրբութիւն չըկայ. թէ և սրբութիւնն ինքն կարող չէ առանց բարեգործութեան լինիլ: Թէ որ սուրբ ես ոչ մենակ մեղքից ես յետ քաշվում, բայց էլ ճշմարտապէս նորան ատումես քո սրտումդ: Ամմեն մեղքերըն էլ ատումես ինչու որ էն ամմենըն որ Աստուծոյ կամքին հակառակ է, ատումես և զզվումես. մինչև որ էլ քո էն զըզվիլն ինքն քո անձին վերայ է դառնում. նրա համար որ դեռ միշտ մեղաւոր ցանկութիւն է մնում քեզանում: Պատճառն որ եթէ քո մեղքերըն քննումես ոչ մենակ քո կենդաղավարութենումն կըգտնես, բայց էլ քո սրտումդ. ինչու որ եթէ սուրբ մարդ ես, ապա քո խղճմտանքդ ցաւում է ոչ մենակ գործքերի և խօսքերի համար, բայց էլ քո մտածմունքների և ծածուկ ցանկութիւնների համար, որ մեղաւոր են: Սրբեմն ցան-կանումես որ ոչ մենակ Աշխարհքի աչքումն բարեձև երևես. բայց որ Աստուծոյն հաճոյ լինիս՝ որ քո միտքդ և սիրտդ Աստուծոյ կամքին և հաճոյութեան հաւասար լինի: Իրա՞ւի էսպէս է: Միտքդ-բեր՝ որ գրված է (թէ) առանց սրբութեան ոչ ով կարող չէ Տէրին տեսնել: Որ քիչ խօսքով ասեմ. սրբութիւնն Աստուծոյ սէրն է որ մեր սրտերի մէջ փռված է էն Սուրբ Հոգոյ ձեռովն՝ որ տըվված մեզ: ‖ Ջ Հին և Նոր Կտակարանն.

Հենց էս սէրս շարժում է մեզ որ ամմեն բանի մէջ սուրբ հնազանդու-թիւն ցոյց տանք և Աստուծոյ խօսքն ‖ էն կանոնն է լինում որ նո-րան պէս մեր կեանքի բոլոր ճանապարհներըն շինակենք և կառավարենք. և Աստուծոյ փառքն մեր առաջին դրած է ինչպէս որ մեր ամմեն կենդաղավարութեան և գործքերի պատճառն և վերջն: Բայց հիմիկ ոչ ով կարող չէ Երկնքի Արքայութիւնն մտնել մինչև որ սրբված լինի: Հաւատումե՞ս դու սրան. և քո սրտումդ Աղօթք ես անում, թէ Տէր ամենևին սրբէ՛ր ինձ, հոգոյ, մտքի, և մարմնոյ կողմանէ: Եթէ էսպէս է, ապա Տէրըն սկսել է իրան բարի գործն քո սրտումդ, և էն էլ կըկատարէ մինչև Յիսուսի Քրիստոսի օրն, որ դու սուրբ և անարատ կանգնիս նորա առաջին սիրով:

## ՏԱՍՆ ԵՒ ԵՐՈՐԴ ՔԱՐՈԶ

Մտիկ տանք էն երանելի յուսոյն՝ և մեծ Աստուծոյ և մեր փրկիչ Յիսուսի Քրիստոսի փառաւոր յայտնութեանն: Տիտոս. բ. 13.

Քրիստոսին հաւատացած մարդոյ երանելի և առանձնակա-

digitised by A.R.A.R.@

շնորհքն էս է, որ իրան Տէրի մին էլ գալըն և յայտնութեանն մտիկ տայ: Յիսուս խոստացաւ՝ թէ ինքն մին էլ կըգայ, և թէ շուտով կըգայ: Յայտ. Իբ. 20: Նա յայտնեց թէ իրան գալը յանկարծակի պիտի լինի ինչպէս գիշերվան գողի գալը: ա. Թեսս. Ե. 2: Ապա ճշմարիտ հաւատացեալն է էնպէսի մարդ՝ որ յուսով խնդրում է նորան, սպասում է նորան, և պատրաստ է ուրախութենով ընդունել նորան: Պատճառն որ՝ նա հաստատ գիտում է՝ որ Տէր Յիսուսն կըյայտնվի երկնքիցն իրան զօրութեան հրեշտակներումը կրակի բոցով վրէժ առնելու նորանցից որ Աստուծոյն չեն ճանաչում, և մեր Տէր Յիսուսի Քրիստոսի Աւետարանին չեն հնազանդվում, որ նորանք պատիժ կըքաշեն յաւիտենական կորուստըն Տէրի երեսիցն՝ և նորա փառաւոր զօրութենիցն: Բայց նրա վերայ էն էլ գիտում է թէ նորա մին էլ գալու պատճառն էն է, որ փառաւոր լինի իրան սրբերումն և զարմանալի իրան հաւատացեալներումն: Բ. Թեսս. Ա. Ց. 10. Նրա համար էլ նա մտիկ է տալիս էն երանելի յուսոյն: Պատճառն որ՝ Յիսուսի Քրիստոսի ձեռովն խաղաղութիւն ունի Աստուծոյ հետ. որովհետև էն մեղքն և յանցաւորութիւնն որ ամէն վախին պատճառ է, հեռու վէր կալված նրանից: Նա հաւատում է՝ թէ Դատաւորն իրան բարեկամ է, և նրա համար շատ ուրախ յուսով մտիկ է տալիս նորան: Նա իմանում է թէ իրան հիմիկվան վիճակն իրան յատուկ հանգիստ չէ. պատճառն որ՝ թէ և մեղաց դատապարտութիւնն նորա խղճմտանքիցն՝ և մեղաց սէրն և զօրութիւնն նորա սրտիցն՝ վէր է կալվել. բայց էնպէս էլ նա սրտմտութենով է իմանում. թէ դեռ մեղք կայ բնակված իրանում և նրա համար շատ ցանկանում է Քրիստոսի գալըն՝ որ էն իսպառ քանդէ և վէր առնէ: Էն յոյսն որ նա ունի՝ երանելի յոյս է. պատճառն որ էն բաներն որ նորանց յուսով մտիկ է տալիս. ամէնից պատուելի են, և միշտ կենալով և մնալով յաւիտենական և հաստատուն էն մարդոյ համար, որ հաւատքով և յուսով սպասում է նորանց: Մենք որ էս մարմնոյ և արիւնի ծածքի տակն ենք. Բ. Կորն. Ե. 4. մեղքով, նեղութենով, և փորձութենով ծանրացած գզվումենք բայց մեր Տէր Յիսուսի Քրիստոսի փառաւոր յայտնութեան ժամանակն Աստուած ամէն արտասունքն կըսրբէ մեր աչքերիցն, և էլ մահ չի լինիլ, ոչ սուգ, ոչ աղաղակ, ոչ ցաւ, ոչ աշխատանք էլ չի լինիլ. ինչու որ՝ առաջինն անցկացաւ:

---

## ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՔԱՐՈԶ

Թէ որ դուք որ չար էք՝ գիտումէք բարի պարգևներ տալ ձեր որդոցն, էլ որքան աւելի ձեր Երկնաւոր Հայրն բարի բաներ (Մաթէ

digitised by A.R.A.R.@

Հոգին) կտայ նորանց որ խնդրում են նորան: Ղուկ. ժա. 13.

Ես խօսքերով մեր մարդասէր Հայրն՝ որ Երկնքումն է թող է տալիս մեզ, որ մին շատ հարկաւոր բան հէնց մեր խղճմտանքովը իմանանք և հաստատենք:

Նա մեր միտքս է բերում էն շարժմունքներին և քաղցր սէրը որ երբ ծնողք որդոյ վերայ ունինք, որ մեր յոյսն հաստատէ, և զօրթնացնէ. և սրա համար ասում ||. ձեզանից ո՞վ է էն հայրն որ նորանից իրան որդին հաց խնդրէ, մի թէ քա՞ր կտայ նորան: Եթէ մին սոված երեխայ իրան հօր մօտ գայ՝ և ասէ նորան. ո՞վ հայր սովամահ կորչում եմ, հաց տուր ինձ որ ուտեմ. ապա հայրն թէ որ գազանից աւելի չար չլինի մի թէ քար կտայ իրան որդոյն՝ մի թէ կրծիծաղէ նորանով: Կամ թէ որ ձուկըն խնդրէ՝ մի թէ օ՞ձ կտայ նորան. կամ թէ որ ձու խնդրէ՝ մի թէ կա՞րիճ կտայ նորան, որ սպանէ նորան: Իրաւի որ չէ: Ուրեմն ո՞րքան աւելի էլ ձեր Երկնաւոր Հայրըն, որ նորա սէրն անչափ մեծ է իրան ողորմելի մեղաւոր որդոյ վերայ քան թէ ձերն, ձեր մարմնոյ ծնունդի վերայ՝ բարի բաներ ☧ Սուրբ Հոգին նորանց կտայ, որ խնդրում են նորան: Ես ողորմելի և անխելք մեղաւոր եմ: Ես կարօտութիւնն ունիմ իմ անձըս ճանաչելոյ՝ որ Աստուծոյ առաջին մեղաւոր եմ, և նորա արդար բարկութեան ներքևն վէր ընկած: Ես կարօտ եմ որ Յիսուս Քրիստոսին ճանաչեմ որ նա իմ փրկիչն է. պատճառն որ՝ նորան ճանաչելն յաւիտենական կեանք է †: Բայց էս փրկութիւն առնող գիտութիւնըս մէնակ Երկնաւոր և Աստուածային ուսմունքիցն կարօղ եմ ընտանալ: Աճ խոստացած տալ Իրան Սուրբ Հոգին, որ աղքատ և անխելք մեղաւորին, որ իրան անխելքութիւնըն իմանում առաջնորդէ էն ամմէն ճշմարտութեան մէջ որ հարկաւոր է նորան մխիթարելոյ և փրկելոյ համար: Ո՞վ Տէր թող քո Սուրբ Հոգին առաջնորդէ ինձ: || Քենոյն Գլուխ. 11. համարումն. † Յոհ. 17. 3.

Ես ողորմելի և անօգնական մեղաւոր եմ, և օրէցօր ճանաչում եմ՝ թէ կարօղութիւն չունիմ որ Աստուծոյ Որդոյն հաւատամ: Բայց էն հաւատքն որ Քրիստոսին ընդունում է ամմէնից աւելի հարկաւոր է փրկելոյ համար: Իմ խղճմտանքս՝ խռովված է իմ մեղքերի պատճառովը. ցանկանում եմ և կարօտ եմ որ ճանաչեմ նորան, և նորա յարութեան զօրութիւնըն: Բայց էնքան անկարելի է ինձ իմ անձիս զօրութեան ջանքովը հաւատալ, որքան որ անկարելի է ինձ մին Աշխարհք ստեղծել: Բայց Աստուած խոստացել է տալ Իրան Սուրբ Հոգին որ հաւատքըն ստեղծէ և գործէ ամմէն մէկ մեղաւորի սրտումն, որ խոնարհութեամբ աղաչում է իրան: Ո՞վ Տէր օգնութիւն արա ինձ, էնպէս հաւատալ, որ իմ խղճմտանքի խաղաղութիւնն, իմ հոգոյ փրկութիւնն, և քո Անուան յաւիտենական փառքն հաստատվի:

digitised by A.R.A.R.@

Աստուած իրան Սուրբ Հոգին նորանց է տալիս՝ որ խնդրումեն նորան: Մենք առանց նորա օգնականութեան ոչ ինչ չենք կարող անել․ բայց մինակ մեղանչել, որ հենց նորանով մեր անձները ապականումենք և կորչնումենք: Մի թէ իմանումես դու թէ կարօտ ես էն օգնականութեանն: Ե՞՞ մի թէ էն կարօտութիւնն և անչափ խեղճութիւնն տանումեն քեզ շնորհաց աթոռին մօտ որ Աստուծոյ ամենից հարուստ շնորհքըն ստանաս: Մի թէ դու էլ էնպէս խնդրումես՝ ինչպէս մին սոված երեխայ իրան հօրիցն հաց է խնդրում: Իրա՞ւն է որ մտքդ առիր քո անխելքութիւնդ՝ էնպէս որ բոլոր սրտով Սուրբ Հոգու Աստուածային ուսմունքն խնդրես․ և ճանաչեցիր քո անօգնական վիճակըդ՝ էնպէս որ Ա՟ծանից օգնականութիւն խնդրես:

Խնդրեցէք՝ և կըտրվի ձեզ՝ ման եկէք և կգտնէք, դուռն թակեցէք՝ և կբացվի ձեզ: Միտքդ բեր՝ որ Աստուած կարող չէ իրան խօսքըն քանդել: Եթէ խնդրեցիր՝ և չառիր, իմացիր որ ջերմեռանդութենով չխնդրեցիր ‖: Դու քո պակասութիւնըդ չես իմանում †: Ապա խնդրիր Աստուածանից որ տայ քեզ քո պակասութիւնըդ ճանաչել, և ապա նա կըցնէ նորանց․ աղաչիր նորան որ սովորցնէ քեզ Աղօթք անել․ Եկ նորա մօտ ինչպէս աղքատ, անխելք, անմիտ, և թուլացած մանուկ պատճառն որ՝ եթէ չդառնաք, և չըլինիք երեխաների նման, կարող չէք Երկնքի Արքայութիւնն մտնել: Մատթ․ ժը․ 3: Ապա ուրեմն ով Տէր շնորհիր մեզ էս Հոգին, որ երեխաների նման լինինք:‖ Յակ․ 4․ 3․ † Յայտ․ 3․ 17․

---

## ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՔԱՐՈԶ

Մարդկանց համար սահմանված է մին անգամ մեռնիլ․ և նորանից ետև Դատաստանն: Եբր․ Թ․ 27:

Ես և դու մահկանացու ստեղծվածներ ենք: Մենք տեսինք որ մեր բարեկամներիցն և ազգականներից շատերն գերեզմանի մէջ դրվան․ շատերն որ մեզ նման առողջ էին, և յոյս ունէին, որ էլ շատ ժամանակ մեզ հետ ապրին էս երևելի Աշխարհքումս․ մենք տեսինք որ մին քանիսն շատ օրվան հիւանդութենով և տկարութենով մաշվեցան և կեանքից վեր կալվան, և մին քանիսն յանկարծակի էս կեանքից կտրվեցան՝ առանց իմանալոյ իրանց մեռնելոյ սահաթըն: Մենակ Աստուած է գիտում, թէ մենք երբ պիտի նորանց ետևէն գնանք դէպի յաւիտենական Աշխարհքըն: Մենք մեր վերջին օրն իսկի չենք գիտում, պատճառն որ՝ մեր ժամանակներն Աստուծոյ ձեռքն են, և կարելի է որ հենց էս գիշերումս մեր մեռնելոյ սահաթն գայ: Բայց հաստատ էն ենք գիտում, թէ պէտք է որ մեռնելոյ սահաթն գայ․ և էն էլ հաստատ գիտումենք թէ նա շատ հեռու չէ մեզանից․ միայն թէ որքան մօտիկ

digitised by A.R.A.R.@

լինի՝ էն չենք գիտում: Բայց հիմիկ եթէ էս ամենն ճշմարիտ է. ապա ի՞նչ անմտութիւն և յիմարութիւն է. ճշմարիտ ապաշխարութեան հարկաւոր գործն հեռու քցել և օրէցօր նորա ուշացնել: Հաստատ չենք գիտում. եթէ առաւօտըն ենք տեսնելու: Սուրբն որովհետև ապաշխարութիւնն Աստուծոյ պարգև է, ապա մենք եթէ ծուլանանք էն էս օրումս խնդրել, և նորա զգուշացնող ձայնըն չըլսենք իրաւի որ նա կասէ մեզ ինչպէս որ Առակացումն ասել է. Առ. գլ. 24. 26. Նա. թէ որովհետև ես կանչումէի և չէիք լսում. իմ խօսքերըս երկարացընումէի. և ականջ չէիք դնում. բայց իմ խորհուրդներըս անարգումէիք. և իմ խրատներիս ականջ չէիք դնում: Ապա սրանից ետև ես կըծիծաղեմ ձեր կորստովն և ուրախ կըլինիմ՝ երբ որ նեղութիւն և պաշարմունքն կըգայ ձեզ վերայ: Եւ երբ որ յանկարծակի խռովութիւն կըհասնէ ձեզ և կործանմունքն մրրիկ (փոթորկի քամու) նմանութենով կըգայ. կամ երբ սաստկմունքն կըհասնէ ձեզ վերայ. կըլինի որ ինձ կանչէք. և ես չեմ լսիլ ձեզ ||. չարերըն կըխնդրեն ինձ՝ և չեն գտնիլ: ինչու որ՝ իմաստութիւնըն ատեցին, և Տէրի վախըն չըխնդրեցին: || Եսա. 1. 15: † Մատ. 12. 36. Հռո. 14. 10. 2. Կոր. 5. 10.

Մեռնելուցն ետև Դատաստանն է գալիս

Մենք ամենքս պէտք է Քրիստոսի Դատաստանի աթոռի առաջին կանգնինք † որ ամեն բանի համար պատասխան տանք, որ մարմնոյ մէջ գործեցինք, թէ բարի լինի և թէ չար: Ապա ո՞վ է որ պէտք է էնտեղ կանգնի. ամեն մէկն, թէ փոքրն թէ մեծն, թէ մեծատունն թէ աղքատըն, ինչու որ՝ իսկի ջոկութիւն կամ զանազանութիւն չըկայ: Ապա դու և ես պէտք է երևինք էնտեղ: Բայց ինչու համար: Հենց նրա համար որ ամենակարող Դատաւորի առաջին մեր ամեն ծածուկ խորհուրդներին համար և մեր ամեն ծածուկ գործքերին համար պատասխան տանք: Նա մին յիշատակի գիրք է պահում. որ նորանում ամեն չար խորհուրդներն, խօսքերն, և գործքերն գրված են, որ նորանցից ամեն մէկն առաջ կըբերվի մեզ յաւիտեան ամաչացընելոյ համար. եթէ Տէր Յիսուսի Քրիստոսի պատուական Արիւնովն էն ամենինցն սրբված չըլինիք: Կարդումենք Աճաշունչ Գրքումն. Յայտն. Զ. 16: թէ մին քանիսն էն օրումն կըկանչեն դէպի սարերն և զարերին կասեն թէ մեզ վերայ ընկէք, և ծածկեցէք մեզ աթոռի վերայ նստողի երեսիցն, և Գառի բարկութենիցն: Բայց Տէրն տայ որ քեզ և ինձ չըպատահի էսպէսի կորուստ և խեղճութիւն: Էս ահաւոր վիճակիցս պրծնելոյ համար, թող Տէրին խնդրենք դեռ քանի որ նա մօտիկ է: Թող ամբարիշտն իրան ճանապարհըն թողէ, և անօրէն մարդն իրան խորհուրդներն, և դառնայ Տէրին մօտ՝ և ողորմութիւն կըգտնէ. և մեր Աստուծոյ մօտ՝ որ շատ առատութենով նորա անօրէնութիւններըն կըթողէ: Ահա էս է շնորհաց և փրկութեան օրն: Բայց երբ որ Դատաստանի օրն կըգայ. ապա անկարելի

digitised by A.R.A.R.@

կըլինի որ ողորմութիւն խնդրես և գտնես: Եթէ մեռնիս առանց Քրիստոսի հետ մասնակցութիւն ստանալոյ․ Ապա լաւ էր քեզ որ իսկի ծնված չըլինէիր: Պատճառն որ՝ լաւ է իսկի Աշխարքի մէջ չըծնվիլ՝ քան թէ միշտ և միշտ և յաւիտեան տանջանք քաշել և ողորմելի լինել դժոխքի մէջն: Բայց հաստատ է որ հենց ամմէն մեղաւորների բաժինն էս պիտի լինի՝ որ իրանց մեղաց համար թողութիւն չըխնդրեցին, և չըզղջացան իրանց Տէր Աստուծոյ մօտ դառնալոյ համար: Պատճառն որ հենց Աստուած ասաց էն՝ նա որ կարօղ չէ սուտ ասել:

---

# ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՔԱՐՈԶ

Մենք ինչպէս կըպրծնինք թէ որ անհոգ լինինք էնպէսի մեծ փրկութեան համար: Եբր․ Բ․ 3.

Իրաւի որ մեծ է էս փրկութիւնս և ամմէն մոքից էլ մեծ․ ինչու որ էնպէսի փրկութիւն է՝ որ հենց Աստուծոյ իմաստութենովն և սիրովն հաստատված է իմ ողորմելի և կորած հոգոյս համար․ և էնպէսի փըրկութի որ հենց ԱՅ միածին Որդոյ մահովն պատրաստված է: Ո՞վ թէ քանի՛ մօտիկ էի ես դժոխքի ափին (ղըրաղին,) ո՞րքան խոր ընկած էի, քանի՞ շատ և մեծ էին իմ մեղքերն, որ էսպէսի մեծ փրկութիւն հարկաւոր էր ինձ համար: Ուրեմն քանի՞ ահաւոր բան է նորա համար անհոգ լինելն: Պատճառն որ՝ Աստուած էլ Ուրիշ Որդի չունի որ Աշխարհքի համար տայ: Ապա եթէ ծուլանաս, և անհոգ լինիս էս փրկութեանս համար․ եթէ ջանք չանես որ ճշմարտապէս ստանաս նորան, եթէ միտք չանես քո մեծ կորուստի համար, և փրկութեան համար որ քո առաջիդ կայ, էլ ասա՛․ ի՞նչպէս կարելի է քեզ որ ապրես․ անկարելի է: Պատճառն որ՝ դու էն մին մենակ փըրկիչն անարգումես․ որ նորանով ամմէնից մեծ մեղք ես գործում․ Աստուծոյ ողորմութիւնն որ Քրիստոսումն է դէն ես քցում, և Քրիստոսի պատուական Արիւնն ոտի տակ ես կոխ տալիս: Ուրեմն չես վախենում և դողդողում էդպէսի մտածմունքների համար: Հենց հաստատ հաւատա՛ թէ ամմէն մեղաւոր մարդ որ ծուլացած և անհոգ է և Աղօթքի համար ջերմեռանդ չէ, Աստուծոյ ողորմութեան և Քրիստոսի փրկութի դէմ անհնարին խիստ մեղանչումէ․ բայց իսկի ազատութիւն և մխիթարութիւն չըկայ նորանց համար, որ Քրիստոսին անարգումեն․ պատճառն որ՝ սրանից ետև մեղքերի համար էլ աւելի պատարագ չըկայ․ Նորանց կորուստն հաստատ է և մօտիկ է՝ և յաւիտենական և անտանելի կըլինի: Ապա միտքդ բեր թէ ահա էս է ընդունելի ժամանակ․ ահա էս է փրկութեան օրն: Բ․ Կորն․ Զ․ 2․ Եթէ առանց Քրիստոսի մեռնիս, անկարելի է քեզ որ Աստուծոյ երեսն համարձակութենով

digitised by A.R.A.R.@

և մխիթարութենով տեսնես: Բայց հաստատ մնացէ քեզ համար, որ ինչպէս Պտառաւորի բերանիցն էն ահաւոր վճիռն որ ասաց. Թէ հեռա-ցնացէք անիծվածներդ՝ յաւիտենական կրակն որ սատանային և նորա հրեշտակներին համար պատրաստված է: Մատթ. իե. 41: Քաւ-լիցի՝ Աստուած ոչ անէ: Նրա համար մին էլ աղաչումեմ քեզ ո՜վ իմ մեղաւոր ընկերս՝ էս գիրքս վերջացնելուց և խփելուց առաջ կանգնիր և միտք արա. և մանաւանդ ծունր դիր և երեսի վերայ ընկիր և դէպի Աստուած Աղօթք արա որ քո խղճմտանքըդ զարթնացնէ և Քրիստոսի գիտութիւնըն քեզ շընորհէ: Հենց իմ Աղաչանքս և Աղօթքս էլ վերանումեն դէպի Աստուած որ քո փրկութիւնդ հաստատվի: Էլ իմ առաջիս մին ուրիշ պատճառ չըկայ էս գիրքս քո ձեռքդ տալոյ համար, բայց մէնակ քո հոգոյ յաւիտենական փրկութիւնն: Ո՜վ իմ Աստուած տուր՝ որ էս փոքր գիրքս շատ պտուղ բերէ կար-դացողների հոգոյն համար. Թէ հիմիկ և Թէ յաւիտեան, շնորհիր քո օրհնութենովդ, որ սորանում գրած պատուական ճշմարտութիւններն անուշ հոտ լինեն կեանքից դէպի կեանք, և ոչ Թէ մահից դէպի մահ ||: Աղաչումեմ քեզ ո՜վ Տէր շնորհիր էս Յիսուսի Քրիստոսի համար. Ամէն. լինի: || 2. Կոր. 2. 16.

---

## Համառօտ Բացատրութիւն Տասն Պատգամացն

### Առաջին Պատգամ

Ես եմ Տէր Ած քո. որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց, ՚ի տանէ ծառայութեան. Մի՛ եղիցին քեզ այլ Ածք բաց յինէն. Ելից. 20.

Եւ առաջին հրամանն որ հաւատացելոց ընծի, այս Քննութիւնս ունի, որ Ած հաւէ զելի, Ես եմ քո Տէրն և Ածն. այլ ուրիշ Տէր և Ած մի՛ ունենար յինէ ՚ի զատ. և առաջ մինք պատուիրան հոս լինինք, որ յամ սրտէ սիրոյն զԱծ սիրենք, Մատթ. 22. 37. և զուրիշ Ած ծառայել ||, հոմ Ած ՚ի վեր չսիրենք. և Թէ սիրենք, յայն ժամանակն

---

|| ՙԾանիր զի Թէ պէտ Սրբուհի (Քրիստոսի) Աստուածածինն, ամ պատուոյ արժանի է զկնի Այ[1]. սակայն Աստուածպաշտական երկրպագութեամբ ոչէ պաշտելի. զի ստեղծուած գոլով, անստեղծի պաշտօն ոչ է տալի[2]. ապա Թէ ոչ՝ լինի կռապաշտութիւն՚: տես երես. 182. ՚ի Գիրք Մեկնութեան Աղօթից Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ. տպեալ ՚ի Կոստանդնուպոլիս Քաղաքի. Յամի Տեառն. 1745.

[1] Ինչպէս որ Աւետարանումն գրած է տես Ղուկաս. 1. 26—38.

[2] Եւ սուրբ (Քս) Աստուածածնի լոկ այնմ երկրպագանիմք՝ նկատմամբ Քնի իբր յորովայնի նորա բնակեցելոյ: և մինչ այժմ երկրպագանեմք,

digitised by A.R.A.R.@

ուրիշ Ած ունեցած չեն լինին. նոյն համար է՝ զի ագահներն որ զարծաթն Ած համարող չեն սիրեն, կռապաշտ չեն կոչուին. Կող. 3. 5. Վասն զի բոլոր յոյսն՝ միայն յԱծ պէտք լինի. զի նա միայն է մեր Տէրն, և ինչ որ պէտք է մեզի թէ ՀՈԳԵՒՈՐ, թէ ՄԱՐՄՆԱՒՈՐ նա չէ տար, և անկից պէտք յուսանք առնուլ †. և ով որ այսպէս չի յուսար յԱծ, այլ իր բոլոր յոյսն կամ ՚ի արծաթն չէ դնէ, կամ ՚ի իւր ուժն և ՚ի գօրութիւնն (և ՚ի գիտութիւնն) չէ դնէ՝ այնպէսին ուրիշ Տէր և Ած ունեցած չէ լինի. և այս Ածային հրամանիս հակառակ չէ գործէ: Դարձեալ. ուրիշ Ած մ՚ ունենալ անէլոյն՝ չէ հրամայէ որ չերթանք չաղաղուի. և պատմուներուն առաջել բաներուն անկախ չերթի, որ կարեն թէ այսօր չեմանինք որ մինէրն մեր ըռթերն (շորերն) չէ մեն. և այլ ուրիշ առող նման առաջելներ, որ կռապաշտութեան ժամանակէն մնացած ՍՈՒՏ բաներ են ‡: տես երես. 54. ՚ի Գիրք Քրիստոնէականի Վարդապետութեան. շարադրեցեալ եա եա Աղգասէր Մխիթար Վարդապետի Սեբաստացւոյ. տպեալ ՚ի Վենետիկ. 1732.

---

զայն ժամն նկատեմք մինչ Քն էր յորովայնի Նորա[3]: տես երես. 644. ՚ի Գիրք որ կոչի Վէմ—Հաւատոյ.

[3] Վերոյ գրութեամբն երևումն երկիրպագութիւնն դէպի Քն է. և ոչ թէ դէպի սուրբ կոյս Քն Ածածինն[4].

† Մատթ. 7. 8: 11. 28: Յոհ. 3. 16: Հռո. 5. 8—11.

[4] Պաշտեմ. եղի. եա. ել... մանաւորապէս առեալ նշանակէ պաշտօն մատուցանել ԱՅ իբրև ծայրագոյն բարւոյ, և Տեառն ամենեցուն՝ հանդերձ Ածային երկրպագութեամբ, սիրով, և ամ գործովք կրօնից, որ ոչ վայելէ ստեղծուածոց ումեք՝ որչափ և գերագոյն իցէ. Գաղ. 10. 16. Մատ. 4. 10: 2. Տիմ. 1. 3: Բայց հեթանոսք մոլորեալ գոլով՝ զայսպիսի պաշտօնս մատուցանէին արարածոց. վասն որոյ և կոչեցան կռապաշտք: Եզեկ. 20. 5: և. 23. 24: Իմաստ 11. 16. տես բառս 'Պաշտեմ' ՚ի Բառ. Գիրք Հայկազեան.

‡ Զոր օրինակ ասէ Աղգասէր Մխիթար Վարդապետն

'Զարմանալի իմն է այս. զի Յազգի մերում ՚ի տգիտութենէ հովուաց մուծեալ եղև յոմանս Գաւառս Հայաստանեայց Օրէնս այս. զի եթէ ՚ի փուռն, կամ ՚ի թոնիրս կենդանի մի անկեալ սատակիցի, քակեն զփուռն, և զթոնիրն, ապա թէ ոչ՝ պղծեցեալ համարին կերակուրք որք եփին անդ: եա եա Նա մեծագոյն զարմանքն է այս. զի առ ՚ի շահիլ զմի դահեկան՝ խօսին զտասն սուտ՝ որք մեղք, և ընդդէմ հրամանին Քնի. բայց վն ոչինչ և ունայն իրի՝ որ է ըստ աւանդութեանց մարդկանց, քակեն զհինգ հարիւր դահեկանի ջրհորն, զի մի զանց առնիցեն զաւանդութեամբն ծերոց': տես երես. 350. ՚ի Մեկնութիւն Աւետարանին Մատթէոսի Տպեալ ՚ի Վենետիկ Յամի Տն 1737: Մարկ. 7. 9: 1. Տիմոթէ. 4. 7.

digitised by A.R.A.R.@

Երրորդն է հրաժարումն 'ի ծամանաչաւորաց. վասն զի Թծ իմն անիրաւ-ութիւն առնէ ԱՅ որ համահաւասարէ նմա ինչ. որպէս ասէ Եսայի. 44. 7. *ո՞ւմ նմանեցուցիք զիս:* Յորժամ նըմանեցուցանեմք և համահաւասարեմք ինչ նմա, յորժամ զծամանաչաւորս և զպարապնանցուս ընդ ԱՅ համանգամայն սիրեմք. որէ անկարելի. զի ասէ Եսայի. 28. 20. *Նեղէ մահիճն, մինչ զի միւսն անկանի:* Քանզի այնպէս անձուկ է սիրտն առ ԱՃ, զի Թէ այլ ինչ սիրեսցէ, Թողցէ զԱՃ. վասն զի նա ոչ յանձն առնու վիճակակցելութե 'ի հոգին. որպէս և ոչ այլն 'ի նինն, այլ միայն նամ զնա ունել բովանդակին. քանզի ոչ նամ Թէ՝ այլ ինչ սիրել բայց 'ի նմանէ†: տես երես. 515. Յաղագս Տասն Պատուիրանաց. 'ի Գիրս Մուրութեանց. տպեալ 'ի Վենետիկ. 1773. † Մատ. 10.37: 22.37.39.

Երկրորդ Պատգամ:

Մի՛ արասցես քեզ կուռս ըստ ամ նմանութեան. որ ինչ Յերկինս 'ի վերէ, և որ ինչ Յերկիր 'ի խոնարհ. և որ ինչ 'ի ջուրս 'ի ներքոյ Երկրի:

Մի՛ երկիր պագցես նոցա. և մի՛ պաշտեսցես զնոսա. զի Ես եմ Տէր ԱՃ քո՝ ԱՃ նախանձոտ. որ հատուցանեմ զմեղս Հարանց Որդւոց՝ յերիս և 'ի չորս Ազգս ատելեաց իմոց: Եւ առնեմ զողորմութիւն 'ի հազար Ազգս սիրելեաց իմոց, և որք պահեն զհրամանս իմ:

Քանդակ՝ և կուռ՝ կամ իր դրօշեալ.
և կոփածոյ՝ կամ քար փոր եալ.
կամ Թէ պատկեր դեղով գունեալ.
չէ ցէ որպէս զԱստուած պաշտեալ.
Պաշտել՝ պատուել զԱՃ Օրհնեալ.
Նըմա միայն միշտ խոնարհ եալ.

Այս Յայտ Պատուիրանի հրամայէ ԱՃ, զի մի՛ երբեք կերպի իւիք ԱՃային պաշտօնն, անուանն ||, և պատիւն տիցէ, և հաստատիցէ 'ի վերայ նմանութեան իրիք. որպիսի և իցէ նմանութիւնն՝ կռեալ՝ կոփեալ՝ փորեալ՝

---

|| *Զօրօրինակ է Սուրբ Երրորդութեան պատկերն. որոյ միջի, երեք պատկերի մինն ասումեն Հայր ԱՅ պատկերնէ. և նոյն պատկերն Կաթո-լիկան Եկեղեցւոյ սեղանումն են դնում, և դէպի նորա խունկ են ծխում և դէպի նորա ծունրադրութիւն են անում, դեռինն համբու-րելով: այս չափ գրիչս, խոնարհաբար աղաչումէ զՎերակացուս Եկեղեցւոյ խափանել զայն սարսափելի մեղք գործելոյ սովորութիւնն. վասն զի* 'Քծ որէ Աստուածեալ և քահանայապետ խոստովանութեան մերոյ Եբր. 3. 1. Է ԳԼՈՒԽ և Պետ Եկեղեցւոյ, և կատարումն նորին. Եփես. 1. 22.' տես երես. 493. 'ի Գիրս Կոչեցեալ Վէմ—Հաւատոյ. Նաև իմաստն իրան Սուրբ Աւետարանիչն ասում Թէ 'ԶԱծ ոչ ոք եբեւ երբեք բայց միածինն Որդի որ 'ի ծոց Հօր՝ նա պատմեաց.' Յօհ. 1.18.

*Հարց. Հօր ԱՅ վասն էր ոչ տեսնեմք ոչ Քնի և Հոգոյն Սրբոյ:*

digitised by A.R.A.R.@

և նկարել առ 'ի պատուել՝ և երկրպագանել նմա իբրև ԱԾ || որպէս առնէին, և առնեն պաշտօնեայք Հեթանոսք: Անիծեալ է՝ ասացեալ Սողոմոն, ձեռագործըն. ինքն, և որ արարն զնա: (զի նա արար՝ և սա եղծանելի աստուած անուանեցաւ:) Իմաստ. 14. 8: Փախչելի է անպատմելի անիրաւութիւն, և ամբարշտութիւն՝ տալ արարածոց, կամ ձեռագործաց զԱրարչապետի պատիւն. զի է հոգևոր Պոռնկութիւն, և շնութիւն: տես. 2. Օրէ. 31. 16: Դատ. 2. 17: Իմաստ. 14. 12: Եսայ. 57. 3: Եզեկ. 16: Ովս. 2. 4: Յայտ. 18. 3. և այլքն: Վասն որոյ՝ էն անեղ պատուիրէ. Ես եմ Տէր ԱԾ քո, Աստուած նախանձոտ. և Աստուածախօս Մարգարէն զգուշացուցանելով ասէ. Զգուշացարուք յոյժ անձանց ձերոց, Զի նմանութիւն ինչ ոչ տեսէք յաւուրն յայնմիկ, յորժամ խօսեցաւ ընդ ձեզ Տէր 'ի Քորեբ լերին, 'ի միջոյ հրոյն: Մի անօրինիցիք, և առնիցէք ձեզ դրօշեալ զնմանութիւն ա̄մ ՊԱՏԿԵՐԻ ||. (Նմանութիւն արուական կամ իգական եւ̄ նմանութիւն ա̄մ հաւու թռչնոյ, որ թռչիցին 'ի ներքոյ Երկնից:) և այլն: 2. Օրէ. 4. 15. 16. 17: Ելից. 19. 12: տես երես 200—202. Հայելի Աստուածաշունչ. տպեալ. 1713.

Երկրորդ Պատգամ:

Մի առնուցուս զԱնուն Տն ԱԾ քո ընդունայն. զի ոչ արդարացուսցէ Տէր զայն. որ առնուցու զԱնուն Նորա ընդունայն:

Դատապարտէ, և ունայն (անշահ) տեղի՝ կամ ծաղրերգելէ և վասն զրուցատրութեան մեզի ԱԾ անունն մի՛ առնուր 'ի բերան. զի ԱԾ անունն մեծ է և ահ. նորա համար ճշմարիտ, շահաւէտ, բարի և ահ խօսքերու և գործքերու մէջն պիտի երկիւղով յիշենք, և բերաներս առնենք . . . ոչ թէ բարկութեան մէջ, կամ ծաղրաբանութեան մէջ, կամ անպարկեշտ, և խեղկատակ խօսքերու մէջ Զի ԱԾ անունն բերանն առնու և յիշէ, այս Պատուիրանին հակառակօղ

Պատ. Նախ եւ̄ եւ̄ Դարձեալ՝ զի Հայր (ԱԾ) Մարմնով (այսինքն որոշ ձևով. և նիւթով երևէք) ոչ երևեցաւ որպէս Բանն (որ է Որդին ԱԾ) Մարմնացեալ. կամ որպէս Հոգին Սբ Աղաւնակերպ և Հրաձև †: տես երես. 525. Գրիգոր Տաթևացւոյ Հարցմանց Գիրք: † Գոր. 2. 3.

Զա̄ծ ոչ ոք ետես երբէք . . . անփոփոխելի տեսանէին զնա պարզ և տարած. անկերպ և աննիւթ. անտարր և անսահման, որ ոչ նստի և ոչ յառնէ և ոչ գնայ: տես երես. 141. 'ի Մեկնութիւն Սբյ Աւետարանին Յօհաննու: տպեալ 'ի Տպարանի Մկրտչի Որդի Մահտեսի Գրիգոր Դպրի Մարզուանեցւոյ. 'ի Կոստանդնուպօլիս Քաղաքի:

|| Եթէ ՊԱՏԿԵՐ ոք գործիցէ, և ոչ վասն սիրոյ սիրելոյն՝ որ մահուամբ յաչաց վրիպեցաւ, կամ վասն զճարտարութիւն ցուցանելոյ, այլ 'ի պաշտօն առնել երկրպագանիցէ իբր ԱԾ, գործ չարութեան գործէ: երես. 39. 'ի Եզնիկայ Կողբացւոյ. Տպեալ 'ի Վենետիկ Յամի Տեառն. 1826:

Աստուածային հրամանաւ և Մովսէսի շինած Օձն Պղնձի՝ Եզեկիա

digitised by A.R.A.R.@

նոյնին : Նաև սուտ տեղն երդում անօղնելն՝ այս Պատուիրանին դէմ նշմարանչէն . քանզի Ա(ստուծո)յ Անուանն սուտ խօսից մէջն բերելնին նշանուն , և բերելոյ սուտութեան վկայ նշանակելն Ա(ստուծո)յ , որ է մեծ մեղք : Բայց երդումն եթէ ճշմարիտ բանի համար լինի , և այն բանն բարի և արդար բան լինի , և մեծ հարկաւորութիւն նեղայ (լինի) երդումով հաստատելոյ , յայն ժամանակն մեղք չէ . քանզի այսպէս լինելով՝ ճշմարիտ , արդար , և խոհեմ նոյնին երդումն . և Ած (Աստուած) Անուանն ճշմարիտ , արդար , և խոհեմ բանի մէջ նշանակէ , և վկայ նշանակէ : Երեմ . 55 .

## Չորրորդ Պատգամ :

Յիշեսջիր զօրն Շաբաթու սրբել զնա : Զվեց օր գործեսցես , և արասցես զամ զգործ քո : Յաւուրն եօթներորդի շաբաթ Տն Այ քոյ , մի՛ գործեսցես 'ի նմա զամենայն գործ քո , դու՝ և ուստր քո , և դուստր քո , ծառայ քո , և աղախին քո՝ եզն քո , և էշ քո , և ամ անասուն քո , և եկն քո . և պանդուխտն որ 'ի քեզ : (Եսա . 58.13.14. Ղու . 23.56.)

Զի վեց օր արար Տէր Աստուած զերկին և զերկիր . և զծով և զամենայն որ 'ի նոսա , և հանգեաւ յաւուրն եօթներորդի . վասն այնորիկ օրհնեաց Տէր զօրն եօթներորդ , և սրբեաց զնա :

Յիշեա և միտ դիր , որ . . . զկիրակէ օրն ամ պահես . այսինքն , Մարմնաւոր գործք չանես , այլ Աղօթից և ամ բարեաց հետ լինելով սրբութեամբ անցնես զայն օրն , այսինքն . . . . Ջերմեռանդական Աղօթից հետ լինելով , քարոզ ունկնդրել գնալով , և Քրիստոնէական Վարդապետութիւն սովրելու , և սովրեցնելու հետ լինելով . և ոչ թէ այսօր կիրակի և տօն է ( *խաղամիքէ . կնունքէ . Նոր տարիէ . բարեկենդանէ . Շամմին է* ) ասելով՝ խաղի . և պարի , ուտելու և խմելու , Մարմնաւոր

---

*բարեպաշտ թագաւորն՝ կտոր կտոր արաւ . վասն որ որդիքն իսրայելի խունկս և զոհս մատուցանէին նմա . Թուոց . 21.8.9 : 4 . Թագ . 18.4 . Վասնորոյ կորանալ . խոնարհիլ . ծունր կամ ծունկս դնել և երկրպագանել պատկերաց . և ձեռագործ իրաց . ճշմարտիւ և երևելի պաշտօն է կռապաշտութեան . և աներկբայ կռապաշտութիւնէ . որպէս որ վերևի գրած Հին և Նոր Կտակարանի ասութիւններուն պարզ երևումէ : ուրեմն սիրելի կարդացող կամ լսող ունկնդիր այսուհետև դու ել մի՛ անել էն որ ԱԾ արգելելէ որ չանենք . և էն արա որ ԱԾ ասելայ անենք . Յակ . 4 . 17 .*

*Աստի հարք յարգեցեալք և Նազելիք՝ դուք զայս ամ նշմարելով տեսէք . առեալ 'ի միտ խոհեմաբար Որդւոց՝ և զաւակաց ձերոց յար ուսուցէք . և մի՛ յաւել ևս զանցառարեալ յայսմ հետէ ձանձրանալով տաղտկանայցէք . այլ որքան մարթիք՝ միշտ ջանալով զազատութեան շաւիղն նոցա ցուցէք : տես երես . 9 . Նոր Տետրակ . Յակոբայ Շամիրեան . եւ Մովսիսի Բաղրամեան . տպեալ 'ի Մադրաս . 1772 .*

digitised by A.R.A.R.@

[illegible] (Կիրակի օրն) [illegible] 57. [illegible] 1732.

Յօտանաւոր վասն Կիրակէի. առացեալ 'ի ՅԱռաքել Վարդապետէ. Տունք. 30.

1 [illegible] . . . . . . . [illegible],
[illegible] . . . . . . . [illegible]. ||
[illegible] . . . . . . [illegible],
[illegible] . . . . . . [illegible]:

3 [illegible] . . . . . [illegible],
[illegible] . . . . . . [illegible].
[illegible] . . . . [illegible],
[illegible] . . . . . [illegible]:

5 [illegible] . . . . . [illegible],
[illegible] . . . . . . [illegible].
[illegible] . . . . [illegible],
[illegible] . . . . . [illegible]:

7 [illegible] . . . . . [illegible],
. . . [illegible] . . . . . [illegible].
[illegible] . . . . . . [illegible],
[illegible] . . . . . . [illegible]: †

8 [illegible] . . . . . . [illegible],
[illegible] . . . [illegible] . . . . . [illegible].
[illegible] . . . . . . [illegible], ‡
[illegible] . . . . . . [illegible]:

9 [illegible] . . . . . . [illegible], §
[illegible] . . . . . . [illegible].
[illegible] . . . . . . [illegible],
[illegible] . . . . . . [illegible]:

30 [illegible] . . . '[illegible] . . . . . . [illegible],
[illegible] . . . . . . [illegible].
[illegible] . . . . . . [illegible],
[illegible] . . . . . . [illegible]:

[illegible] 419—423. [illegible]

[illegible] 20.8: [illegible]

---

|| Ելից. 24. 12: 31. 18: 32. 15. 16: 2. Օրինաց. 4. 13: 5. 22.
† Եզէ. 33. 8. ‡ Մատ. 18. 17. § Թուոց. 15. 32 . . . 36.

digitised by A.R.A.R.@

[illegible] ... ... ... ... ... . . . . . .
[illegible]
[illegible] ... (2. Թես. 3.4.6.7.)
[illegible] ... (Եբր. 12.1.)
[illegible] ... (Մարկ. 2.23... 28.) [illegible] ... (Յոհան. 7.23.) [illegible] ... (Մատթ. 12.10.11. Ղուկ. 13.14.15. 14.5.)...
[illegible] ... 17. 21. [illegible] ... Յոհան. 8. 34. [illegible] ... 1.13.14. [illegible]
[illegible] ... 1.7. [illegible] ... 499...501. [illegible] ... 1773.

digitised by A.R.A.R.@

Հարց. Վասն է՞ր այնչափ Շաբաթս հրամայէ պահել:

Պատ. Նախ. զի խստասիրտք էին և անողորմք. և ոչ տային հանգչել ծառայից և անասնոց ||:

Երկրորդ՝ զշաբաթս հանգիստ նշանաց ԱԾ. և Օրէնս էր որ հանգչէր մարդ 'ի մարմնաւոր գործոց. տես երես. 371. և երես. 647. 'ի Գրիգոր Տաթևացւոյ Հարցմանց Գիրք:

|| Արդարն ողորմի անասնոց իւրոց: այլ ամբարշտաց անողորմ են: Առակաց. 12.10. Եփես. 6. 9: Կողոս. 4. 1.

Հինգերորդ Պատգամ.

Պատուեա զհայր քո, և զմայր քո. զի քեզ բարի լիցի: և զի երկայնակեաց լինիցիս 'ի վերայ երկրին բարութեան, զոր Տէր ԱԾ քո տացէ քեզ:

Որդիքն պէտք որ երեք բանով պատուեն և մեծարեն զիւրեանց ծնողսն. նախ՝ հրամանի ծնողացն հնազանդելով, երբ հրամանն հակառակ չէ ԱՅ. Երկրորդ՝ 'ի ծնողացն ամաչելով և պատկառելով. Երրորդ՝ իւրեանց ծնողացն ծառայութիւն անելով, և օգնութիւն հասանելով: Եւ երբ որ ասանք անելով պատուեն զիւրեանց ծնողսն նէ՝ երկայնակեաց կըլինին, այսինքն, շատ կապրին Աշխարհիս վերայ, և նոյն շատ ապրելովն շատ բարեգործութիւն կանեն, և Արքայութեան արժանի կըլինին: Եւ ինչ որդի որ իւր ծնողացն չի հնազանդիր, կամ լրբութիւն կանէ, և ծնողացն յերեսն կըվազէ, և իւր աւելցէն (ձեռնէն) եկած ծառայութիւնն և օգնութիւնն չի անէր իւր ծնողացն, այնպիսին շատ անիծից ներքև կընկանի, և այս Աստծոյն հրամանիս հակառակօղ կըլինի: տես երես. 58 Աղգաւէ: Միխիթար Վարդապետի. Գիրք Քրիստոնէական Վարդապետութեան. Տպեալ 'ի Վենետիկ. 1732.

Բայց արդ՝ ծնողքն պարտին մանաւանդ զաւակաց տալ երկուս ուսմունս. Ա (Միթէ և) երկնչել յԱՅ, և 'ի բաց կալ յամ մեղաց: Այլ որք ուսուցանեն չար զաւակաց իւրեանց (բանիւ և գործով) աւա՜ղ նոցանէ. իմաստ. 4. 6. 'ի յանօրինաց ամ որդիք որք ծնանին, վկայք են չարեաց ծնողաց իւրեանց: Սուրբ պատմէ ԱԾ զմեղս նոցա յորդիս իւրեանց: Եւ արդ զի յետ ԱՅ 'ի նոցանէ ունիմք զգոյն, պարտիմք պատուել զնոսա և առաւել քան զժամանակաւոր տէրս՝ յորոց ունիմք զժամանակաւոր գոյս: Եւ զի 'ի նոցանէ ունիմք զսնունդն, պարտիմք և սնուցանել զնոսա 'ի ժամանակի ծերութեան, և զի 'ի նոցանէ ունիմք զուսումն, պարտիմք նոյն հնազանդութիւն. որ պէս ասէ. Կողոս. 3. 20. Որդիք, հնազանդ լերուք յամենայնի ծնողաց ձերոց, (զի այնէ հաճոյ առաջի Տեառն.) այսինքն բաց յայնցանէ որ էին ընդդէմ ԱՅ և փրկութեան իւրոյ: Քանզի եթէ (հայր կամ մայր) ընդդէմ հրամայեսցէ, քամահելի է: †(արհամարհելի է) որպէս ասէ Տէրն. (Եթէ ոք գայ առ իս՝ և ոչ ատեայ

† Եւ եթէ ծնանիցի որդի՝ և տեսանիցէ զամենայն մեղս հօր իւրոյ զոր

digitised by A.R.A.R.@

կամ) որ ոչ ատեցէ զհայր իւր զմայր (Ղուկ.14.26.) ոչ կարէ ինձ աշակերտ լինել: .... եւս որ ատեացէ (քրիստոս հաւատացեալ և բարեպաշտ) ծնողաց զընդդէմն, ստանալ ինքեան կամս, և զհաւատս թողլուածութիւն: որպէս ասէ. Առակ. 30.17. Ակն որ ծաղր առնէ զհայր, և արհամարհէ զծերութիւն մօր, (անարգէ զծերութիւն մօր.) խլեսցեն զնա ագռաւք ձորոց. (և գէշ գէշ արասցեն զնա ձագք արծուեաց||:) այլ ինչ Աշխարհական իշխանք (և Դատաւորք:) Տես երես. 502. կամ Յաղագս Տասն Պատուիրանաց 'ի Գիրս Մոլութեանց. տպեալ 'ի Վենետիկ. 1773.

Վեցերորդ Պատգամ.

Մի Սպանաներ

Սուրբ է, թէ մարդ մի' սպանաներ, ոչ ձեռօքովք, ոչ բերանովք, և ոչ սրտովք:

Ձեռօքով սպանանելն այն է, ինչպէս որ ասնուեր մարդիկն իւր սպանանեն զիրենց ընկերը, և 'ի կենաց իւր զրկեն, որ է մեծ անօրէնութիւն:

Բերանով սպանանելն այն է, ինչպէս որ բամբասող մարդիկն բամբասելով

---

գործեաց. և երկիցէ՝ և ոչ արասցէ զնոյն: Եզե.18.14—18:20.18.

Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս՝ ոչ է ինձ արժանի. և որ սիրէ զուստր կամ զդուստր առաւել քան զիս՝ չէ ինձ արժանի: Մատ. 10. 37. Այնոքիկ, որ վասն հաւատոյն որ յիս՝ ոչ կամիցի բաժանիլ 'ի հօրէ, կամ 'ի մօրէ մինչ հակառակին հաւատոյն, և այսուվան սիրոյ նոցին թուլանայցէ 'ի հաւատոց, և կամ արտաքուստ ուրանայցէ զհաւատն, զի մի' բաժանեսցի 'ի ծնողաց, և կամ յո՝ և իցէ սիրելեաց, այնպիսին ոչ է ինձ արժանի. այսինքն ոչ է հետևօղ ինձ, և ոչ է աշակերտ իմ, և կամ ունող զհաւատ առ իս: Քանզի զծնմարտութիւն հաւատոյն որ առ իս՝ 'ի նոսա միայն համարիմ լինիլ, որք 'ի վեր քան զամենայն ինչ սիրեն զհաւատն, և միշտ նախադասեն զայն՝ ոչ միայն սիրոյ ընտանեաց, այլ նաև սիրոյ անձանց իւրեանց: տես երես. 232. 'ի Մեկնութիւն Մատթէոսի Աւետարանին տպեալ 'ի վենետիկ. 1737.

|| Այսինքն են Որդիքներ և Դուստրներն որ իրանց ծնօղացն ծաղր կանեն, չեն փոշմանելեց և չեն ապաշխարելեց, ԱՅ բարկութիւնն կգայ նորանց վերայ, և նորանք ցամաքում կամ ջրում՝ կըխեղդըվին և կամ ինչպէս աեղ և ինչպէս մահուամբ կըմեռնեն որ չեն թաղվելեց, թռչունքներ և գազաններ նորանց կուտեն. ինչպէս որ մինչև այժմ, կրակապաշտներն իրանց մեռելներն թաղում չեն, ագռաւներն և այլ թռչունքներըն են ուտում նորանց մարմիներն: և կամ ինչպէս Յեզաբէլ. երբոր գնացին թաղեն նորան, տեսան միայն նորա ոսկորնէրնէր մնացել. 4. թագաւորաց. 9. 10. 34. 35: Եւ տես վասն չթաղման Սաղմոս. 78. 3: Երեմիայի. 8. 1. 2: 14.16: 16.4. Յայտնութիւն. 19. 18.

digitised by A.R.A.R.@

զընկերն՝ զնոսա անուանն կարեն, և լաւագոյներուն մարդ մեզմէ՝ զընկերներին բարի համբաւն կորսընցուցանեն:

Իսկ Սրտով սպանանելն այն է, յինչպէս որ ատելութեամբ մարդիկ զիրենց ընկերն իրենց սրտին մէջ ատելով կը սպաննեն՝ և չար կը կամին ընկերին. և երբեմն մահուանն ալ կը կամին, կամ կորսանելն, և կողոպտելն, և աղքատանալն. և առանց մտածելու իրենց սրտին մէջ՝ չէ թէ մէկ անգամ, այլ շատ անգամ կը սպաննեն զիրենց ընկերն, որ ԱԾ պատկեր է, և Քրիստոսի արիւնովը գնուած: Ինչու համար սուրբ Առաքեալն Յօհաննէս կասէ, թէ ամենայն որ ատէ զեղբայր իւր՝ մարդասպան է: Տես երես. 59. 'ի Գիրք Քրիստոնէականի Վարդապետութեան տպեալ 'ի Վենետիկ. 1732.

Արդ 'ի համառօտ յայս բազումք սխալեցան բազում կերպիւ: Քանզի ոմանք ասացին, թէ ոչ է արժան սպանանել և զանասունս: Եւ այս սուտ է: Զի ասէ Ծննդ. 9. 3. ||. *Իբրև զբանջար դալարի ետու ձեզ զամենայն միս:* Ոմանք ասացին. թէ զոչ մարդ պարտ է սպանանել: Այլև այս սուտ է. զի ասէ. 2.Օրին. 20. 16 †. *մի տացես թոյլ կեալ չարագործաց:* Եւ Հռոմ. 13. 4. *Ոչ վայրապար է ածել սուսեր ընդ մէջ քանզի Աստուծոյ վրէժխնդիր է:* Այս ուրեմն ասելովն. *մի՛ սպանաներ,* հրամայէ առանձնական ումեք, և որ իւրով իշխանութեամբն կամիցի առնել. այլ ոչ այնմ որ ունի զիշխանութիւն ըստ Օրինացն: Եւ ոմանք ասացին. արգելու ասէ ընդդիմանալ չարին, այլ ոչ զինքն. որպէս յայտէ 'ի Մատթէոս: Նաև այս սուտ է. զի որ սպանանէ զինքն՝ սպանանէ զմարդ ‡. և զայնպիսին, որում ինքն ոչ է Դատաւոր. և առնէ ընդդէմ Օրինաց և բնութեան, եթէ ոչ Աստուածային հրամանաւ, և կամ ազդեցութեամբ Հոգւոյն Սրբոյ. և այսպէս էր մահն Սամփսոնի: տես երես. 503. 'ի Գիրք Մոլութեանց. Գլուխ. Զ. Յաղագս տասն Պատուիրանաց. տպեալ 'ի Վենետիկ. 1773.

Վասն ոչ Սպանման:

Աստուած արգելու, և հրաժարեցուցանէ զմարդն ոչ յանասնասպանութենէ, այլ 'ի մարդասպանութենէ. և արգելու զառանձին մարդն, ոչ զիշխանաւորն, որոց իշխանութիւնն ոչ ուստեք է, եթէ ոչ յԱԾ: Հռօ. 13. 1: 1. Պետ. 2, 13. 14: Յօհ. 19. 11: Արդ՝ *այս արգելումն* այսպէս իմանի. զի մի՛ առանձին ոք անձամբ անձին, և իւրովի, կամ այլ կերպիւ. իցէ խորհրդով բանիւ, և գործով. իշխեսցէ սպանանել՝ անարգել՝ ատել՝ չարախօսել՝ ոխալ՝ բարկանալ՝ խոցել՝ վատահամբաւել՝ կամ գայթակղել. այլ զամենայն դատաստան, և վրէժխնդրութիւն թողուլ ԱԾ, և Դատաւորաց. որք

|| Ղևտացոց Գլուխ. 11: 2.Օրինաց. 12.15:14.1...22. Գործք. 10.12...15. Հռովմայեցոց. 14.3.

† 2.Օրինաց. 7.2.3.16.17: Թիւք. 21.35: 33.52: Յեսու. 6. 17.21:9.24.26: 10.28.40:11.11...15. ‡ Մատթէ. 22.39.

digitised by A.R.A.R.@

յԱՅ կարգեալ են ||, և ոչ հպարտացար ածեալ ունին զսուսեր ընդ մէջ։ Հռո. 13. 4։ Լուարուք՝ ասէ Տէրն մեր. զի ասացաւ առաջնոցն, թէ՝ Մի՛ սպանանէր. զի որ սպանանիցէ՝ պարտական լիցի դատաստանի։ Այլ ես ասեմ ձեզ. եթէ ամ, որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց. պարտաւոր լիցի դատաստանի. և որ ասիցէ ցեղբայր իւր յիմար, պարտաւոր լիցի ատենի. և որ ասիցէ ցեղբայր իւր, մորոս. պարտաւոր լիցի գեհենին հրոյն։ Մատթ. 5, 22։ Ամ որ ատէ զեղբայր իւր, մարդասպան է։ 1. Յոհ. 3, 15։ (Հռո. 12. 17—21։) Երես. 215. Հայելի Ածաշունչ.

||Ծննդոց. 9. 6։ Ելք. 21. 12. 14։ 22. 18. 19. 20. Ղևտացւոց 24. 17. Թւոց. 35. 30. 31։ Մատթէ. 26. 52. Յայտնու. 13. 10.

Նաև է սպանել։ յղի կնոջ զորդ երեխէն դեղով, կեօթէկ տալով և կամ այլ մին կերպիւ վէր ձգել տալն։ Նաև է սպանել։ զահր ուտացնելն կամ խըմացնելն և թունացնելն. որպէս որ 'Պատ սրբ Աւգոնեայ.... արբեցուցանէ նմա զազդ դեղաձայն մահու, և լուծանէ զպտուղն (Ներսեա) 'ի կենաց.' տես երես. 89. 'ի Նոր Տետրակ ապեալ 'ի Մադրաս 1772։ Նաև տես երես. 469. 'ի Պատմութիւն Հայոց. Հատոր. Գ.

Եօթն Երորդ Պատգամ։
Մի Շնար։

Մի Շնար ասելն է 'Մարմնոյդ չար ցանկութեանն մի՛ հետևիր, օտար կնոջ հետ մի՛ լինիր, ոչ գործով, և ոչ սրտովդ ցանկանալով. քանզի մէկ մարդ թէպէտ գործքով չայն չար, և սիրտ խառնակութիւնն չանէ, բայց եթէ իւր կամաց հաւանութեամբն սրտով կու ցանկայ || խառնակութեան, այսպիսին շնացեալ և պառնիկ կու համարի, և կու մեղանչէ այս հրամանիս դէմ. նորա համար՝ ինչ կերպով և իցէ, ամենայն ցեղ ցանկութեան մեղքեր՝ այս Աստուածային Եօթներորդ . . հրամանովս կու արգելուին։' Երես. 60. 'ի Գիրք Քրիստոնէականի Վարդապետութեան. տպեալ 'ի Վենետիկ. 1732. || Մատթ. 5. 28.

Իսկ հրամանս այս տուեալ լինի երկոցունց. այր, ասն և կանանց զի մի շնայցեն շաղաշարելով ընդ այլում։ Նաև տուեալ լինի իւրաքանչիւրու-մեք, զի մի մտանիցէ առ զուգակից ուրուք։ Եւ այս է զոր ասէ, Մի շնար։ Վ̄ն զի է ընդդէմ բնական Օրինաց որ ասէ. մի՛ առնիցես այլոց զորինչ ոչ կամիս լինել քեզ։ և զոր կամիս՝ զի արասցեն քեզ, այս հաւատարմութիւն, պահեա և դու։ Դառնեալ. է ընդդէմ Այ, և կացուցման Եկեղեցւոյ. զի լինի պատճառ առաջի երեսաց Եկեղեցւոյ. ուր ածի Այ 'ի միաւորութիւն, և յերաշխաւորութիւն առ 'ի պահել զհաւատարմութիւն։ Դառնեալ. է նենգաւորութիւն. զի ոչ ոք 'ի նոցանէ ունի իշխանութիւն 'ի վերայ մարմնոյ իւրոյ. (1. Կոր. 7. 4։) առանց իւր զուգահաւատարմին և զնեն-գաւոր ոք մատնէ զինքն այլոյ։ Դառնեալ. առնէ գողութիւն՝ կացուցանելով ժառանգ զօտար որդին. և 'ի յայս ինչ առաւել մեղանչէ կինն։...

Եւ արդ՝ գիտելի է. զի հրամանաւս այս արգելեալ լինի պառնկութիւն»

digitised by A.R.A.R.@

և անձնային մարմնական պղծութիւն‖. և անձնային կամաւորական հոսումն սերմանց : քանզի թէպէտ բնական երևի շաղախութիւն սորուն և իգին . այնպէս յետ որոյ ապականեցաւ բնութիւնն վաղվաղակի ցանկութեամբ վասն մեղաց նախնին ծնողացն , յայնմ հետէ է որպէս նեխանուր ինչ խառնեալ թունօք : ապա թէպէտ է բնական , այնպէս վասն խառնելոյ անդ մահաբերին ազանդ , եթէ ոչ օժանդակութեամբ թերխանէին , ի պահէին, և հանձարութեամբ հալածեալ խափանեալ : Տես Գիրքն . Է . Յաղագս Տասն Պատուիրանաց . երես . 507 . 'ի Գիրք Մոլութեանց . տպեալ . 'ի Վենետիկ . 1773 :

‖ Որոց մինն է Արուաց ընդ Արուս պղծագործութիւն գործելն . Ղևտ . 18.22 : 20.13 . Հռով . 1.26.27 : 1. Կոր . 6.10 . Եփե . 5. 5 : 1. Տիմ . 1.9 . Յայտ . 22.15 :

Եւ Դարձեալ որ մինք են, են արուագիտութեան մարդոյ և անասնոց մեղքն երբեմն շատ բազմացան և պատճառ եղեն Սոդոմայ և Գոմորայ մին քանի Հայ իշխանաց մէջն, քանզի անուրջան Վանականաց . շատ պատմանքէ Աւետարանի կաթողիկոսաներն են ջնջել մեղքն բառնալէ համար մին ձար չէին անում : որպէսզի, ուրէք առոք և ջերմանդ Հայոց և Եղբայրք . վերջապէս քաղ շնորհօքն . պահօք և Աղօթիւք քոյ Աւետարանին հետևելով և քարոզելով . մաքրէք, սրբէք Աթոռներ և Վանքերն և Եկեղեցիներն, եթէ որ տեսն նա մինչև էսօր էր գալ մեղքն կայ և երևու մն էր կողմարէնքումն և չէր Թէմ մեղումն .

Եւս է Անասնագիտութիւնն . Ելից . 22. 19 . Ղևտ . 11.44 : 18. 23—25 : 20. 15 . 16 : 2. Օրէ . 27.21 . նորանք որ են մարդասպանք գործքն մեղք չէին համարում . նորանց աղաղումն որ այս չար Աճաղունքն վկայութիւններն կարդալով ղզջացան և են մեղքերն հեռանան .

Մարդ 'ի պատուի էր և ոչ իմացաւ հաւասարեցաւ անասնոց անբանից և նմանեցաւ նոցա : Սաղմոս . 48.13 .

Է . Անդրադարձ եթէ ոչ մաքրեսցուք, ոչ բերեն զարմանս բարեաց . մանկունք եթէ ոչ դաստիարակեսցեն, ոչ պտղաբերեն զառաքինութիւն : Չէք ինչ 'ի նեանս մարդկան որ առաւելագուրեսցէ յառաքինութիւն, որպէս խորհ բանից, և օրինակ գործոց : տես Սրբակրօն Պօղոս Պատրիարգն 'ի Թանգարան խրատու . հատոր . Ա . երես . 80 . տպեալ . 'ի Տպարանի Պօղոս Արքեպիսկոպոսի որ 'ի Յօրթագիւղ . 1824 :

Ով որ եւ պատուիրանքներուս էլած պզտիկ մինը կըքանդէ , և մարդկանց էնպէս կըսորվեցնէ' նա քոքր կըկոչվի Երկնքի Արքայութեան մէջը . բայց ով որ կանէ և կըսորվեցնէ, նա մեծ կըկոչվի Երկնքի Արքայութենումը : Մատթ . 5.19 .

Ութներորդ Պատգամ :
Մի գողանար :

Այն բանն' որ ուրիշին է' առանց կամքին տէր մ' առնուլ, թէ ծածուկ, թէ յայտնի . քանզի թէ ծածուկ առնուլն' գողութիւն է . և

digitised by A.R.A.R.@

[illegible] (ստայուածքն) [illegible]

[illegible] 61. [illegible] 1732. ‖ [illegible] 19.13. [illegible] 5.4.

[illegible] (անօրէն շահ կամ) [illegible] (հասարակաց անիրաւ ազքամներից) [illegible] 10.1. որ ոչ մտանէ ընդ դուռն, գող է և աւազակ։

[illegible]

[illegible] 27. Որ հեղու զարիւն, և որ պատրէ, իբր թէ են եղբայրք։

[illegible] 2. 6. Վա՜յ որ յաճախէ անձին իւրում որ ոչ իւր իցէ։ [illegible] զի քարն 'ի յորմոյն աղաղակեսցէ։

[illegible] 10. 2. Ոչ օգտեսցեն գանձք ամբարշտութեան։ [illegible]

digitised by A.R.A.R.@

ճառագայթք ԱՅ, առաւել պայծառացուցանէ զնա. որպէս ասէ Սիրաք. 34. 24. *որ մատուցանիցէ պատարագ 'ի յընչից աղքատաց, իբր թէ զենու զորդին առաջի հօրն:*

Զորօրինակ, զի Քահանայն և այլ ծառայութեան իրաւապէս ժողովեալս. քանզի որպէս հուրն խառնեալ ընդ այլ իրս, աղտոտէ զայնս. այսպէս և չարաչար ստացեալն հրդեհէ զբարեպէս ստացեալն որպէս ասէ Յոբ. 15. 34. *Հուր կերիցէ այարկս նոցա:* Այնպիսին ոչ միայն զիւրն. այլև զորդւոցն նոցին առանէ. որք պարտաւորանեն անդրէն հատուցանել: տես Երես. 508: կամ Յաղագս Տասն Պատուիրանաց 'ի Գիրք Մոլութեանց տպեալ. 1773.

Եւ մի՛ ոք փոքր համարեսցի զառ 'ի նմանէ գողս, զի 'ի քարեղէն տախտակն 'ի գրեալ Օրէնսն մատամբն ԱՅ (Ելք. 31. 18.) երրորդն է առ հաւասարեալ, յետ սպանութեան և շնութեան: Եւ մի՛ ոք համարեսցի թէ մեծագոյն իրաց յանցանութիւնն է 'ի գողութեան համար, և փոքրն ոչ: Ծանիցէ այնպիսին, զի թէպէտ և 'ի քանակին զանազանութիւն է, քանզի չորեքտասանէ հատուցանել՝ յօրէնսն հրամայեցաւ զգողութեան վճարումն ||, և տասն պահեցեալք չափոյն՝ չորեքտասանին, կամ հարիւրին կամ հազարին՝ առաւել քան զմիոյն կամ զերկուցն, սակայն անունն մի և նոյն է մեծին և փոքուն, բազմին և սակաւուն: Զի ոչ թէ որ զմեծագոյն իրս կամ զբազումս գողանայ՝ նա միայն կոչի գող, և որ զփոքունս և զսակաւս յայլ ինչ անուն վերաբերեալ, այլ՝ համանուանբար 'ի վերայ ամենայն գողոց է գողութեանն անուն և պարտ, որ զբազումն գողանայ, և որ զսակաւն:

Եւ համեմատ՝ որ ընդ գողութեան անուամբ և բամբասանօք արժանէ զմարդ այսպէս է, ամենայն ոք որ զշէնս իւր ՅԳէ յանուանել զինչ և իցէ իրս, և աշխարհ այսր և անդր նայեսցի, զի մի՛ տեսցէ կամ ոչ գոյին և ըմբռնեսցէ զնա, կամ օտար ոք՝ և հայհոյեսցէ. գողէ այնպիսին, և գողութիւն է զոր առնէ: (||Ելք. 22. 1: 2. Թագ. 12. 6. Ղուկ. 19. 8.)

Եւ մի ոք ինքն ինքեան իրաւունս առնիցէ, կամ աղքատութեան իւրոյ վասն զգողացեալն առելով, և կամ այլ ինչ ցուրտ պատճառս յօդելով, անպարտ համարի լինել զինքն 'ի պատուիրանէն ԱՅ 'ի նախնի եղեալ Օրինացն զգաստասցի այնպիսին. Անանիայ և Սափիրայ՝ մի՛ թէ անգին աղքատութեան էր գողացեալն յիւրոց այլոց՝ որպէս և քոյդ, ոչ այլ 'ի սեպհական իւրեանց Գեղջին գնոյ և 'ի հայրենի ժառանգութենէ՝ զոր վաճառեալ արծաթոյ, և սակայն ինչ խորել յաղագս առանձնական իւրեանց պէտոյից, և զբազումն առ ոտն եդեալ Պետրոսի. ուստի զերկու մահու եղեն պարտական՝ 'ի վերայ հաստատոյ արդար իրաւանցն պատուհասելոյ, ոչ վասն արծաթոյն ինչ կարեաց՝ զոր ոչ ինչ փոյթ էր Պետրոսի, այլ վասն սուտութեանն, որպէս և ասէր, ոչ ստեցեր դու մարդոյ, այլ ԱՅ: (Գործ. 5. 4.)

Իսկ առ Թեոփիլոս տեսանեմք՝ ոչ միայն գողութիւն, այլև սրտութիւն վասն գողութեանն. ոչ լոկ բանիւ, այլև մեծամեծ երդմամբ ուրացութիւն, որոյ մեղաց չիք թողութիւն: Զի և ոչ չշնորհ և խոստովանութիւն առ այն՝ յորժամ գողացան, զի թողութեան իշխանութիւն գողոյն

digitised by A.R.A.R.@

յաղագս գողացելոյ իրին, որ ասէ իւրն է գողացեալ գոյին՝ ունի, և ոչ օտար ոք խոստովանահայր: Վասն որոյ չէ ոչ խոստովանի նմա և ոչ հատուցանէ՝ զոր գողացաւ 'ի նմանէ և զրկեաց, ոչ առեմ չորեքկին՝ ըստ մաքսաւորին Զաքէի, այլ՝ ոչ զոր էառն, ոչ ընդունի թողութիւն յաւիտեան. տես երես. 22. 'ի Ընդհանրական Գիրք տպեալ 'ի Կոստանդնուպօլիս: 1825. 'ի Հասան—փաշայ խանն: Եւս տես երես. 28. տպեալ 'ի Սանկտպետերբուրգ. Յամի տն. 1788.

Իններորդ Պատգամ:

Մի սուտ վկայութիւն վկայեր ընկերէ քումդ:

Առեալ թէ քո ընկերոջն (Ղուկ. 10.29.) վերայ սուտ վկայութիւն մի՛ տար, ոչ Դատաստանի մէջ, և ոչ արտաքոյ մէջն, և ոչ ուրիշ մարդկանց առաջև. նաև ասելէ, թէ ինչ սուտ խօսք մի՛ խօսիր. և կամ կարծեօք գիտացածդ իբրև ճշմարիտ և ստոյգ գիտացած մի՛ խօսիր, թէ քո վերայ լինի խօսքդ՝ թէ ընկերոջդ վերայ, և թէ ուրիշ էանի վերայ:...

Այսպէս նաև կամիմ ասել, թէ ինչպէս Դատաստանին առաջև Դատաստանի մէջ ընկերոջն վերայ սուտ վկայութիւն տալն մեծ մեղք է, նոյնպէս ալ՝ երբ որ մեր ընկերին մէկ գործք մի ունի. և թան մի կանէ, որ բարի կողմն ալ կարէ մեկնուիլ, և չար կողմն ալ, եթէ մենք պայմանի գործքն չար կողմն մեկնենք՝ և մեր սրտին մէջ զնա դատենք, և չար համարինք նէ, նոյնն սուտ վկայութիւն տալ է մեր սրտին մէջ: Քանզի ստոյգ չենք գիտեր՝ թէ նա զայն չարն, և մեղքն ունի, այլ մեք 'ի չար կողմն մեկնելով զնորա գործքն՝ զնա մեղք չար կերպցինենք. և այս է յայտնի սուտ վկայութիւն: Եւ եթէ պայմանի սուտ վկայութիւնս՝ մեր ընկերոջն վերայ սրտերնուս մէջ տալուն էաև, մարդկանց առաջևն ալ որ խօսինք, այն ժամանակն նաև լինի սուտ վկայութիւն տալ ընկերոջն վերայ 'ի մէջ մարդկանց: Եւ գիտնալ պէտք է, որ ինչպէս տալ սուտ թան մի ընկերոջն վերայ վկայելն սուտ վկայութիւն տալ է, նոյնպէս ալ կարծեօք գիտացածն իբրև ստոյգ վկայելն, և կամ զթանն որ 'ի բարի կողմն կարէ մեկնուիլ, 'ի չար կողմն մեկնելով վկայելն՝ սուտ վկայութիւն տալ է. և ամենայն մարդ որ 'ի սոյն գլխոյն և զկարծիքն չի լռեցուցանէր, և զընկերին թանն 'ի չար կողմն մեկնելու չի յետ կենար, նա մեղանչէ ընդդէմ այս Աստծոյ հրամանին. և այլ ուրիշ մեծամեծ մեղքերու մէջ կանկանի, Փ. թշնամութեան մարդկանց գայթակղութեան, և կործանման պատճառ նաև լինի՝ որէ յոյժ ծանրագոյն մեղք: տես երես. 63. և. 64. 'ի Գիրք Քրիստոնէութեան Վարդապետութեան. տպեալ. 1732.

*Մի սուտ վկայեր.* Ելից. 20.16. Յետոյ արգելլ զաւնելն անիրաւութիւն ընկերին գործով, այժմ արգելու զբերանովն. և այս թէ 'ի Դատաստանի, և թէ արտաքոյ Դատաստանին:

Այր՝ 'ի Դատաստանի լինի երեք կերպիւ: Կամ ամբաստանելով սուտ. զորս տալ. Ղևտ. 19. 11. *Մի դնիցես զրպարտութեամբ մեղս 'ի վերայ ընկերին քոյ, և մի՛ լինիցիս քսու:* Այլ որպէս ոչ է պարտ ասել սուտ. նոյնպէս և ոչ է պարտ լռել զճշմարիտն. ըստ այն որ ասէ.

digitised by A.R.A.R.@

եթէ մեղիցէ քեզ եղբայր քո, երթ յանդիմանեա զնա: Կամ. Մատ. 18. 15. Վկայելով սուտ. զորմէ ասէ Առակ. 19. 5. Վկայ սուտ ոչ լիցի առանց պատժոյ. քանզի պարտ է կրել զնոյն պատիժն. զոր ամբաստանեալն: Կամ անիրաւաբար դատելով. որպէս ասէ. Ղեւտ. 19, 15, Մի անիրաւութեամբ դատեսցես: .... Նախ՝ զի այնու լինի որ որդի սատանայի, և նման նորին. որպէս ասէ. Յոհ. 8. 44. Դուք 'ի Հօրէ սատանայէ էք: և լինի ասէ. զի սուտ է, և հայր նորա: Փոխանակ 'ի խօսելոյն ճանաչի որ, թէ յորոց նշանաց և 'ի նմանանգէ իցէ. որպէս առացան Պետրոսի, թէ դու 'ի նոցանէ ես. քանզի և խօսք քո յայտ առնեն զքեզ ||. այլ Այ է ճշմարտութիւն, և ճշմարիտք են որդիք նորա: Երես. 509. և. 510. Յաղագս տասն Պատուիրանաց 'ի Գիրք Մոլութեանց. || Մատ. 26.73.

Տասներորդ Պատգամ:

Մի ցանկանար տան ընկերի քոյ, և մի՛ անդոյ նորա. մի՛ ցանկանար կնոջ ընկերի քոյ, և մի՛ ծառայի նորա, և մի՛ աղախնոյ նորա, և մի՛ եզին նորա, և մի՛ էշոյ նորա, և մի՛ ամենայն անասնոյ նորա. և մի՛ ամենայնի՝ զինչ ընկերի քոյ իցէ:

Ասելն թէ մի՛ ցանկար քոյ ընկերի կնոջն՝ ասելով թէ ով ինչ պիտեր, զի լաւ է. և ընդէ՞ր իմ ընկերոջս հանդիպեցաւ: Նաև ասելն՝ թէ քո կամաց հաւանութեամբն չար ցանկութեամբ մի՛ հայիր 'ի կին ընկերիդ և մի՛ պիղծ խորհրդով՝ քո կամաւդ մտածմունք անել օտար կնոջ վերայ. զի որպէս գործովք շնալն, և պոռնկելն է մեղք, այսպէս և միտք խորհելն զայն՝ երբ լինի կամքին հաւանութեամբն՝ է մեղք:....

Ասելն, թէ երբ քո ընկերն լաւ բաներ ունի, կամ լաւ տուն, և լաւ ըռուղան՝ (ըստացուածք) տես մի՛ նախանձիր անոր, և մի՛ ասեր թէ ա՜հ ինչ պիտեր այն ըռուղանն, այն տունն, և այն բաղանն, ընդէ՞ր անոր հանդիպեցաւ, և ինձի չէ: Փոխանակ այնպէս սիրել պարտին զմեր ընկերն՝ որ երբ նա լաւ բան մի ունենայ՝ այնպէս խնդանք նորա ունենալուն վերայ, ինչպէս որ նոյն խնդայինք՝ եթէ մենք ունենայինք: Դարձեալ ինչպէս գործքով գողնալն ուրիշի ունեցածն՝ է մեղք, այսպէս և ցանկալն ուրիշի ունեցածին այն մտօքն, որ թէ կարենալու է նոյն գողնալ՝ է մեղք: Երես. 65. 'ի Գիրք փրկութենականի Վարդապետութեան. 1732.

Մի՛ ցանկար կնոջ ընկերի քոյ. Ելից. 20.17. Զանազանութիւն է 'ի մէջ մարդկային և Ային Օրինաց: Զի մարդկային Օրէնքն դատէ միայն զգործս, և զբանս. իսկ Աստուածայինն՝ և զխորհուրդս. զի այն փոխանակ է մարդկանէ, որք դատեն միայն զերեւելեայսն՝ իսկ այս Այ, որ քննէ և զսիրտս. (Յայտ. 2.23.) Այլ՝ յետ ասելոյն զհրամանացն, որք վերաբերեալքն առ բանս և գործս. այժմ ասելի է զայսցանէ, որք վերաբերին առ խորհուրդս. քանզի առ 'ի Այ կամքն փոխանակ գործոյ համարելով լինի. վասն այսորիկ ասէ. մի՛ ցանկար կնոջ ընկերի քոյ: տես Յաղագս Տասն Պատուիրանաց. 'ի Գիրք Մոլութեանց. Երես.511.

digitised by A.R.A.R.@

Մինչև ցայս արգելեալ ԱԾ զանիրաւութիւնն, որք լինին գործով կամ կերպարանաւ. աստանօր զայսպիսի անիրաւութիւնն խափանէ որք համանման խորհրդով յօժար սրտիւ, և անլրբերի մտածութբ։ Այս որ ասէ Տէրն մեր, հայի 'ի կին [illegible] առ 'ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա 'ի սրտի իւրում։ Մատթ. 5, 28։ (Սաղ. 50. 11—13։ 142. 2։ Առակ. 20. 9։ Երեմ. 4. 14։ Մատթ. 15. 19.20։ Հռոմ. 7. 7—24։ 2. Կորն. 7. 1։ Յակ. 1.15։) Անիրաւ ցանկութիւն զերիս ունի մասունս, որք են. Թելադրութիւն 'ի Սատանայէն։ Հեշտութիւն 'ի մարմնոյն։ Հաւանութիւն 'ի մտացն, և կամացն։ Այս երեքեանս 'ի միասին գոլով կատարեն զմահու չափ մեղանչութիւնս։ Ցանկութիւնն անիրաւ միայն յԱԾ, և ոչ յաշխարհական Դատաւորաց կարէ պատժիլ. զի մարդիկ ոչ կարեն գիտել՝ կամ դատել զցանկութիւն մարդոյն, այլ միայն ԱԾ, որ քննէ զսիրտս մեր։ (1. Թագ. 16. 7։ Երեմ. 17. 10։) 1. Թես. 2, 4։ Սակայն ոչ գոն մարդկային Օրէնք ընդդէմ մարմնաւոր՝ անիրաւ ցանկութեան. միայն ԱԾ պատուիրեաց թէ՝ Մի ցանկանար ինչ, զինչ Ընկերի քո իցէ։ Մի սիրէք զԱշխարհ՝ քարոզէ Սիրելի Աշակերտն Յովհաննէս, զի զոր ինչ յաշխարհի է. ցանկութիւնք մարմնոյ, ցանկութիւն աչաց, և ամբարտաւանութիւն աստի կենացս։ 1. Յոհ. 2. 15։ Եւայ 'ի գեղեցկատեսութենէ ծառոյն ցանկացաւ պտղոյն կերել, և անկաւ 'ի փառացն։ Ծնն. 3, 6։ Ցանկութեան գերեզման անուանեցաւ. ուր Իսրայէլ վն ցանկութեն 'ի Տեառնէ մեծամեծ հարուածովք հարեալ անկան, և թաղեցան։ Թուոց. 11. 33. 34։ Եւ այն օրինակք լինէր վն մեր, ասէ Պօղոս, զի մի՛ լիցուք ցանկացօղք չարեաց, որպէս և նոքայն ցանկացան։ 1. Կոր. 10, 6։ Սակայն նոյն Առաքեալն յորդորէ։ Հոգւով գնացէք՝ և զցանկութիւն մարմնոյ մի՛ կատարէք։ Զի մարմին ցանկայ հակառակ հոգւոյ, և հոգի հակառակ մարմնոյ։ Գաղ. 5. 16. 17։ Որդեակ՝ խրատէ իմաստունն, մի՛ յաղթեսցէ քեզ գեղոյ ցանկութիւն, և մի՛ ըմբռնեսցիս աչօք քովք։ Առակ. 6, 25։ ԲԱՑ համայն Պատգամք և Օրէնք Տասն Պատուիրանացն բովանդակին 'ի Սէր։ Լրումն Օրինացն, ասէ Պօղոս՝ Սէր է։ Հռոմ. 13. 10։ Գաղ. 5. 14։ 1. Տիմ. 1. 5։ Մատթ. 22. 40։ Մարկ. 12. 31. Տես երես. 223, 'ի Հայելի Աստուածաշնչ.

Իմ խոհական՝ ուշիմ որդեայ, միտ դիր խրատուց՝ որ 'ի սմա.
 զկարգս քո՝ սոքօք ուղղեա, լիցիս յոգունց՝ դու գերակայ։
Հետամուտ լեր՝ այս գիտութեան, քեզ պիտանի՝ կենակցութեան.
 յորմէ սկիզբըն մարդկութեան, բերի 'ի ծայրըն սրբութեան։
Երնէ անսաս՝ իմոց բանից, դիւրաւ տաշիս՝ 'ի քոց ախտից.
 գեղեցկասիրպ՝ ձև յօրինիս, անորժատես՝ շինուած լինիս։
Տաճար կազմիս՝ Աստուածութե, շնորհաց Հոգւոյն՝ բնակութեան.
 որով բուրես՝ հոտ սրբութեան, մաքրեալ սպառ՝ զաղտ մոլութե։

Տես երես. 166. 'ի Գիրք Քաղաքավարութեան. Իգնատիոս Վարդապետի. տպեալ. 1806. 'ի Վենետիկ։

digitised by A.R.A.R.@

Բան առ Ընթերցօղս

'Մեծաւ աղերսանօք խնդրեմ զայս, զի առ որ վախճան Տէրն մեր բանիւ և գործով վարդապետեաց մեզ՝ 'ի յընթեռնուլն զբանս նորա՝ և զմեկնութիւնս բանիցն, առ նոյն վախճան դիմիցէք: Եւ յայնժամ լինիք ճշմարտապէս դիմօղք, յորժամ 'ի միտ առնուք զբանս նորա՝ ոչ միայն վասն գիտելոյ, այլ մանաւանդ վասն պահելոյ և գործով կատարելոյ: Վասն զի Հոգին Սուրբ ոչ որպէս զտեսական գիտութիւն ինչ առաջադրեաց մեզ զԱւետարանն, այլ որպէս զգործնական գիտութիւն. որպէս զի 'ի ճանաչելն մեր զզօրութիւն բանիցն Քրիստոսի՝ մեծաւ սիրով զայնս 'ի գործ ածիցեմք. և 'ի ծանօթանալն վարուցն Քրիստոսի՝ զվարս մեր նմին համակերպիցեմք. և այսու զանուն քրիստոնէութեան զոր միշտ կրեմք, 'ի ձեռն գործոց յարմարագոյնս մեզ առնիցեմք: Քանզի որ 'ի վարուցն Քրիստոսի հեռանայ, անուանս այս Քրիստոնեայ ոչ կարէ բարեպէս յարմարիլ նմա:

Եւ առ այս՝ զի զոր ուսանիմք 'ի յԱւետարանէն զայնս բարեպէս 'ի գործ ածիցեմք, և զվարս մեր վարուցն Քրիստոսի համակերպիցեմք, պիտոյանայ մեզ ստէպ ստէպ մտածել զծնանիլն Քրիստոսի յաղքատ մօրէ և յաղքատ մսրոջ (Ղուկ. 2.7.) յորմէ ուսանիմք սիրել զաղքատութիւն: Զհալածիլն 'ի Հերովդէ է (Մատթ. 2.16.), որով առաջնորդիմք յօժարութեամբ ընդգրկել զհալածանս. Զդնելն Քրիստոսի զԱստուածային . . . Մկրտելն իւր ենթ ձեռաց Յօհաննու առ 'ի մկրտիլ (Մատթ. 3. 13—17.), յորմէ ուսանիմք զխոնարհութիւն. Զծոմապահելն 'ի լեառն (Մատթ. 4. 2.), որով ուսանիմք ճնշել պահօք զմարմինս մեր: Եւ ևս պիտոյ է մտածել զանթիւ գործս բարերարութեանցն Քրիստոսի, զորս արար Ազգին Հրէից, բժշկելով զհիւանդս և զախտաժէտս՝ յարուցանելով զմեռեալս, արդարացուցանելով զմեղաւորս, և 'ի վերայ այսր ամենայնի 'ի տանջեան ուսուցանելով նոցա զճանապարհն Արքայութեան Երկնից, և 'ի գիշերի Աղօթելով վասն նոցա (Ղուկ. 6.12), զի կարօղք լինիցին 'ի միտ առնուլ և պահել զամենայն զոր լուան, յորոց գործոց ուսանիմք միշտ կամիլ և առնել զբարիս այլոց, և ասպնջական լինիլ ամենայն նեղելոց:

Եւ հետևեբար պիտոյանայ մեզ գիտել, և 'ի միտ առնուլ նաև զանթիւ և զպէսպէս նախատինս և զբամբասանս և զարհամարհանս, զորս Տէրն մեր փոխանակ այնքանեաց իւրոց բարերարութեանց ընկալաւ 'ի խեղաթիւր Ազգէն Հրէից. և ոչ երբեք ցասեաւ վասն կրեալ անիրաւութեանցն ընդդէմ նոցա. որպէս և գրէ Առաքեալն Պետրոս. 1.Պետրոս. 2.23. Որ բամբասեալ, և ոչ փոխարէն բամբասէր. չարչարեալ. և ոչ սպառնայր: որպէս զի և մեք 'ի կրելն մեր զչարիս 'ի նոցանէ, որոց բարերարեցաք՝ ոչ երբեք ցասնուցումք ընդդէմ նոցա: Եւ մանաւանդ մեծաւ ուշադրութեամբ պարտիմք մտածել նաև զայս՝ թէ զիա՛րդ Տէրն մեր վասն նոցա, յորոց պէս պէս անարգական տանջանօք 'ի վերայ

digitised by A.R.A.R.@

խաչի բևեռեցաւ, ջերմեռանդաբար Աղօթեաց առ Հայր՝ ասելով, Հա՛յր թող սոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն (Ղուկ. 23. 34): որպէս զի և մեք յօժարութեամբ Աղօթիցեմք վասն նոցա, որք հալածեն՝ նախատեն՝ և չարչարեն զմեզ (Ինչպէս որ Ստեփաննոս նախավկային ՝ Եւ ծունր եդեալ աղաղակեաց 'ի ձայն բարձր Տէ՛ր մի համարիր դոցա զայս մեղս. և զայս իբրև ասաց՝ ննջեաց. Գործ. 7. 59. Մատթ. 5. 44.)

Արդ՝ յետ գիտելոյ և մտածելոյ մեր զայս ամենայն, պարտիմք գիտել և զայս. զի Տէրն որ կրեաց զայնքան ծայրագոյնեղ տանջանս և զցաւս, ոչ միայն վասն այսորիկ կրեաց, զի զՀայր իւր ընդ մարդկայնոյ բնութեան հաշտեցուսցէ, և զդուռն Արքայութեան, որ ընդդէմ մեր փակեցեալ էր, բացցէ. այլ նաև վասն այսորիկ, զի ամենայն հաւատացեալք իւր ուսանիցին հետևիլ վարուց իւրոց, և զգենուլ զվարս իւր: Քանզի որք միանգամ 'ի Քրիստոս Մկրտիլով զգեցեալք են զՔրիստոս, Գաղատացւոց. 3. 27. պարտաւորին զգենուլ զվարս նորա. որպէս զի այնու ճշմարիտ խորհրդական անդամք Քրիստոսի եղեալք արժանաւորեսցին մտանել ընդ բացեալ դուռն Արքայութեան Երկնից: Ասացի հետևիլ վարուցն Քրիստոսի, և զգենուլ զվարս նորա. քանզի թէպէտ ուսանելով և գիտելով մեր զվարս Քրիստոսի, ճանապարհն Արքայութեան Երկնից ուսեալ և գիտացեալ լինի 'ի մեզ, սակայն ուսանելով և գիտելով մեր զճանապարհն Արքայութեան Երկնից, ոչ տրի մեզ մուտն Արքայութեան Երկնից, եթէ ոչ 'ի գործ ածիցեմք զուսեալսն մեր, որով և եթ լինիմք հետևօղք Քրիստոսի՝ և զգեցօղք վարուց նորա: Եւ առ այս վերահայի նաև այն բան Տեառն մերոյ՝ զոր ասաց. Ես եմ ճանապարհ ճշմարտութիւն և կեանք (ոչ ոք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինև.) Յօհաննու. 14. 6. Քանզի 'ի ձեռն վարուց իւրոց եղև մեզ ճանապարհ. և 'ի ձեռն բանից և Վարդապետութեան իւրոյ՝ ճշմարտութիւն. որպէս զի որք ընդ այն ճանապարհ գնացեալ, զնոյն ճշմարտութիւն ընդգրկիցեն, ընդունիցին զկեանն երանական:

Դարձեալ՝ բոլոր իմաստութիւն, առաքինութիւն, կատարելութիւն, և երջանկութիւն Քրիստոնէականի կացութեան մերոյ կայանայ 'ի սմին, զի հանապազօր զփրկաւէտ պտուղս բանից և գործոց և ամենայնէղ վշտաց և չարչարանացն Քրիստոսի՝ 'ի պարտիզէ Աւետարանին՝ ուսանելով և մտածելով վերաքաղիցեմք; և հանապազ 'ի գործ ածելով զուսեալսն, զվերաքաղեցեալսն ճաշակիցիմք. զորս եթէ ճաշիցեմք՝ հակադարձաբար և ինքն Քրիստոս իջանէ 'ի հոգիս մեր (Յօհ. 14. 23. Եփե. 3. 17.) որպէս 'ի պարտէզ իւր առ 'ի քաղել անտի զպտուղս ծառոց իւրոց՝ ըստ այնմ. Երգեց. 5. 1. Իջցէ եղբօրորդին իմ 'ի պարտէզ իւր. և կերիցէ զպտուղս ծառոց իւրոց: Արդ՝ ծառքն Քրիստոսի նախապէս տնկեցեալք են 'ի պարտիզի Աւետարանի. որոց գումարտակքն են .. (չորեքեանս) այսոքիկ, ա̃ծ լինելն Քրիստոսի փրկիչ մեր, և Վարդապետ և Օրինակ (և Դատաւոր մեր.): Վասն

digitised by A.R.A.R.@

զԱւետարանն Քրիստոսի, այնու զի ճառէ (զՄարմնաւորութիւնն և) զգործոց, և զչարչարանացն Քրիստոսի՝ ցուցանէ զնա Փրկիչ (և Դատաւոր) մեր. և այնու զի ճառէ զԲանից, և զՎարդապետութեանց նորա, ցուցանէ զնա Վարդապետ մեր. իսկ այնու զի պատմէ զկացութենէ և զվարուց նորա՝ ցուցանէ զնա օրինակ (և Դատաւոր) մեր: Այսոսի բովանդակութիւն Աւետարանին Քրիստոսի ցուցանէ մեզ զՔրիստոս եկեալ յաշխարհ վասն ասացելոց... (Զորոյն). այսինքն առ 'ի լինել մեզ Փրկիչ Վարդապետ և Օրինակ (և Դատաւոր). վասն որոյ պիտոյ է մեզ նախ քաղել 'ի պարտիզէ Աւետարանին զպտուղս այսպիսի ծառոց, և ճաշակել զայնս՝ հետևելով հեղինակութեան փրկողին՝ խրատու Վարդապետին՝ և նմանութեան Օրինակին (և ահեղութեան Դատաւորին). որպէս զի այնպիսի ճաշակեցեալք պտուղք անկեցեալք լինիցին 'ի պարտիզի հոգւոյ մերոյ, և արմատացեալք բողբոջիցին. և շնորհօքն Քրիստոսի ոռոգեցեալք և աճեցեալք՝ լինիցին ծառք, և տայցեն զքաղցրահամ պտուղս բազմազանից կատարելութեանց առաքինականաց. որով և մեք համարձակեալ՝ հրաւիրիցեմք զՔրիստոս միւսանգամ 'ի հոգիս մեր՝ (Յայտ. 3.20.) ասելով. իջցէ եղբօրն իմ 'ի պարտէզ իւր. այսինքն 'ի հոգիս մեր, զորս փրկելով արար իւր. և կերիցէ զպտուղս ծառոց իւրոց. այսինքն զՀնազանդութիւն մերոց կամաց որ առ ԱԾ. զխոնարհութիւն հոգւոյ. զմաքրութիւն սրտի. զսէրն ԱԾ, և Ընկերին, նաև Թշնամեաց. զհամբերութիւն վշտաց. զխոտումն ամենայն Աշխարհական ունայնութեանց ||, և զտենչ Երկնային և յաւիտենական փառաց: || 1. Յով. 2.15.16.

Յասացելոցս յայտ է՝ թէ ոչ միայն զայսոսիկ, այլ նաև զայլս բազումս ազգին նմանեալ պտուղս բարեհամս բուսուցանեն 'ի հոգիս մեր ամենասուրբ Վարքն և Վարդապետութիւնքն Քրիստոսի. որ ընդ իջանելն 'ի պարտէզ հոգւոց մերոց՝ թէպէտ ուտէ զպտուղս ծառոց իւրոց, բայց այնու զի 'ի պարտիզի հոգւոց մերոց ուտէ, զհոգիս մեր յաւիտենական կենօք երանացուցանէ: Արդ՝ զմեզ՝ և զամենայն բարեմիտ ընթերցօղս արժանաւորս արասցէ ինքն միւսանգամ Քրիստոս. որ է օրհնեալ 'ի յամենայն յաւիտեանս. ամէն: Ձեռամբ Ազնուականութեան

Նուաստ ծառայ անպիտան.

Մխիթար Վարդապետ Սեբաստացեան Աբ

տես 'Ի Մեկնութիւն Մատթէոսի Աւետարանին. 1737. 'ի Վենետիկ.

Եւ որ ոք կամի՝ զի գիտիցէ զանձնէ իւրմէ՝ արդեօք իցէ դատարկաբան՝ թէ ոչ. և հաճի զի 'ի դատարկաբանութեանց յետս քաշիցէ զինքն, նախ պիտոյէ մտածել թէ զինչ է զոր խօսի, ընդ է՞ր խօսի. և ընդ ում, և առ ի՞նչ վախճան խօսի: և մինչ մտածէ՝ իսկոյն ճանաչէ զինքն թէ արդեօք իցէ դատարկաբան՝ կամ ոչ:

Երկրորդ, պարտի բազմիցս առաջադրել 'ինքնում ասուր խօսիլ զայնց միայն՝ որք 'ի փառս ԱԾ վերաբերիլ կարեն: Երրորդ՝

digitised by A.R.A.R.@

պիտոյ է լինիլ սակաւախօս: Չորրորդ, քննել զխիղճ մտացն ստէպ, թէ որքանիցս դատարկաբանեալ է. և ըստ այնմ ցաւելով զայնց՝ առաջադրել զգուշանալ 'ի դատարկաբանելոյ: Երես. 287.

Դարձեալ. է և այլ մեկնութիւն. զի ո՛ և իցէ օգտակար իր, և կամ բարեկամ, և ազգակից մեր, մինչ սոսկացեն զմեզ առ մեղս, պարտիմք հատանել զայնս. այսինքն հրաժարիլ 'ի նոցանէ. զի ո՛չ է պարտ վասն իրիք օգտութեան գործել զչար, և կամ վասն սիրոյ բարեկամին առնել զմեղս:

Բայց զգուշանալի է, զի մի՛ գուցէ մեղանչելն 'ի մէնջ իցէ, և զբարեկամն, և կամ զօգտակար բարին առիթ վարկելով՝ հատանիցեմք զայնս. և այնու 'ի յայլ նոր տեսակ մեղաց անկանիցիմք: Քանզի բազմիցս մարդն անհամբերութեամբ իւրով գործէ զչարն. և առ 'ի ջատագովել զանձն իւր՝ դնէ զայլ ոք պատճառ: Երես. 99.

Սուտ Մարգարէ վասն այնորիկ ասէ, զի նոքա որք դիւրացուցանեն զճանապարհս Արքայութեան. և կամ ըստ այնմ մեկնեն զՍուրբ Գիրս ըստ որում մարմինն՝ և արիւնն պահանջէ ||, այնպիսիքն են սուտ մեկնիչք: Քանզի Քրիստոս զոչ իմն ճանապարհ համաձայնող մարմնոյ՝ և արեան եցոյց մեզ. այլ միշտ զհամաձայնողս բանի: Աստի սուտ մեկնիչք են այնոքիկ, որք զպահս, . . և զճնշումն մարմնոյ (ինչպէս որ Սուրբ Աւետարանումն գրածէ, այն) ո՛չինչ համարին: || Մատթ. 7.13.

Սուտ մեկնիչք են այնոքիկ, որք զպահումն ողջախոհութեան, և կուսութեան ընդ վայր համարին: Եւ վերջապէս սուտ մեկնիչք են այնոքիկ, որք ջանան տալ զմիջոց ուտելոյ՝ և ըմպելոյ զեղխաբար, և հեշտանալ 'ի փափկութիւնս անխտրաբար. որոնել զփառս՝ և զպատիւս անձարձակաբար. և զկամս մարմնոյ կատարել 'ի ձեռն կեղծեալ գիտութեան բարւոյն անզգամաբար: Երես. 151.

Դպիրքն և փարիսեցիքն երթային, զի 'ի գործոց նորին զպակասութիւն ինչ գտեալ՝ ամբաստանիցեն զնա, և այսպն առնիցեն: Որպէս և այժմ թէպէտ իցեն բազումք քրիստոնեայք ... բայց ո՛չ ամենեքեանք բժշկին, կամ լուսաւորին 'ի Քրիստոսէ. վասն զի ըստ բարութեան հետևութեան, ո՛չ ունին զբարի վախճան հետևման. և ըստ անուան քրիստոնէութեան, ո՛չ ունին զբարի վախճան և զգործ՝ որ յարմարապէս վայելիցէ քրիստոնէութեան: Երես. 71.

Ըստ այսմ օրինակի են և նոքա, որք գնան 'ի լսել զքարոզս՝ և զբանս Աստուածայինս, և ցուցանեն զինքեանս ցանկացողս բանից քարոզչին, բայց ո՛չ ունին զդիտաւորութիւն ուղղելոյ զվարս իւրեանց 'ի ձեռն բանից Աստուածայնոց. այլ միայն զայս կամին՝ զի լսելով զոմանս նորագոյն ոճս ասութեանց, և տեսանելով զյարմարութիւնս շարժմանց և եղանակաց քարոզչին՝ զբօսնուցուն: Վասն որոյ և ո՛չ երբէք լուսաւորին այնպիսիքն 'ի բանից Աստուածայնոց. քանզի Քրիստոս, որպէս զոչ իմն պատասխանի ետ Հերովդէի, (Ղուկ. 23.9.) նոյնպէս և ո՛չ տայ զշնորհ ինչ այնպիսեացն. որով բանքն Աստուածայինք օգտիցեն նոցա: Երես. 829.

digitised by A.R.A.R.@

Եւ Հանգոյն Պիղատոսի են նախ նոքա, որք 'ի խոստովանութեան, և կամ արտաքոյ խոստովանութեան՝ բերանով միայն ասեն մեղայ, և այնու իբրու թէ զձեռս իւրեանց լուանան. բայց 'ի ներքուստ զկամս իւրեանց ոչ յետս դարձուցանելով 'ի մեղաց՝ և կամ 'ի յաւութէ մեղացն՝ միշտ շաղախեցեալք 'ի նոյն մեղս ։

Երկրորդ՝ Նմանին Պիղատոսի նաև այնոքիկ յիմարք, որք համարձակին գործել զչար ինչ, կամ զմեղս՝ այնու՝ զի այլ ոք ասէ՝ յիմ վերայ լիցի մեղքդ այդ. և համարին թէ նոյնն՝ եթէ իցէ մեղք՝ միայն նորա է, որ ասաց՝ յիմ վերայ լիցի, և ոչ է վասն իւրեանց մեղք ինչ. որէ մեծագոյն մոլորութիւն ։ վասն զի 'ի յայսպիսի դիպուածս՝ եթէ գործն իցէ մեղք ։ իւրաքանչիւրքն անօրինին, և մեղանչեն ։ երես. 837. 'ի Մեկնութիւն Մատթէոսի Աւետարանին. 1737. 'ի Վենետիկ.

Մինչ դեռ Նա ընդ ժողովուրդսն խօսէր. ահա Մայր Նորա և Եղբարք Նորա կային արտաքոյ. և խնդրէին խօսիլ ընդ Նմա ։ Մատ. 12.46 ։

Մինչդեռ Նա խօսէր. և այլն ։ Թ. Մինչդեռ Յիսուս Բացատրէր և յայտնէր ժողովրդեան զՃշմարտ. ուր պատահին Տարբերս. որ յայտարարութենէ պատնայ յանօրէնութեան ։ . . . Ազգականք էնէալք էին և խնդրէին խօսիլ ընդ Նմա. այսինքն. գուցէ յօժարէին ածել զնա 'ի Նազարէթ. զի յայտնած Հէէալք խորհէին ապանանել զնա՝ որպէս Մարկոս երևի վկայել. 3. 21 ։ Ուրեմն Որդին առաւել ուսուցանելով մեզ. զի արտ ուէրն Ազգականաց. նամ և Եղբօրն Նեղուելեանց Նարեն արգելել զմեզ 'ի պաշտմանէ և 'ի ծառայութենէ Աստուծոյ. Ճառէ 'ի Յետն Աւետարանչին. Թէ որպէս Մայրն և Ազգականք Յիսուսի խնդրէին զնա. և նամէին արգելել 'ի խօսելոյ զժողովրդեան խնայելով 'ի նա յաղագս Տարփանաց Հոգւոց ։ Ուրեմն զգուշ լեր. զի մի երբէք ուէրն Բարեկամաց. և նամ Ազգականաց նամ հեղութիւն Տարփոյ արգելցէ զքեզ 'ի Աստուածպաշտութենէ ։

Մասն Երկրորդ

Նա Պատասխանի ետ այնմիկ որ ասացն ցնա, և ասէ. ո՞վ (է իմ Մայր կամ ո՞վ) են իմ եղբարք ։ և ձգեալ զձեռն իւր Յաշակերտսն՝ ասէ. ահա Մայր իմ և Եղբարք իմ. (Մատ. 12. 48.)

Ո՞վ են իմ եղբարք. այսինքն. գոն ինձ երկու Ազգ Եղբարց ։ Յետեւ զՁեռն իւր Յաշակերտսն. այսինքն. Յետ այնր յայտնեաց զի Աշակերտք Նորա էին Նմա և Մօր և Եղբօր չափ վասն հոգևոր Ազգակցութեանն. զոր ունէին ընդ Նմա շնորհիւ Հոգւոյն Սրբոյ ։ և այս Ազգականութիւնս աղնուագոյն է քան զմարմնաւորն. Մինչ Մայրութեանն և Ազգակցութիւնն Մարմնոյ (Քրիստոս) Աստուածածնին՝ ցածագոյն և փոքրագոյն երևէր . . . վկայութեամբ Տն Մերոյ Յիսուսի Քրիստոսի. զի յասոր միում Եղև մինչ դեռ խօսէր Քրիստոս և փառաւորէր. յայն էբարձ ձէն մի 'ի ժողովրդենէ անտի և ասէ Երանի որովայնին որ կրեացն զքեզ. և ստեանցն. որք դիեցուցին զքեզ. և Քրիստոս ասէ. Նա Երանի այնոցիկ է.

digitised by A.R.A.R.@

որք լսեն զբանն Աստուծոյ. և պահեն զնա. այսինքն. Երանի՜ երանելի է Մայր իմ. զի զիս կրեաց յարգանդին իւրն ամիս. ծնաւ զիս. և դիեցոյց: (Ղուկ. 1. 42:) Բայց նա և առաւել երանելի է. որ զՔարոզութիւնս իմ լսէ. և զՊատուիրանս իմ կատարէ: Որպէս Քրիստոս ուսուցանելով մեզ. զի Թէպէտ պարտիցէ մեզ խնամել ՚ի դէպս մարմնաւոր ազգականաց. Բայց առաւել առաւել պարտիմք խնամել և պարապել ՚ի իրս. որք պատկանին փառաց Աստուծոյ և հոգևոր օգտիցն ընկերաց մերոց. զի հոգևոր հոգք առաւելագոյնք են քան զհոգս մարմնաւորս: Յետեւ Յիսուսի զհետն իւր Յաշակերտսն ասաց. ահա մայր իմ. և եղբարք իմ. այսինքն. ահա հոգւամ և պաշտելալ եմ ՚ի դէպս մօր և եղբարց իմոց: զի՞ արդ կարեմ մերժել ՚ի նոցանէ: դեռ ուրեմն հոգի իմ եթէ գիտիցես զանազանել զպարտս քո. Յետևելով ՚ի բաց զմտաւ և յանձն առնելով և հոգալով զայլս:

Մասն Երրորդ

*Որ առնիցէ զկամս Հօր իմոյ որ Յերկինս է. Նա է իմ Եղբայր և Քոյր և Մայր.* (Մատ. 12. 50.)

Եղբայր քս՛ի համարի այն. որ շնորհիւ Որդւոյն Սիրոյ ուսանիցէ Ա՛Ծ: իսկ Մայր Յս՛ի համարի այն. որ ծնանի զՔս ՚ի յայլս խրատիւք կամ օրինակօք բարի առելւոյն քրիստոսի. որ ասէ այսպէս. ամէն ասեմ ձեզ. որովհետև արարէք միում եղբարցս այսոցիկ փոքրկանց. ինձ արարէք (Մատթ. 25.40.) ուրեմն քս՛ ուսուցանելով մեզ. ո՞րքան սիրելիք և ընտանիք և մերձաւորք իցեն նմա. որք կատարեն զկամս Հօր իւրոյ. կամ քարոզելով և յորդորելով ածեն զայլս առ ՚ի կատարել զկամս Հօր իւրոյ: ասէ զի դոքա իցեն եղբարք նորա. զի ցուցանեն զինքեանս որդիս Ա՛Ծ: իսկ և ասէ զի ոմանք իցեն նորա Մայր հոգևոր. որ խրատիւք դարձուցանեն զայլս. զի յայնժամ ծնանին զՔս հաւատով. որ շնորհի ՚ի ձեռն քարոզութեան: իմա ուրեմն անձն իմ ո՞րքան օգտակար և պատուաւոր իցէ քեզ առնել ըլ կամս Ա՛Ծ. և խրատել զայլս. զի նոքա և առնիցեն զնա: տես երես. 369—372. ՚ի Գիրք Պետրոս Ոսկեբերանի Շարադրեալ համառօտ իմն Մեկնութիւն Սրբոյ Աւետարանի Տն՛ մերոյ Յս՛ի քս՛ի [illegible] տպեալ. Յամի Տն՛.1714.

*Որ ո՛չ բառնա զխաչ իւր. և գայ զկնի իմ, ո՛չ կարէ իմ Աշակերտ լինել.* Ղու. 14. 27. Նաև տես ՚ի վերոյ Մեկնութեանն երես. 264.

Խաչն դնի փոխանակ ամենից անձկութեանց. փորձանաց և վշտաց. որք կարեն պատահել երկրաւորականութեանս մարդոյ. Թէ ՚ի ժամանակս փորձութեանն Ա՛Ծ. Թէ ՚ի չարութենէ մարդկան. Թէ ՚ի նախանձու սատանայի. կամ և ՚ի տկարութենէ և ՚ի ծանրութենէ Բնութեանն: Գնալ զկնի Քս՛ի. և համաձայնել խրատուց և վարուց նորա. նոյն համարի: ուրեմն ո՛ ոք կամի աշակերտել Յս՛ի. ո՛չ Թէ միայն հարկէ նմա ատել զհայր և զմայր. և զանձն ևս իւր: այլ և պարտէ նմա յանձն առնուլ զամ անձկութիւնս և զնեղութիւնս. և զհալածանս. որք կարեն պատահել նմա հետևելով վարուց նորա. այսինքն. հետևելով խոնարհութեան և հեզութեան և բարի նախանձու Յս՛ի: Քննեա ուրեմն զքեզ և տես եթէ համարձակ կարես անսասանել և համբերել

digitised by A.R.A.R.@

աղաչելոց զՔեզ : և յօժարութեամբ բառնալ զխաչն նորա :

Եհարց եղբայր ումն ցՀայրն Անտոնիոս և ասէ : զինչ պահեցից զի հաճոյ եղէց ԱՅ : Պատասխանի ետ ծերն և ասէ . . . ուրեք երթիցես զԱԾ ունիցիս ամենայնիւ առաջի աչաց քոց ‖: Եւ զինչ և գործեսցես ունիցիս վկայութիւն ՚ի Սուրբ գրոց †: երես . 9. Հարանց Վարք տպեալ ՚ի Շօշ որէ Սպահան զՀանապատն Նոր Ջուղայ.

‖ Սաղ. 14.4: 35.2: † Սուրբ Գիրքն Հին և Նոր կտակարանն.

Դարձեալ . ոչ ումեք հնազանդելի է ընդդէմ ԱԾային Պատուիրանաց : Սաստի եթէ ՚ի Պապէն առաքիցի կամ գրեսցի հրաման ինչ, որ իցէ ընդդէմ ԱԾային Պատուիրանաց, ամենևին արհամարհելի լինիւր. որպէս ասի ՚ի Վճիռս : Գիրք Օրինակաց և Նմանութեանց, երես. 896:

Ժողովքն վասն այնորիկ լինին զի զբանն Քրիստոսի անշրջելի պահի- ցեն . իսկ այն ժողովքն որ զբան ինչ յաւելացուցանեն հակառակ բանին ՔՍի՝ ոչ են ընդունելի : Վէմ — Հաւատոյ . երես . 324.

Մի յաւելուցուք ինչ ՚ի բանն՝ զոր ես պատուիրեմ ձեզ, և մի՛ հատանիցէք ՚ի նմանէ: պահեսջիք զհրամանս ՏՆ ԱՅ մերոյ զոր ես պատուիրեմ ձեզ: Աչք ձեր տեսին՝ զոր ինչ արար Տէր ընդ Բէլփեգովր. զի զամ մարդ որ չոգաւ զհետ Բէլփեգովրայ՝ սատակեաց զնա Տէր ԱԾ մեր ՚ի ձէնջ:

Եւ ծանիջիք այսօր, եթէ ոչ վասն որդւոց քոց՝ որք ոչ գիտեն և ոչ տեսին զխրատ Տեառն ԱՅ քոյ. և զմեծամեծս նորա, զձեռն հզօր, և զբազուկ բարձր. զնշանս նորա և զարուեստս՝ զոր արար ՚ի մէջ Եգիպտոսի, ՚ի փարաւոն Արքայ Եգիպտացւոց, և յամ Երկիր նորա: Եւ զորինչ արար ընդ զօրսն Եգիպտացւոց. զկառս նոցա և զերիվարս իւրեանց. որպէս ծածկեաց զջուրս կարմիր ծովուն ՚ի վերայ երեսաց նոցա, ՚ի յարձակել նոցա զկնի մեր. կորոյս զնոսա Տէր մինչև ցայսօր ժամանակի: և զոր ինչ արար ձեզ յանապատի անդ, մինչև եկիք ՚ի տեղիս յայս: Եւ զորինչ արար ընդ Դաթան և ընդ Աբիրոն՝ ընդ որդիս Եղիաբու որդւոյ Ռուբենի որոց բացեալ Երկիր զբերան իւր եկուլ զնոսա, և զտունս նոցա, և զվրանս նոցա. և զամ ինչս նոցա ընդ նոսա ՚ի միջոյ ամ Իսրայէլի (Թիւք. 16.32.): զի ձեր իսկ աչք տեսին զամ զգործս ՏՆ զմեծամեծս զոր արար ՚ի ձեզ մինչև ցայսօր: Եւ պահեցէք զամ Պատուիրանս նորա զոր ես պատուիրեմ ձեզ այսօր զի կեցջիք և բազմապատիկք լինիցիք. և մտանիցէք ժառանգիցէք զԵրկիրն, յոր դուք անցանէք ընդ Յորդանան ժառանգել զնա:

Ամենայն բանի զոր ես պատուիրեմ քեզ այսօր՝ զգուշանայցես առնելոյ. մի՛ յաւելուցուս ՚ի նա, և մի՛ հատանիցես ՚ի նմանէ:

Եւ գրեաց Մովսէս զամ բանս Օրինացս այսոցիկ ՚ի մատենի. և ետ զայն ցՔահանայսն ցորդիսն Ղևեայ, որ բառնային զՏապանակ ուխտին Տեառն, և ցծերս որդւոցն Իսրայէլի: Եւ պատուիրեաց նոցա Մովսէս յաւուր յայնմիկ և ասէ: Եօ ՚ի գումարել ամ Իսրայէլի

digitised by A.R.A.R.@

յանդիման լինելոյ առաջի Տեառն ԱՅ քոյ, ՝ի տեղւոջն զոր ընտրեսցէ Տէր՝ ընթեռնուցուք զՕրէնս զայս առաջի իսրայէլի յականջս նոցա, եկեղեցացուցեալ զժողովուրդն, զարս եւ զկանայս եւ զմանկունս, եւ զեկն որ ՝ի քաղաքս ձեր. զի լուիցեն, եւ ուսանիցին երկնչել ՝ի Տեառնէ ԱՅ մերմէ. եւ ուսցին առնել զամ պատգամս Օրինացս այսոցիկ: Եւ որդիք նոցա որ ոչ գիտիցեն, լուիցեն եւ ուսցին երկնչել ՝ի Տեառնէ ԱՅ մերմէ զամ աւուրս՝ կեա: Եւ իբրեւ կատարեաց Մովսէս գրել զամ զբանս Օրինացս այսոցիկ ՝ի մատենի մինչեւ ՝ի սպառ: Եւ պատուիրեաց Ղեւտացւոցն որ կրէին զՏապանակ ուխտին Տեառն. ասէ: Առեալ զմատեան Օրինացդ այդորիկ՝ դնիջիք ՝ի կողմանէ Տապանակի ուխտին Տեառն ԱՅ մերոյ. եւ եղիցի անդ ընդ քեզ ՝ի վկայութիւն: 2. Օրի. 4.2.3:11.2—8: 12.32: 31. 9—13. 24. . 26:

Մի յաւելեցուս ՝ի բանս նորա՝ զի մի՛ յանդիմանեսցէ զքեզ, եւ սուտ լինիցիս: Առակ. 30.6.

Եւ վախճան բանիս՝ զամ ինչ լուր. յԱՅ երկիր՝ եւ զՊատուիրանս նորա պահեա. զի այս է մարդն ամենեւին: Ժողով. 12.13.

Զուր տեղն են պաշտում ինձ. մարդկանց պատուիրած վարդապետութիւններըն են սովորցնում: Մատթէ. 15.9.

Քննեցէք Գրքերն. որ դուք կարծումէք նորանցով ունիք յաւիտենական կեանքն՝ եւ հենց նորանք են, որ ինձ համար վկայումեն՝ նորանցով կարծումէք կեանքն ունիք: Յօհան. 5.39.

Ինչուոր սորանք աւելի ազնիւ անձինք էին՝ քան նորանք՝ որ Թեսաղոնիկէումն էին. որ ԱՅ խօսքըն ամենն յօժարութենով ընդունեցին միշտ Գրքերն քննումէին, թէ էս բանս էսպէս լինի: Գործք.17.11.

Բայց թէոր մենք կամ Երկնքիցն եկած Հրեշտակ Աւետարանէ ձեզ աւելի քանթէ էն որ մենք Աւետարանեցինք ձեզ՝ նա նզոված լինի. Գաղատ. 1.8.

Որ տղայութենիցդ Սուրբ Գրքերն գիտումես, որ նորանք կարող են քեզ իմաստուն անել փրկութեան համար՝ էն հաւատքի ձեռովն՝ որ ՔՍ ՅՍումն է: Ամեն Գրքերն Աստուածաշունչ եւ օգտակար են Վարդապետութեան, եւ յանդիմանութեան, եւ շինակելոյ եւ արդարութեան խրատ տալոյ համար: Որ ԱՅ Մարդն կատարեալ լինի՝ ամեն բարի գործքերի մէջ հաստատված: 2. Տիմ. 3.15. . 17:

## Եզեկիէլ. Գլ. ԺԸ.

1. Եւ եղեւ բան Տն առ իս եւ ասէ: 2. Որդի մարդոյ՝ զի՞նչ է ձեզ առակդ այդ՝ ՝ի մէջ որդւոցդ Իսրայէլի զոր ասէք. Հարք կերան ազոխ, եւ որդւոց ատամունք առոյն: 3. Կենդանի եմ ես՝ ասէ Ադոնայի Տէր, եթէ լինիցի առակդ այդ որ ասէ ՝ի մէջ Իսրայէլի: 4. Զի ամ անձինք իմ են. որպէս անձն հօր՝ նոյնպէս եւ անձն որդւոյ: անձն որ մեղիցէ՝ նոյն եւ մեռցի: 5. Այլ մարդն որ արդար իցէ, եւ առնիցէ զիրաւունս եւ զարդարութիւն: 6. ՝ի վր լերանց զոհեալ՝ ոչ ուտիցէ. եւ զաչս իւր ՝ի կռոց

digitised by A.R.A.R.@

[illegible]
[illegible] 7. [illegible]
[illegible]
[illegible] 8. [illegible]
[illegible]
[illegible] 9.
[illegible]
[illegible] 10. [illegible]
[illegible] 11. [illegible]
[illegible]
[illegible] 12. [illegible]
[illegible]
[illegible] 13. [illegible]
[illegible]
[illegible] 14.
[illegible]
[illegible] 15. [illegible]
[illegible]
[illegible] 16. [illegible]
[illegible]
17. [illegible]
[illegible]
[illegible] 18. [illegible]
[illegible]
[illegible] 19.
[illegible]
[illegible]
[illegible] 20. [illegible]
[illegible]
[illegible]
21. [illegible]
[illegible]
[illegible] 22. [illegible]
[illegible]
[illegible] 23. [illegible]
[illegible] 24. [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
25. [illegible]
[illegible]

digitised by A.R.A.R.@

չէն ախող: 26. Եւ 'ի դառնալ արդարոյն յարդարութենէ իւրմէ, և առնել զանիրաւութիւն մեռցի յանօրէնութեն զոր գործեաց: 27. Եւ 'ի դառնալ անօրինին յանօրէնութէ իւրմէ զոր արար, և առնիցէ իրաւունս և արդարութի, ինքն զանձն իւր ապրեցոյց: 28. զի եսես և դարձաւ յամ ամպարշտութեց իւրոց զոր արար. կենդանի կեցցէ և մի՛ մեռցի: 29. Եւ ասեն տունն Իսրայէլի ոչ ուղիղ է ճանապարհ Տն: Մի՛ թէ իմ ճանապարհ չիցէ ուղիղ տունդ Իսրայէլի, ոչ ապաքէն ձեր ճանապարհք չեն ուղիղ: 30. Վն այսորիկ զիւրաքանչիւրոք ըստ իւրում ճանապարհի դատեցայց զտունդ Իսրայէլի. ասէ Ադոնայի Տէր: Դարձջիք և դարձարուք յամ ամպարշտութեց ձերոց. և ոչ լինիցի ձեզ 'ի տանջանս անիրաւութեան: 31. Ընկեցէք յանձանց ձերոց զամ ամպարշտութիւ ձեր զոր ամպարշտեցայք յիս: և արարէք ձեզ սիրտ նոր, և ոգի նոր. և արարէք զամ պատուիրանս իմ: և ընդէ՞ր մեռանիք տունդ Իսրայէլի, ասէ Տէր: 32. Զի ոչ կամիմ զմահ մեռանելոյն՝ ասէ Ադոնայի Տէր. այլ զի դարձցի 'ի ճանապարհաց իւրոց չարեաց, և կեցուսցէ զանձն իւր: արդ՝ եկայք դարձարուք՝ և կեցէք:

Ա։ Ամենայն Դասս քահանայից: Մարգարէութիւն Եզեկիէլի

Գլ. ԼԳ: 1. Եւ եղև բան Տն առ իս՝ և ասէ: 2. Որդի մարդոյ՝ խօսեաց ընդ որդիս ժողովրդեան քո, և ասասցես ցնոսա: Երկիր մի յորոյ վր ածիցեմ ես սուր. և առնուցուն Ազգք Երկրին այր մի յէնքեանց, և կացուսցեն զնա ԴէՏ: 3. և տեսանիցէ սուր եկեալ յԵրկիրն, և փող հարկանիցէ՝ և ազդ առնիցէ ժողովրդեանն: 4. Եւ լուեալ լսիցէ զձայն փողոյն. և ոչ զգուշասցի. և հասանիցէ սուրն՝ և ըմբռնեսցէ զնա, արիւն նորա 'ի գլուխ նորին եղիցի: 5. զի զձայն լուազփողոյն և ոչ զգուշացաւ, արիւն նորա 'ի վերայ նորին եղիցի. և նա՝ զի զգուշացոյց, զանձն իւր ապրեցոյց: 6. Եւ եթէ տեսանիցէ ԴէՏն զսուրն եկեալ՝ և ոչ նշանակիցէ փողով, և Ազգն ոչ զգուշանայցէ. և եկեալ սուրն ըմբռնիցէ 'ի նոցանէ անձն մի. նա վն անօրէնութեան իւրում ըմբռնեցաւ, և զարիւն նորա 'ի ձեռաց ԴիտԻն խնդրեցից: 7. Եւ դու որդի մարդոյ, ԴէՏ կացուցի զքեզ տանդ Իսրայէլի, և լուիցես բանից բերանոյ իմոյ, և զգուշացուսջիր զնս եթէ յինէն: 8. Յասել իմ ցմեղաւորն թէ մահու մեռանիցիս. և դու ոչ խօսիցիս զգուշացուցանել զամպարիշտն 'ի ճանապարհէ իւրմէ. ինքն անօրէնն յանօրէնութեան իւրում մեռցի, և զարիւն նորա 'ի ձեռաց քոց խնդրեցից: 9. Ապա թէ դու յառաջագոյն զգուշացուցես ամպարշտին զճանապարհս իւր՝ դառնալ նմա 'ի նմանէ, և ոչ դարձցի 'ի ճանապարհէ իւրմէ. ինքն յամպարշտութեան իւրում մեռցի, և դու զանձն քո ապրեցուցես: 10. Եւ դու որդի մարդոյ՝ ասա տանդ Իսրայէլի: այսպէս խօսեցարուք և ասացէք, եթէ մոլորութիւնք մեր և անօրէնութիք մեր 'ի մեզ են, և մեք 'ի նոսին մաշիմք. և զիա՞րդ ապրեսցուք: 11. Ասա ցնս. կենդանի եմ ես՝ ասէ Ադոնայի Տէր. ոչ կամիմ զմահ ամպարշտին, որպէս զդառնալ ամպարշտին 'ի չար ճանապարհէ իւրմէ՝ և կեալ: դառնալով դարձջիք 'ի ճանապարհաց ձերոց չարաց. և ընդէ՞ր մեռանիք տունդ Իսրայէլի: 12. Եւ

digitised by A.R.A.R.@

դու որդի մարդոյ՝ ասա ցորդիս ժողովրդեան քոյ: արդարութիւն արդարոյն
ոչ փրկեսցէ զնա՝ յաւուր յորում մոլորեսցի. և անօրէնութիւն անօրինին
ոչ չարչարեսցէ զնա՝ յաւուր յորում դառնայցէ յա̅մ անօրէնութենէ իւրմէ:
Եւ արդարն ոչ կարասցէ ապրել յաւուր մեղաց իւրոց: 13. յասել ինձ
ցարդարն՝ թէ կելով կեցցես, և նա յուսասցի յարդարութիւն իւր՝
առնիցէ անօրէնութիւն. ա̅մ արդարութիւնք նորա մի՛ յիշեսցին, այլ
անօրէնութեամբն իւրով զոր արար՝ նովին մեռցի: 14. Եւ յասել ինձ
ցամպարիշտն թէ մահու մեռցի. և դարձցի ՚ի մեղաց իւրոց, և արասցէ
իրաւունս և արդարութիւն: 15. և զգրաւ պարտապանին ՚ի բաց տացէ,
և զյափշտակութիւնն դարձուսցէ, ՚ի հրամանս կենաց գնասցէ չառնել
զանիրաւութիւն. կելով կեցցէ՝ և մի՛ մեռցի: 16. ա̅մ մեղք իւր զոր մեղաւ՝
մի՛ յիշեսցին. զի իրաւունս և արդարութիւն արար, նոքիմբք կեցցէ: 17. Եւ
ասեն որդիք ժողովրդեան քոյ. ոչ ուղիղ են ճանապարհք Տ̅ն. նա՛ նոցա
ճանապարհն չէ ուղիղ: 18. ՚ի դառնալն արդարոյն յարդարութենէ իւրմէ
և առնել անիրաւութիւն՝ նոքիմբք մեռցի: 19. Եւ ՚ի դառնալ մեղաւորին
յանօրէնութենէ իւրմէ՝ և առնիցէ իրաւունս և արդարութիւն՝ նոքիմբք
կեցցէ: 20. Եւ զայս զոր ասացէքն թէ ոչ ուղիղ է ճանապարհ Տ̅ն:
զիւրաքանչիւրոք ըստ ճանապարհաց իւրոց դատեցայց զձեզ տունդ Իսրայէլի:

21. Եւ եղև յամին երկոտասաներորդի՝ ՚ի տասներորդ ամսեանն, որ օր հինգ
էր ամսոյն գերութեան մերոյ, եկն առ իս ոմն զերծեալ Յերուսաղէմէ, և
ասէ. առաւ քաղաքն: 22. Եւ ձեռն Տ̅ն եղեւ ՚ի վ̅ր իմ յերեկորեայն
մինչև եկեալ էր նա, և եբաց զբերան իմ մինչև եկեալ էր ընդ առաւօտն.
և ՚ի բանալ բերանոյ իմոյ՝ ոչ ևս ամփոփեցաւ անդրէն: 23. Եւ եղև բան
Տ̅ն առ իս՝ և ասէ. 24. որդի մարդոյ՝ բնակիչք աւերականաց երկրին Իսրայէլի
ասեն. մի մարդ էր Աբրահամ, և կալաւ զերկիրն. և արդ մեք բազումք
եմք, և մեզ տուեալ է երկիրն ՚ի ժառանգութիւն. ո՞չ ժառանգեսցեմք
զնա: 25. վ̅ս այսորիկ ասա ցն̅ա: Այսպէս ասէ Ադոնայի Տէր. որովհետև
՚ի վ̅ր արեան ուտէք, և զաչս ձեր ամբառնայք ՚ի կուռս, և արիւն հեղուք,
և կամիք զերկիրն ժառանգել: 26. եղիցի դա ձեզ ՚ի սուր, զի արարէք
պղծութիւնս, իւրաքանչիւր զկին ընկերի իւրոյ պղծէիք. և արդ այդ֊
ժառանգիցէք զերկիրն: 27. Վ̅ս այդորիկ ասա ցնոսա: այսպէս ասէ Տէր
Տէր. կենդանի եմ ես Տէր, եթէ ոչ որ յաւերակսն իցեն՝ սրով անկցին.
և որ ընդ երեսս դաշտին իցեն՝ գազանաց անապատի տացին ՚ի կերակուր. և
որ ընդ պարսպօքն և այրս իցեն՝ մահու կոտորեսցին: 28. և տաց զերկիրն
յաւերակ և յապականութիւն. և կորիցէ հպարտութիւն զօրութեան
նորա. և աւերեսցին լերինք Իսրայէլի, զի մի՛ ոք իցէ որ գնասցէ ընդ նա:
29. Եւ ծանիցեն թէ ես եմ Տէր: և արարից զերկիրն ն̅ր աւերակ.
և աւերեսցի վ̅ս ա̅մ գարշելեաց իւրեանց զոր արարին: 30. Եւ դու որդի
մարդոյ, որդիք ժողովրդեան քոյ զրուցեն, քրթմնջեն զքէն առ պարսպօք
և ՚ի դրունս տաճարին, և ասեն մի ցմի՝ այր ցեղբայր իւր. ժողո֊
վեսցուք եկեսցուք լուիցուք զպատգամսն որ ելին ՚ի Տեառնէ: 31.

digitised by A.R.A.R.@

[illegible]
[illegible]
[illegible]
32. [illegible]
[illegible] 33. [illegible]
[illegible]

Աւետարան Ըստ Մատթէոսի. Գլ. Է. 7.

1. Մի՛ դատէք՝ որ դուքէլ չըդատուիք: Պատճառնոր՝ ինչ Դատաստանով ուրիշին կըդատէք, նոյնով կըդատուիք. և ինչ չափով կըչափէք նոյնով կըչափուի ձեզ: Ի՞նչու քո եղբօր աչքի միջի շիւղն տեսնումես, և քո աչքիդ միջի գերանըն չես տեսնում: Կամ ի՞նչպէս ես ասում եղբօրդ՝ թող քո աչքիցդ ծեղըն հանեմ, և ահա քո աչքիդ միջին գերան կայ: Կեղծաւոր՝ առաջ քո աչքիցդ գերանըն հանիր, և յետոյ մտիկ արա՝ որ քո եղբօր աչքիցն շիւղն հանես: Սուրբ իրն մի՛ տաք շըներին. և ձեր մարգարիտներըն խոզերի առաջն մի՛ քցէք. որ նորանց ոտով կոխ չտան՝ և յետ դառնան ձեզ պատառեն:

7. Խնդրեցէք և կըտրվվի ձեզ. ման եկէք և կըգտնէք. Դուռն թակեցէք և կըբացվի ձեզ: Ինչուոր՝ ամմէն ոք որ կըխնդրէ՝ կըառնէ: ով որ մանկըգայ կըգտնէ, և ով որ կըթակէ կըբացվի նորան համար: Ո՞վէ ձեզանից էն մարդն՝ որ իրան որդին հաց ուզէ՝ մի՛թէ քար կըտայ նորան: Եւ կամ ձուկըն ուզէ՝ մի՛թէ օ՞ձ կըտայ նորան: Ուրեմն եթէ դուք որ չարէք՝ գիտումէք լաւ պարգևներ տալ ձեր որդոցն. ապա ո՞րքան աւելի ձեր Հայրն որ Երկնքումնէ, բարին կըտայ նորանց որ ուզումեն իրանից: Ամմէն ինչոր կամենումէք՝ թէ մարդիքն ձեզ անեն, էնպէսէլ դուք արէք նորանց. ինչուոր՝ հէնց էս է Օրէնքն և Մարգարէքն:

13. Նեղ դռնով ներս մտէք ինչուոր՝ լայնէ դուռն՝ և բացարձակ ճանապարհն՝ որ կորուստնէ տանում. և շատ են նորանք՝ որ նորանով են մտնում: Ո՞րքան նեղէ դուռն՝ և նեղէ ճանապարհն, որ դէպի կեանքն է տանում. և քիչէն նորանք՝ որ գտնումեն նորան:

15. Զգուշ կացէք էն սուտ Մարգարէներիցն՝|| որ ոչխարի հագուստով ձեզ մօտ են գալիս, և ներքևէն յափշտակող գայլեր են: Իրանց պտղիցն նորանց ճանաչէցէք. կըլինի՞ որ փշերիցըն խաղող քաղեն. կամ տատասկիցն թուզ: Էնպէս ամմէն բարի ծառ՝ բարի պտուղ է բերում. և վատ ծառն վատ պըտուղ է բերում: Չի կարող բարի ծառն՝ վատ պտուղ բերել, և ոչէլ վատ ծառն բարի պտուղ բերել: Ամմէն ծառ՝ որ բարի պտուղ չի բերում, կտրվումէ և կրակի մէջէ քըցվում: Ուրեմն իրանց պտղիցն ճանանչեցէք նորանց: || [illegible] 43.

21. Ոչ ամմէն ոք որ ինձ ասումէ՝ Տէր Տէր՝ Երկնքի Արքայութիւնն կըմտնէ. բայց նա որ կատարումէ կամքըն Հօր իմոյ, որ Երկնքումնէ: Շատոնք էն օրն կասեն ինձ. Տէր Տէր. չէ՞ որ մենք քո անունովդ

digitised by A.R.A.R.@

Մարգարէութիւն արինք, և քո անունովդ դևեր հանեցինք, և քո
անունովդ շատ հրաշքներ արինք: Եւ էն ժամանակն կասեմ նորանց՝
թէ բնաւ ձեզ չեմ ճանաչել. ինձանից դէն գնացէք ամէնքդ՝ որ
անօրէնութիւն էիք գործում:
24. Ամէն ովոր իմ էս խօսքերըս լսումէ՝ և նորանց կատարումէ,
նա էն իմաստուն մարդոյն նման կըլինի, որ իրան տունըն քարի վերայ
շինեց: Անձրևներն եկին՝ և գետերն վարարեցին՝ քամիներն փչեցին՝
և էն տունըն բախեցին, և չըկործանվեցաւ. ինչուոր՝ քարի վերայ
հաստատվածէր: Եւ ամէն ով որ էս իմ խօսքերըս լսումէ՝ և նորանց
չէ կատարում, նա էն յիմար մարդոյն նման կըլինի՝ որ իրան տունըն
աւազի վերայ շինեց: Անձրևներն եկին՝ գետերն բարձրացան՝ քամիներ
փչեցին՝ հարին էն տունն, և վէր ընկաւ, և նորա կործանվիլըն շատ
սաստիկէր: Եւ եղև երբոր Յս̄ էս ամենայն բաներն վերջ տուաւ ժողո-
վուրդներն զարմանումէին նորա ուսուցանելոյ վերայ: ինչու որ՝ իշխանու-
թիւն ունօղի պէս էր սովորացնում. և ոչթէ իրանց կարդացողներին պէս:

Հռօմայեցւոց. Գլ. Ե. 5.

1. Ուրեմն մենք՝ որ հաւատքումն Արդարացած ենք, Աստուծոյ հետ
խաղաղութիւն ունենանք՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռումն: 2.
Որ նորանով էլ ընդունեցինք հաւատքով մտնելըն էս շնորհքիս մէջ՝ որ
նորանում կացածենք՝ և Աստուծոյ փառաց յուսումն պարծենումենք: 3.
Եւ ոչթէ մէնակ էս չափ՝ բայց մեր նեղութիւններին համար էլ պար-
ծենումենք. ինչու որ՝ գիտումենք, որ նեղութիւններն համբերու-
թիւն են գործում: 4. Համբերութիւնն՝ հմտութիւն, հմտութիւնն՝
յոյս: 5. Յոյսն իսկի մին ժամանակ չի ամաչացնում. պատճառն որ՝
Աստուծոյ սէրն փռված է մեր սրտերի մէջ Սուրբ Հոգոյ ձեռումն՝ որ
տրվաւ մեզ: 6. ինչու որ՝ երբոր մենք դեռ տկար էինք՝ Քրիստոս
մեզ համար իրան ժամանակումն ամբարիշտներին վերայ մեռաւ: 7.
Ապա դժուար կըլինի՝ որ մին Արդարի համար մինն մեռնի. բայց մին
բարի մարդոյ համար կըլինի, որ մինն համարձակվի մեռնիլ: 8. Աստուած
իրան սէրըն մեզ վերայ յայտնեց՝ որ երբոր մենք դեռ մեղաւոր էինք,
9. Քրիստոս մեզ համար մեռաւ. ապա ո՜րքան աւելի հիմիկ՝ որ Ար-
դարացանք նորա Արիւնումն՝ կըփրկվինք նորանով էն բարկութենիցն: 10.
Պատճառն որ՝ եթէ դեռ որ թշնամի էինք, Աստուծոյ հետ հաշտվե-
ցանք նորա Որդոյ մահումն՝ ո՜րքան աւելի էլ՝ որ հաշտված ենք, կապրինք
նորա կեանքումն: 11. Եւ ոչթէ մէնակ էս չափ՝ բայց Աստուծով էլ
պարծենումենք՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռումն՝ որ հենց նորանով
հիմիկ հաշտութիւնըն ընդունեցինք: 12. Պատճառն որ՝ ինչպէս որ
մին մարդոյ ձեռումն մեղքն մտաւ Աշխարհքս և էն մեղքումն էլ մահն.
և էնպէս մահն ամէն մարդկանց վերայ փռվեցաւ. որովհետև ամէն-
քըն մեղանչեցին: 13. ինչու որ մինչև Օրէնքն, մեղք կար Աշխարհք-
ումն՝ բայց մեղքն չի համարվում որտեղ որ Օրէնք չըկայ: 14. Բայց

digitised by A.R.A.R.@

Մահն թագաւորեց Ադամէն մինչև Մօսէսն նորանց վերայ էլ՝ որ Ադամի մեղքին նման չըմեղանչեցին. որ նա օրինակ է նորա համար՝ որ յետոյ գալու էր ։ 15. Բայց շնորհքն էնպէս չէ ինչպէս որ մեղքն. ինչու որ՝ եթէ մընի մեղքովն շատ մարդիկ մեռան՝ էլ ո՞րքան աւելի Աստուծոյ շնորհքըն և պարգևն մին Յիսուս Քրիստոս մարդոյ շնորհքովն աւելացաւ շատերի վերայ ։ 16. Եւ պարգևն էնպէս չէ՝ ինչպէս էն որ մին մեղաւորից էլաւ. ինչու որ Դատաստանըն էն մին մեղքից Դատապարտութիւն բերաւ. բայց շնորհքն շատ մեղքերից Արդարութիւն է տանում ։ 17. Պատճառն որ՝ եթէ մընի մեղքին համար մահն թագաւորեց էն մընի ձեռովն, ո՞րքան էլ աւելի նորանք, որ շնորհաց լիութիւնըն և Արդարութեան պարգևներըն առնեն, կեանքով կը թագաւորեն՝ էն մին Յիսուսի Քրիստոսի ձեռովն ։ 18. Ապա ուրեմն՝ ինչպէս որ մընի Մեղքովն ամմէն մարդկանց վերայ Դատապարտութիւն եկաւ. հենց էնպէս էլ մընի Արդարութենովն ամմէն մարդկանց վերայ կենաց Արդարութիւն է գալիս ։ 19. ինչու որ ինչպէս որ մին մարդոյ անհնազանդութենովն շատ մեղաւորներ էլան՝ էնպէս էլ մընի հնազանդութենովն շատ Արդարներ կըլինին ։ 20. Բայց Օրէնքըն մէջ ընկաւ՝ որ Մեղքն շատանայ. ինչու որ՝ որտեղ որ աւելի էլաւ Մեղքն՝ էնտեղ էլ աւելի շատացաւ Շնորհքն ։ 21. Պատճառն որ՝ ինչպէս որ Մեղքն թագաւորեց մահի ձեռովն՝ էնպէս էլ Շնորհքըն կըթագաւորէ Արդարութենով յաւիտենական կեանքին մէջ՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովն ։

Գաղատացւոց. Գլ. Ե. 5.

19. Պատճառն որ յայտնի են մարմնոյ գործքերն, որ սորանք են. շնութիւն, պոռնկութիւն, պղծութիւն, գիջութիւն, 20. կռապաշտութիւն, կախարդութիւն, թշնամութիւն, կռիւ, նախանձ, բարկութիւն, հակառակութիւններ, երկպառակութիւններ, բաժանմունքներ, 21. Չար աչքով նայիլն, սպանութիւններ, հարբեցութիւններ, անառակութիւններ և էլ ինչ որ սորանց նման են. էս որ առաջուց ասումեմ ձեզ՝ ինչպէս որ էլ սկիզբն ասումէի՝ թէ նորանք որ էսպէսի բան են գործում՝ ԱՅ Արքայութիւնըն չեն ժառանգիլ ։

22. Բայց Հոգոյ պտուղն էս է. սէր, ուրախութիւն, խաղաղութի, երկայնմտութիւն, 23. Քաղցրութիւն, բարութիւն, հաւատք, հեզութիւն, ժուժկալութիւն. էսպէսիներին Օրէնքն հակառակ չէ ։ 24. Բայց նորանք՝ որ Քին են, իրանց մարմիններըն խաչ հանեցին ախտերին և ցանկութիւններին հետ ։ 25. Թէ որ Հոգով ենք ապրում, էլ Հոգոյն հետ միաբան լինինք ։ 26. Եւ ունայն պարծանքին չըհետևինք՝ իրար դրդելով և իրար վերայ նախանձելով ։

Առաջին Տիմոթէոսի. Գլ. Դ. 4.

1. Բայց Սուրբ Հոգին յայտնի ասումէ, թէ յետին ժամանակներումն մինքանիսն հաւատքից կըհեռանան, և մոլորութեան հոգիներին և

digitised by A.R.A.R.@

դևերի վարդապետութիւններին մտիկ կըտան ։ 2. Նորանց որ կեղծաւորութենով սուտ են խօսում և իրանց խղճմտանքովն դաղված են ։ 3. Որ պսակվելուցն կըարգելեն † և կըհրաժարեն էն կերակուրներիցն, որ Աստուած ստեղծեց՝ որ նորանց վայելեն հաւատացեալներն և նորանք որ ճշմարտութիւնըն ճանաչել են ։ 4. Պատճառն որ Աստուծոյ ամէն ստեղծվածներըն բարի են, և իսկի մին բան անարգելի չէ. մանաւանդ էն որ գոհութենով ընդունվումէ ։ 5: ինչու որ՝ Աստուծոյ խօսքովն և Աղօթքով սրբվումէ ։ 6. Էս խրատըս որ եղբարներին տաս՝ Քրիստոսի Յիսուսի բարի պաշտօնեայ կըլինիս՝ կըմեծանաս և կապրիս հաւատքի խօսքերովն և էն բարի վարդապետութենովն՝ որ նորան հետևեցիր ։

7. Բայց պիղծ խօսքերիցն և պառաւների առասպելներիցն յետ կաց՝ բայց վարժացրու քո անձըդ Աստուածապաշտութենումն ։ 8. ինչու որ մարմնոյ վարժութիւնն քիչ բանի համար օգուտ ունի. բայց Աստուածապաշտութիւնն ամէն բանի համար օգուտ ունի, և հիմիկվան և նոր գալու կենաց աւետիքըն ունի ։ 9. Ճշմարիտ է էս բանս՝ և ամէն կողմանէ արժանի է ընդունվելոյ ։ 10. ինչու որ հենց սրա համար աշխատումենք և նախատինք ենք քաշում՝ որ կենդանի Աստուծոյ վերայ յոյսըն ենք դրել, որ նա փրկիչ է ամէն մարդկանց, և մանաւանդ հաւատացեալներին ։ 11. Էդ բանըդ պատուիրիր և սովորցրու ։

12. Չըլինի որ մինն քո տղայութիւնըդ անարգէ. բայց օրինակ լինիր հաւատացեալներին խօսքերով, վարքով, սիրով, հաւատքով, սրբութենով ։ 13. Մինչև որ գամ՝ միտք դիր կարդացմունքին,

---

† Տխուրեմ ասելս և վկայութեամբ եմ ասում որ Հայոց Եկեղեցիներ նորանց մինն է որ պսակն արգելումն. և է այսպէս որպէս կարճառօտաբար այժմս համար եդի աստ 'ի վայր ։

Երեցունք Աշխարհի՝ հալալ ամուսնութեամբ և ողջախոհութեամբ են ուխտեալ քահանայագործել ։ Իսկ Աբեղայն ուխտեալէ կուսութեամբ քահանայագործել ։ Որոյ յայտ է զի Երէցն Երկրորդ ամուսնութեամբն ոչ կարէ քահանայագործել ։ յետոյ և ապա պոռնկեալն Երէց կամ Աբեղայ ոչ կարէ քահանայագործել. զի ուխտազանցէ ։ տես երես. 167. 'ի Գիրք Հարցմանց Գրիգորի Տաթևացւոյ ։

Զօրէնք կարգ աստիճանի զահընկալութեան ..... Մինչև ցայս վայր կարէ ամուսնանալ ։ Եւ ապա յառաջ ոչ կարէ .... տես երես [illegible]. 'ի Գիրք որ կոչի Մաշտոց Վարդապետի. տպեալ 'ի Թիֆլիզ. [illegible].

Հարց. Վասն էր՞ մինչ 'ի Զօրէնք կարգն երէցին զահընկալութեան կարէն ամուսնանալ, և յայնմ հետէ ոչ ։

Պատ. Ասմանք ասեն .... մինչ յայս ամուսնանալ կարէն. և 'ի հինգէն ելեալ վերագոյն աստուցն՝ ոչ ամուսնանան ։ տես երես. 609. 'ի Գիրք Հարցմանց Գրիգորի Տաթևացւոյ.

Իսկ այժմ 'ի մէջ քրիստոնէից՝ 'ի մեռանել միոյն՝ միւսն կու ածեն. ([illegible] կըպսակվանան) և ոչ է Աստուծոյ հրաման ... Իսկ որ եթէ կինն,

digitised by A.R.A.R.@

յորդորմունքին և վարդապետութեանն: 14. Անհոգ մի՛ լինիր էն շնորհքին համար՝ որ քեզանում է. որ տրվվաւ քեզ Մարգարէութենով Երէցների ձեռնադրութենիցն: 15. Էդ մտածիր դորանում ջանք արա որ քո առաջանալն ամմենին յայտնի լինի: 16. Զգո՛յշ կաց անձիդ և Վարդապետութեանդ. և դորանում մնա՛. էդ թէ որ անես քո անձըդ կապրեցնես և նորանց էլ՝ որ քեզ կըլսեն:

Բանք Ոսկեբերանի՝ Եպիսկոպոսի Կոստանդնուպօլսոյ 'ի Ճառէն նորա
'ի վերայ առ Եփեսացւոց Թղթոյն: Թարգմանութիւն

փափաքիմ, զի որդի քո լիցի հնազանդ քեզ: Ուրեմն նախ քան զամենայն սնուցանիջիր զնա "խրատու և ուսմամբ Տեառն": Մի՛ աւելորդ իմն համարիջիր նմա լսել զՍուրբ Գիրս. քանզի անդ ուսցի նախ, "Պատուեա՛ զհայր քո և զմայր քո". որով պարտի լինել քեզ շահեկան: Մի՛ ասասցես, ընթեռնուլ զՍուրբ Գիրս անկ է միայն Վարդապետաց. մի՛ թէ Վարդապետ ե՞մ առնելոց զնա: Ոչ պիտոյ է նմա լինել Վարդապետ. այլ զնա Քրիստոնեայ: Վասն զի Աշխարհականք պէտս ունին յոյժ տեղեկանալոյ Վարդապետութեանցն Սուրբ Գրոց. և մանաւանդ մանկանց պիտոյ է այս. քանզի պարզմտութիւն յայնմ հասակի յոյժ առաւելու, և ընդունի միշտ զնունդ 'ի զրութեանց անտի պատմուչաց և բանաստեղծից, որոց մտացածին դիւցազունք են գերիք կրից նոցին: Ամէն իրի պէտս ունի մանուկն դարմանոց, զոր մարթ է նմա առնուլ 'ի Սուրբ Գրոց:

Ո՞չ ապաքէն կարի անտեղի են արարքս, զի առաքիցեմք զմանկունս

---

'ի պատմութեան սոսկ գրի 'ինձանէ սիրոյ: Տես երես. 613. 'ի Գիրք Հարցմանց Գրիգորի Տաթևացւոյ:

Այս պատճառ շինողն աղաչանօք խնդրեմք Սրբազնոյն Կաթողիկոսներէն: Սրբազնոյն Պատրիարգներէն: Սրբազնոյն Առաջնորդ և Սրբազնոյն Եպիսկոպոսներէն որ. երբոր Երեցունք և Աբեղայք կըձեռնադրէք. յայնժամ առաջ չըմտամնանալոյ ու էդ պարտականութեան ձեռնադրեցէք նորանց, թողէք և տվէք Աւետարանական պաշտօնութիւն նորանց. որոց որ կըձեռնադրէք և կըձեռնադրվէին. թէ որ կարողէն կառավարօն Հայը. Հայն կառավարօն. Մատթէոս. 19.12. այդ թէ նորանք. որոց ձեռնադրեցէք. չէն կարող կառավարօն Հայն. առաջնոյ պաշտօնութիւն և իմաստութիւն ունենան. երբոր ... կըհամարէն ամուսնանան և բնակակայ Հայն, էլ ուխտաւորաց չէն լինիլ և պատանէջ չէն կուչվիլ: Վասն զի առէ Աւետարանն՝ կին չունողներին և որբեւէրիներին առաւել լաւ է նորանց համար, որ ինչ դէս կենան: այդ թէոր չըժուժկալն՝ թող պսակվին. ինչու որ առելի լաւ է պսակվիլ քանթէ այրել. 1. Կորնթացւոց. 7. 8. 9.

Սահմանութեամբ խօսք առաքելոյ Ոսկեբերան. Ճառ. 12. Քառ ըլցի թէ արգելուցուսք զորս ամուսնանալն կամեցին. այլ զորս չկամին ամուսնանալ, յորդորեմք 'ի կուսութիւն: Տես երես. 471. 'ի Հատոր երրորդ. Մեկնութիւն Թղթոյն Պօղոսի. տպեալ 'ի Վենետիկ. 1812.

digitised by A.R.A.R.@

մեր ՚ի դպրոցս և յուսումն ազգի ազգի արուեստից, և ջանայցեմք ամե-նայն կարեօք յառաջացուցանել զժամանակաւոր բարօրութիւն նոցա, մինչեւ անփոյթ լինիմք սնուցանել զնոսա "խրատու և ուսմամբ Տն:) ՚ի ճառից նորին ՚ի վերայ առ կողոսացիս Թղթոյն : Թարգմանութիւն

Մանկունք ձեր որպէս զխոհակերս և զգ[illegible]լաճառս և զկաքաւիչս սիրողք են տարապայման՝ դիւական երգոց և պարուց: զՍաղմոս ինչ ոչ գի[illegible] ՚ի նոցանէ և ոչ մի. և ուսանիլ զայն Թուի ամօթ և վաստակ ծաղրալի և ընդունայն : Վասն այն սովորութիւնքն ունակութիւնք [illegible]արք այդչափ առ հասարակ. բունացեալ տեսանին ՚ի միջի ձերում. քանզի ըստ հողոյն է և բոյսն : Յաւագոյն. և աղտաղտին երկրի տեսանիցէք լոկ զբոյս անպիտանս. իսկ բոյսքն բարի և արդիւնաւոր գետնոյ զի՞րդ գեղաղէշ են և չքնաղ :

Օրէնք Տեառն անբիծ են և դարձուցանեն զհոգիս. Վկայութիւն Տեառն հաւատարիմ, և իմաստուն առնէ զտղայս: Արդարութիւն Տն ուղիղ է և ուրախ առնէ զսիրտս, Պատուիրանք Տն լոյս են և լոյս տան աչաց: Երկիւղ Տն սուրբ է, և մնայ յաւիտեան: Սաղմոս. 18. 8. 9:

Իւ ուղղեսցէ երիտասարդ զճանապարհս իւր, այլ ՚ի պահել զբանս քո: քան զթշնամիս իմ իմաստուն արարեր զիս ՚ի Պատուիրանս քո, զի յաւիտեան իմ են: քան զծերս իմաստուն եղէ, զի զՊատուիրանս քո քննեցի: ՚ի Պատուիրանաց քոց իմացեալ՝ ատեցի զա՟մ ճանապարհս չարաց զի դու Օրէնսդիր արարեր զիս: Ճրագ է բան քո ոտից իմոց, և լոյս շաւղաց իմոց: Յայտնութիւն բանից քոց լուսաւոր և իմաստուն առնէ զտղայս: Սաղմոս. 118. 9. 98. 100. 104. 105. 130:

Եւ ես յո՞ հայեցայց, եթէ ոչ ՚ի հեզս և ՚ի խոնարհս, և որ դողան ՚ի բա-նից իմոց: Եսայ. 66. 2. և ս տես ինկլիզեար գիրքն որոյ անուննէ Բիկ-ըրստէթս Սքրիպչուր հելպ. Bickersteth's Scripture Help.

Եւ Փիլիպպոս առաջ վազեց՝ և լսումէր որ Եսայեայ Մարգարէու-թիւնն կարդումէր՝ և ասաց. գիտումես՞ էդոր դու կարդումես: Նա էլ ասաց՝ ինչպէս՞ կըկարենամ՝ թէ որ մինն չըառաջնորդէ ինձ. և Փիլիպպոս՚ին աղաչեց՝ որ վերելլի նստի նորա հետ: Գործք. 8.30.31.

Սիրաքայ. և Իմաստութեան Գրքերն. ոչ են Աստուածային Գիրք. թէև նամակք, տանելիք Տեառնէ վերջ երեան :

---

Վասն Ամերիկու՝ Հաւատոյ Տետրակների Ժողովքին Տպեալ
՚ի Տպարանի Մկրտիչ Միսիոնարաց
՚Ի ԿԱԼԿԱԹԱՅ

1st Ed.] September, 1839. [1000 Copies.

CALCUTTA: PRINTED AT THE BAPTIST MISSION PRESS, FOR THE AMERICAN RELIGIOUS TRACT SOCIETY.
*Price, 8 Rs. 12 as. per Hundred.*

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@